Funded
by the European Union
and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Implemented
by the Council of Europe

Արդարադատության մատչելիության խթանում՝ Արևելյան գործընկերության երկրներում խտրականության, ատելության հիմքով հանցագործությունների և ատելություն խոսքի զոհերի համար արտադատական փոխհատուցման մեխանիզմների միջոցով

Հայաստանի՝ ատելության հիմքով հանցագործությունների, ատելության խոսքի և խտրականության վերաբերյալ տվյալների հավաքագրման համակարգը. բարելավման և միասնական մոտեցում որդեգրելու վերաբերյալ առաջարկություններ և ներպետական իրավիճակի վերլուծություն

Սեպտեմբեր 2020

Սույն փաստաթուղթը մշակվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի համաֆինանսավորմամբ իրականացվող՝ «Արդարադատության մատչելիության խթանում Արևելյան գործընկերության երկրներում՝ խտրականության, ատելության հիմքով հանցագործությունների և ատելություն սերմանող խոսքի զոհերի համար արտադատական փոխհատուցման մեխանիզմների միջոցով» ծրագրի համատեքստում՝ Գործընկերություն հանուն լավ կառավարման (ԳԼԿ II) 2019-2021թթ. շրջանակներում: Այստեղ արտահայտված կարծիքները որևէ կերպ չեն արտահայտում կողմերից որևէ մեկի պաշտոնական տեսակետը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

ՄԱՍ 1: ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵԿՈՒՅՑ 6

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ 6

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 8

ՀԱՅԱՍՏԱՆԻ՝ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆ ՍԵՐՄԱՆՈՂ ԽՈՍՔԻ և ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ և ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐԸ 9

ՎԵՑ ՄԿՋԲՈՒՆՔ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ և ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ և ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԱՐ 11

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ և ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁԻՆ ՀԱՄԱՀՈՒՆՉ 16

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ 17

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ՝ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ և ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ 18
ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԿԻՐԱՌՈՒՄ 22
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ 29
ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 30
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ 32

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԴԵՊՔԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ և ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ և ՓՈՐՁԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՈՐՄԵՐԻ և ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 35

ԱՂՅՈՒՍԱԿ 1. 35
ՀԱՅԱՍՏԱՆԻ՝ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄԸ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅՆՈՐԵՆ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ ՍԱՀՄԱՆՄԱՆԸ 35
ԱՂՅՈՒՍԱԿ 2. ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆ ՍԵՐՄԱՆՈՂ ԽՈՍՔ 40
ԱՂՅՈՒՍԱԿ 3. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 43
ԱՂՅՈՒՍԱԿ 4. 47
ԱՅԼ ՀՈԴՎԱԾՆԵՐ, ՈՐՈՆՔ ՆԵՐԱՌՈՒՄ ԵՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ և ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 47

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ՁԵՎԱԹՂԹԵՐԻ ՆԱԽԱԳԻԾ 49

ՀԱՎԵԼՎԱԾ 3. 56

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՊՔԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ և ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՆԵՐԿԱ և ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ և ԴԵՐԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 56

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԱՂԲՅՈՒՐՆԵՐ 63

ՄԱՍ 2: ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 67

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 67

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 69

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԸ 69

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ և ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԱՌԿԱ ՏՎՅԱԼՆԵՐԸ.... 75

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ և ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ և ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՆԵՐԿԱՅԻՍ ՀԱՄԱԿԱՐԳԸ՝ ՆԵՐԱՌՅԱԼ ԴԵՐԵՐԸ և ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 78

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՂՄԻՑ..... 78
ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ ՔՆՆՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ..... 81
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ 82
ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԸ 83
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ 85
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԸ..... 86
ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄՆ ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ-ՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 86

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՇԱՀԱԿԻՐ ԿՈՂՄԵՐԻՆ 88

ՀԱՎԵԼՎԱԾ 1: ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ 90

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՎԵՐԱԲԵՐԵԼԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ..... 92

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՀԱՇՎԱՌՄԱՆ և ՀԵՏԱԽՈՒՋԱԿԱՆ ՔԱՐՏԵՐԸ 94

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԱՌԿԱ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 96

Ներածություն

«Արդարադատության մատչելիության խթանում Արևելյան գործընկերության երկրներում՝ խտրականության, ատելության հիմքով հանցագործությունների և ատելություն խոսքի զոհերի համար արտադատական փոխհատուցման մեխանիզմների միջոցով» ծրագիրը Գործընկերություն հանուն լավ կառավարման ծրագրի մաս է1: Եվրոպական միության ֆինանսավորմամբ և Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող այս ծրագիրը նպատակ ունի ուժեղացնել կառավարումը Արևելյան գործընկերության երկրներում: Իր նպատակների շարքում ծրագիրը առաջնահերթ խնդիր ունի հետազոտել, վերլուծել և բարելավել մասնավորապես Հայաստանում, Մոլդովայի Հանրապետությունում և Ուկրաինայում ատելության հիմքով հանցագործությունների, ատելության խոսքի և խտրականության հետ կապված տվյալների հավաքագրման ազգային համակարգերը: Այս զեկույցը նպատակ ունի ներկայացնելու Հայաստանի ազգային իրավիճակը և դրա բալելավման համար գործնական առաջարկներ անելու, որոնք պետք է քննարկվեն ազգային շահակիր կողմերի հետ:

Սույն փաստաթուղթը կազմված է երկու հիմնական մասերից.

Մաս մեկը առաջարկությունների զեկույցն է, որը հիմնվում է Իրավիճակային վերլուծության (տես՝ մաս երկու), Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի (ՌԱԵՀ) վերաբերելի զեկույցների և այլ աղբյուրների վրա՝ առաջարկելով քայլեր, թե ինչպես համապատասխան մարմինները կարող են բարելավել ատելության հիմքով հանցագործությունների, ատելության խոսքի և խտրականության վերաբերյալ տվյալների հավաքման համակարգը՝ համաձայն միջազգային չափանիշների և լավագույն փորձի:

Մաս երկուսը իրավիճակային վերլուծությունն է, որը ներկայացնում է ներկա (2020 թվականի հուլիսի դրությամբ) ներպետական վիճակի առավել մանրամասն պատկերը՝ հիմնվելով ազգային աղբյուրների և հիմնական շահակիր կողմների հետ հարցազրույցների վրա:

Երկու զեկույցներն առաջ են քաշում փոխլրացնող առաջարկներ, որոնք համադրության մեջ նպատակ ունեն աջակցելու ազգային շահակիր կողմերին՝

- ունենալ ներկա համակարգի թույլ և ուժեղ կողմերի վերաբերյալ ընդհանուր պատկերացումներ,
- համաձայնության գալ ազգային համակարգում բարեփոխումների առաջնահերթ ընդհանուր գործողությունների շուրջ,
- համաձայնության գալ, թե ինչպես Եվրոպայի խորհուրդը ծրագրի շրջանակներում կարող է լավագույնս առաջակցել շահակիր կողմերին

1 Տես՝ https://pjp-eu.coe.int/en/web/pgg2/home

հասնելու իրենց մատնանշած առաջնահերթություններին:

Առաջարկությունների զեկույցում տեղ գտած առաջարկները հիմնված են Իրավիճակային զեկույցի եզրակացությունների և առաջարկությունների վրա: Այս երկու զեկույցների միջև կապը ներկայացված է Առաջարկությունների զեկույցի վերաբերելի հատվածներում:

Մաս 1: Առաջարկությունների զեկույց

Համառոտագիր

Եվրոպայի խորհրդի «Արդարադատության մատչելիության խթանում խտրականության, ատելության հիմքով հանցագործությունների և ատելություն սերմանող խոսքի զոհերի համար» տարածաշրջանային համագործակցության ծրագրի շրջանակներում կազմված և մշակված այս զեկույցը հիմնվում է միջազգային նորմերին և չափանիշներին, փորձին և ուսումնասիրություններին՝ Հայաստանում ատելության հիմքով հանցագործությունների և խտրականության դեպքերի արձանագրման և տվյալների հավաքագրման համակարգի բարելավման վերաբերյալ առաջարկությունների ներկայացման նպատակով:

Հայաստանը գտնվում է ատելության հիմքով հանցագործությունների, ատելություն սերմանող խոսքի և խտրականության դեպքերի արձանագրման, հաղորդման և տվյալների հավաքագրման համակարգի մշակման վաղ փուլում: Ատելության հիմքով հանցագործությունների և ատելություն սերմանող խոսքի մասին երկրի օրենքները որոշ չափով սահմանափակ են իրենց շրջանակներով և Հայաստանում բոլոր խոցելի և մարգինալացված խմբերին պաշտպանելու կարողության առումով: Հայաստանի՝ ատելության հիմքով հանցագործությունների և ատելություն սերմանող խոսքի մասին օրենքներում բացի ռասայից, ազգությունից և կրոնից այլ հիմքեր ներառված չեն[2], և առկա չէ համապարփակ խտրականության արգելքի վերաբերյալ օրենք[3]: Ներպետական որևէ մարմին տարբերակված ձևով տվյալներ չի հավաքագրում այս երեք հիմքերի վերաբերյալ: Ինչպես մի շարք երկրների դեպքում, չկան ճշգրիտ կամ արժանահավատ տվյալներ ատելության հիմքով հանցագործությունների հաղորդման, քննության կամ դատապարտման թվի վերաբերյալ: Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարի վերջին զեկույցում նշվել է, որ «Հոմոֆոբիան դեռևս տարածված երևույթ է հայ հասարակության շրջանում»: Նա մտահոգություն է հայտնել հակա-ՍԿԳԻ (սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության) հիմքով ատելության հողի վրա կատարվող հանցագործությունների, ատելություն սերմանող խոսքի և

---

2 Ինչպես բացատրվում է իրավիճակային վերլուծության մեջ, այս զեկույցի մաս երկուսում՝ «ներկայիս նախագծով առաջարկվում է գաղափարախոսությունը, էթնիկական պատկանելությունը, ազգությունը, ռասայական և կրոնական ատելությունը, անհանդուրժողականությունը և թշնամանքը, այդ թվում՝ այնպիսի լայն հիմքեր, ինչպես՝ *«ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի կամ կրոնական մոլեռանդության շարժառիթները այլ սոցիալական խմբի նկատմամբ»:* Կարելի է ենթադրել, որ «այլ սոցիալական խումբ» լայն սահմանումը պետք է ի թիվս այլնի ներառի նաև սեռական և կրոնական փոքրամասնությունների խմբերը, քանի որ ՌԱԵՀ-ն առաջարկել է բարեփոխել քրեական օրենսգիրքն այնպես, որ արգելված հիմքերի ցանկում ներառվեն սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքերը»:

3 Տես՝ իրավիճակային վերլուծությունը՝խտրականության վերաբերյալ առաջարկվող օրենսդրական փոփոխությունների մասով

խտրականության ճանաչման օրենսդրության բացակայության վերաբերյալ 4 : Հնարավորություն կա էապես բարելավել Հայաստանի մոտեցումը ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ օրենսդրության փոփոխության շուրջ այն առաջարկությունների միջոցով, որոնք ՀՀ քրեական օրենսգրքի և քրեական դատավարության օրենսգրքի նախագծերի մաս են կազմում և վերջերս ուղարկվել են ՀՀ Ազգային ժողով:

Սույն զեկույցում ներկայացվում են առաջարկություններ, որոնք ուղղված են ծրագրում ներառված առանցքային ոլորտներում արձանագրման և մշտադիտարկման համար պատասխանատու հիմնական հաստատություններին: Նախ առաջարկվում է սկզբունքների շրջանակ, որին պետք է ուղղված լինեն Հայաստանի ջանքերը: Դրանք ընդգծում են, որ դեպքերի արձանագրման և տվյալների հավաքագրման ցանկացած համակարգի ուշադրության կենտրոնում պետք է լինի զոհը, այն պետք է լինի թափանցիկ, ներառական, համապարփակ և միջազգային նորմերին ու չափանիշներին համահունչ: Երկրորդը, Հայաստանի գործող համապատասխան օրենսդրությունը կազմված է ըստ «ատելության հիմքով հանցագործությունների», «ատելություն սերմանող խոսքի» և «խտրականության» հաստատված միջազգային հասկացությունների (այդ թվում՝ ՌԱԵՀ-ից, ԵԱՀԿ-ԺՀՄԻԳ-ից, Հիմնարար իրավունքների գործակալությունից (ՀԻԳ), Եվրոպական հանձնաժողովից և այլն), որպեսզի համակարգի տրամադրած տվյալները համապատասխանեն միջազգային նորմերին և չափանիշներին:

Մինչ տարածաշրջանային ծրագիրը կենտրոնացած է ատելության խոսքի, խտրականության և ատելության հիմքով հանցագործությունների վրա, մեր հետազոտությունը, վերլուծությունը և խորհրդատվությունը մատնանշել են ատելության հիմքով հանցագործությունների արձանագրման և դրանց վերաբերյալ տարբերակված տվյալների արդյունավետ հավաքման ավելի նեղ շրջանակի վրա կենտրոնանալու անհրաժեշտությունը: Զեկույցի հիմնական նպատակն է տրամադրել գործնական և կիրառելի առաջարկություններ, որոնց հիմք կհանդիսանան աշխատանքի հետագա փուլերի համար. Ուղեցույցների մշակում և վերապատրաստումներ, հատկապես՝ ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ:

Առաջարկվում է քայլ առ քայլ ուղեցույց և մշտադիտարկման միասնական աղյուսակ՝ առանցքային հաստատությունները միմյանց կապելու և դրանց տվյալներն ինտեգրելու համար: Առաջարկությունների այս խմբի համար հիմք է ծառայում մշտադիտարկման նպատակով ատելության հիմքով հանցագործությունների ընդհանուր սահմանման ընդունումը՝ հիմնվելով ՌԱԵՀ Ընդհանուր քաղաքականության թիվ 11 հանձնարարականի՝ ատելության միջադեպերի ընկալման վրա հիմնված սահմանմանը: Կոնկրետ առաջարկություններ են ներկայացվում Հայաստանի օրենսդրության մեջ առկա պաշտպանվող հականիշների լայն բազմազանությունը մշտադիտարկելու գործնական ձևերի վերաբերյալ՝ միաժամանակ խուսափելով ոստիկանության և այլ

4 Եվրոպայի խորհուրդ (2019թ.):

գերատեսչությունների համար մեծ և անհաղթահարելի բեռից։
Զեկույցը հիմնականում նախատեսված է ոստիկանության, դատախազության, դատարանների և համապատասխան նախարարությունների համար, սակայն այս ոլորտներում հաջողության հասնելու համար անհրաժեշտ է սերտորեն համագործակցել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և մասնավորապես նրանց հետ, ովքեր ուղղակի աջակցություն են տրամադրում զոհերին և համայնքներին։ Սույն զեկույցի նպատակն է առավելապես օգտակար լինել ծրագրի հետագա փուլերում, մասնավորապես՝ հիմնական հաստատություններում ատելության հիմքով հանցագործությունների, ատելություն սերմանող խոսքի և խտրականության դեպքերի արձանագրման և տվյալների հավաքագրման ուղենիշների և վերապատրաստման մշակման ընթացքում։

Մեթոդաբանություն

Սույն զեկույցը հիմնված է հետևյալ փաստաթղթերի մանրամասն ընթերցանության վրա.

- Իրավիճակային վերլուծություն, որն այս զեկույցի մաս 2-ն է,
- Նշումներ 2019 թվականի հուլիսի 3-ին Երևանում այս ծրագրի շրջանակներում կայացած՝ «Խտրականության, ատելություն սերմանող խոսքի, ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ տարանջատ տվյալների հավաքագրման գնահատման հանդիպումից»
- Ազգային ելակետային հետազոտություն, որը մշակվել է այս ծրագրի շրջանակներում
- Հայաստանի վերաբերյալ ՌԱԵՀ համապատասխան զեկույցները

Սույն զեկույցում ներառված են նաև Եվրոպայի խորհրդի գործընկերների դիտարկումները, ազգային աշխատանքային խմբի հանդիպման ընթացքում ստացված արձագանքները, որին մասնակցել են առանցքային շահակիր կողմերը 2020 թվականի փետրվարի 6-ին Երևանում։

Հայաստանի՝ ատելության հիմքով հանցագործությունների, ատելություն սերմանող խոսքի և խտրականության դեպքերի արձանագրման և տվյալների հավաքագրման համակարգի թերությունների և հնարավորությունների ամփոփ նկարագիրը

Ներկայում Հայաստանի համակարգում հավաքագրվում են սահմանափակ, անհամեմատելի, չտարանջատված տվյալներ՝ օգտագործելով տարբեր մեթոդներ և հասկացություններ: Ատելության հիմքով հանցագործությունների դեպքում դա նշանակում է, որ դժվար է համակարգում հետևել դեպքերին, և տուժողների կարիքների մասին կարևոր տեղեկությունները և ապացույցները, որոնք էական են ատելության հիմքով հանցագործություններին վերաբերող օրենքների և այլ օրենքների կիրառման համար, բաց են թողնվում կամ «մնում են ճեղքերի արանքում»[5]: Ներկայում Հայաստանում հնարավոր չէ լիարժեք և համապարփակ ձևով արձանագրել ատելության հիմքով հանցագործությունները: Հավանաբար, առավել հաճախ բաց են թողնվում այն հանցագործությունները, որոնք հատուկ սահմանված չեն Քրեական օրենսգրքում, բայց որոնք կարող են դասվել պատժի նշանակման 63-րդ հոդվածի ներքո: Նաև շատ սահմանափակ տեղեկություններ կան ատելության հիմքով հանցագործությունների և այդ խնդրին արձագանքելու կառավարության ջանքերի վերաբերյալ հանրային տիրույթում՝ հայ հասարակությանն անտեղյակ թողնելով ատելության հողի վրա կատարվող հանցագործությունների խնդրի և կառավարության՝ դրանց լուծմանն ուղղված ծրագրերին մասին:

Ինչ վերաբերում է ատելություն սերմանող խոսքին և խտրականությանը, ապա արձանագրման և մշտադիտարկման ներկա շրջանակները նույնպես կցկտուր են, և պարզ չէ, թե որ մարմինները կամ գերատեսչություններն են պատասխանատու կամ պետք է պատասխանատու լինեն այդ երևույթի բացահայտման, արձանագրման և դրան արձագանքելու համար:Ինչպես բացատրված է համառոտագրում, այս զեկույցը կենտրոնացած է միայն ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ տվյալների տարբերակված արձանագրման և հավաքագրման համակարգը վերանայելու և բարելավելու քայլերի վրա: Այս փաստաթղթի երկրորդ մասում առկա իրավիճակային վերլուծությունը տրամադրում է ատելության խոսքի և խտրականության վերաբերյալ օրենսդրական և վիճակագրական առավել ամբողջական պատկերը:

Կան Հայաստանի ջանքերի մի շարք դրական կողմեր, այդ թվում՝ ծրագրին մասնակցելու հետ կապված՝ Հայաստանի իշխանությունների բաց լինելը և պատրաստակամությունը, քրեական արդարադատության համակարգում ատելության հիմքով հանցագործությունների արձանագրման և տարանջատման ոլորտում առկա մեխանիզմներն ու շրջանակները, որոնց վրա կարելի է հիմնվել,

[5] Տե՛ս իրավիճակային փորձագիտական վերլուծությունը և սույն փաստաթղթի հավելված 2-ը՝ Հայաստանի՝ ատելության հիմքով հանցագործությունների արձանագրման և տվյալների հավաքագրման համակարգում առկա թերությունների վերաբերյալ:

Քրեական օրենսգրքում դրական փոփոխություններ կատարելու երկրի ջանքերը, ինչպես նաև խնդրի վերաբերյալ ազգային զգալի փորձագիտությունը, հատկապես՝ քաղաքացիական հասարակության մասնագիտացված կազմակերպություններում:

Որպես կարևոր ենթատեքստ՝ ՌԱԵՀ-ը 2016 թվականի իր մշտադիտարկման վերջին զեկույցում կատարել է մի շարք առաջարկություններ: Դրանք ներառում են՝

- *Հայաստանի քրեական իրավունքն ընդհանուր առմամբ համապատասխանեցնել ռասիզմի և ռասայական խտրականության դեմ պետական մակարդակով պայքարի վերաբերյալ ՌԱԵՀ Ընդհանուր քաղաքականության թիվ 7 հանձնարարականի պահանջներին.*
- *Ընդունել ռասայական խտրականության դեմ քաղաքացիական և վարչական համապարփակ օրենսդրություն.*
- *Սահմանել հատուկ կանոն խտրականության գործերով ապացուցման բեռը կիսելու վերաբերյալ.*
- *Քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածում արգելված հիմքերի ցանկին ավելացնել սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը, նաև Օրենսգրքում ավելացնել լրացուցիչ դրույթ, որն ուղղակիորեն կամրագրի, որ հոմոֆոբ/տրանսֆոբ շարժառիթը ծանրացուցիչ հանգամանք է բոլոր սովորական հանցագործությունների դեպքում.*
- *Օրենք ընդունել՝ միջնակարգ դպրոցի էթնիկական փոքրամասնություններ ներկայացնող շրջանավարտների համար բարձրագույն կրթության մատչելիությունը դյուրացնելու նպատակով.*
- *Որոշակի խտրականության շարժառիթների վերաբերյալ ապացույցները պետք է հայտնաբերվեն և արձանագրվեն որքան հնարավոր է շուտ՝ ավելացնելով հավանականությունը, որ քրեական իրավունքը արդյունավետ կերպով կկիրառվի ռասիստական բռնության գործերով 6:*

Սույն զեկույցը՝

- վերաձևակերպում է Հայաստանի ներկա մոտեցումը՝ լինել ավելի համահունչ միջազգային նորմերին և չափանիշներին՝ ատելության հիմքով հանցագործությունների, ատելություն սերմանող խոսքի և խտրականության հասկացությունների հետ կապված,
- հիմնվում է լավագույն փորձին՝ առաջարկելով գործնական քայլեր, թե ինչպես բարելավել գոյություն ունեցող համակարգը և նկատի առնել արձանագրման նոր եղանակներ
- առաջարկում է ստեղծել միջգերատեսչական աշխատանքային խումբ՝ իրականացումը վերահսկելու նպատակով:

6 'ՌԱԵՀ զեկույցը Հայաստանի վերաբերյալ, հինգերորդ մշտադիտարկման շրջափուլ, պար. 64, տես՝ https://rm.coe.int/fourth-report-on-armenia/16808b5539

Վեց սկզբունք ատելության հիմքով հանցագործությունների, ատելության խոսքի և խտրականության դեպքերի արձանագրման և տվյալների հավաքագրման համակարգերի համար

Չնայած այս զեկույցը սևեռվում է ատելության հիմքով հանցագործությունների վրա, որոշ կարևոր սկզբունքներ վերաբերում են նաև ատելության հիմքով հանցագործությունների, ատելության խոսքի և խտրականության վերաբերյալ տվյալների հավաքագրման և արձանագրման համակարգի ստեղծման կամ բարելավմանն ուղղված բոլոր քայլերին:
Այս թեման ուսումնասիրելիս կարելի է հեշտությամբ մոլորվել տեխնիկական մանրամասների մեջ: Ուստի առաջարկվում է, որ շահակիր կողմերը որդեգրեն հետևյալ ուղղորդող սկզբունքները:

Արձանագրման և տվյալների հավաքագրման համակարգերը պետք է՝

1. *ուշադրության կենտրոնում պահեն իրավախախտման զոհին,*
2. *ցուցաբերեն համապարփակ մոտեցում՝ ընկալելու և անդրադառնալով ատելության հիմքով հանցագործությունների, ատելություն սերմանող խոսքի և խտրականության հարցերին,*
3. *ապահովեն միջազգային համապատասխանությունը միջազգային նորմերին և չափանիշներին,*
4. *լինեն թափանցիկ. տրամադրեն ճշգրիտ տվյալներ, որոնք հասարակության համար դյուրըմբռնելի են և դյուրամատչելի*
5. *արտացոլեն տարածվածության և համատեքստի ընկալումը. իրականացվեն երևույթի լատենտայնությունը հասկանալու հանձնառության համատեքստում*
6. *իրականացվեն քրեական արդարադատության մարմինների, համապատասխան նախարարությունների, քաղաքացիական հասարակության համապատասխան կազմակերպությունների և համապատասխան փորձառություն ունեցող հետազոտողների միջև փոխգործակցության ուժեղ հանձնառության համատեքստում*

Նկար 1. Զոհին և արդյունքին սևեռված՝ արձանագրման և տվյալների հավաքագրման մոտեցում[7]



Սկզբունք 1, զոհն ուշադրության կենտրոնում. Ինչպես ներկայացված է նկար 1-ում, ատելության հիմքով հանցագործությունների, խտրականության և ատելություն սերմանող խոսքի դեպքերի արձանագրման և տվյալների հավաքագրման համակարգերը պետք է նպաստեն հետևյալ արդյունքներին՝ զոհերի և տուժած համայնքների համար.

- *Կրկնակի զոհականացման տեղի ունենալու ռիսկի և կրկնվելու լրջության և (կամ) սոցիալական ճգնաժամի սրման նվազեցում*
- *աջակցության մեծացում*
- *արդարադատության մատչելիության և համապատասխան օրենքների արդյունավետ կիրառության աճ*
- *որոշում կայացնողների և քաղաքականություն մշակողների համար ճշգրիտ և առկա տվյալների աճ[8]:*

Այս սկզբունքի ներքո պետք է լինի օպերատիվ ոստիկանության և դատախազության անձնակազմի վրա ավելորդ բյուրոկրատական բեռ դնելուց խուսափելու հանձնառությունը: Հնարավորության դեպքում արձանագրման նշված համակարգերը պետք է ինտեգրվեն գործող համակարգերում:

Սկզբունք 2, համապարփակ մոտեցում. Արձանագրման և տվյալների

7 Նկարը վերցված է «Առերեսվելով բոլոր փաստերին» նախագծից (Perry, 2019):

8 Perry, J. (պատրաստվում է տպագրության), «Առերեսվելով բոլոր փաստերին» եվրոպական զեկույց:

հավաքագրման արդյունավետ համակարգերը ատելության հիմքով հանցագործություններին, ատելություն սերմանող խոսքին և խտրականությանն անդրադարձող համապարփակ մոտեցման միայն մի բաղադրիչն են[9]: Բարձրորակ վերապատրաստումը, քննության և դատական կարգով հետապնդման ուղենիշները և ամեն ինչ ներառող իրավական շրջանակը այս գլուխկոտրուկի հավասարապես կարևոր բաղադրիչներն են:

Սկզբունք 3, միջազգային համապատասխանեցում. Ատելության հիմքով հանցագործությունների, ատելություն սերմանող խոսքի և խտրականության դեպքերի արձանագրմանը և տվյալների հավաքագրմանը, վերապատրաստմանը, քաղաքականությանը և օրենսդրությանը սատարում է նորմերի և չափանիշների հարաբերականորեն համապարփակ միջազգային շրջանակը: Ներպետական օրենսդրությունը, քաղաքականությունը և վերապատրաստումը պետք է հնարավորինս համապատասխանեցվեն այս շրջանակին [10] : Մասնավորապես, ատելության հիմքով հանցագործությունների, ատելություն սերմանող խոսքի և խտրականության հասկացությունները պետք է հստակ սահմանազատվեն, և տվյալները պետք է հավաքվեն և հաղորդվեն առանձին: Գործնական մակարդակում դա երաշխավորում է, որ ստացվող տվյալներն ավելի դյուրությամբ կտրամադրվեն միջկառավարական կազմակերպությունների կողմից կանոնավոր հարցումների դեպքում (մասնավորապես՝ տե՛ս ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ ԺՀՄԻԳ-ի տարեկան հաշվետվությունների պահանջները), և որ օրենքի ճիշտ կիրառումն արդյունավետ կերպով գործի կդրվի քննչական և դատական հետապնդման մարմինների մոտեցումներում[11]:

Սկզբունք 4, թափանցիկություն. Ներկայումս ոստիկանության տեղեկատվական կենտրոնը, որը հանցագործությունների վերաբերյալ տվյալների ոլորտում առաջնորդ դեր ունեցող գործակալություն է, հանցագործությունների մասին

---

[9] Տե՛ս «Ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ տվյալների հավաքագրման և մշտադիտարկման մեխանիզմներ. Գործնական ուղեցույց» (2014թ.), ԵԱՀԿ, https://www.osce.org/odihr/datacollectionguide?download=true

[10] Հիմնական նորմերի և չափանիշների վերաբերյալ հղումների համար տե՛ս գրականության ցանկը, տե՛ս նաև ատելության հիմքով հանցագործությունների հաղորդման և արձանագրման նորմատիվային շրջանակի մշակման վերաբերյալ այս ինտերակտիվ ժամանակացույցը՝ https://www.facingfacts.eu

[11] Տե՛ս օրինակ՝ «Ատելության հիմքով հանցագործությունների մասին օրենքներ. Գործնական ուղեցույց», ԺՀՄԻԳ (2009թ.), որը հիմնված է ԵԱՀԿ Նախարարական խորհրդի 9/09 որոշմանը՝ ատելության հիմքով հանցագործությունները սահմանելու որպես՝ «քրեական հանցագործություններ, որոնք կատարվել են կանխակալության շարժառիթով» (ի տարբերություն ատելություն սերմանող խոսքի և խտրականության), և Եվրոպական հանձնաժողովի վերջին Ուղեցույցը (2018թ.), որով սահմանվում են ատելության հիմքով հանցագործությունների և ատելություն սերմանող խոսքի առանձին հասկացությունները, և առաջարկվում է դրանք ընդունել ներպետական մակարդակում՝ համապատասխան օրենքների և ընթացակարգերի արդյունավետ կիրառմանն օժանդակելու նպատակով:

տվյալներ չի հրապարակում: Ատելության հիմքով հանցագործությունների մասին տվյալները և ատելության հիմքով հանցագործությունների վիճակագրությունը փոխանցվում են հանրությանը միայն Ազգային ժողովին Գլխավոր դատախազի ներկայացրած տարեկան հաշվետվությունների միջոցով: Այս տվյալները չեն տարանջատվում այլ հանցագործությունների վիճակագրությունից: Կարևոր է, որպեսզի ատելության հիմքով հանցագործությունների քննության, քրեական հետապնդման և դատապարտման վերաբերյալ տվյալները, ինչպես նաև տեղեկություններն այն մասին, թե ինչ քայլեր են ձեռնարկում իշխանությունները հարցի լուծման ուղղությամբ, այդ թվում՝ վերապատրաստման և ուղենիշների մշակում, լինեն դյուրամատչելի և հասանելի[12]:

Սկզբունք 5, տարածվածության և համատեքստի ընկալումը. Ապացույցները ցույց են տալիս, որ ատելության հիմքով հանցագործությունների և խտրականության միջադեպերի ու ատելություն սերմանող խոսքի դեպքերի շատ քիչ տոկոսն է հաղորդվում պետական մարմիններին և արձանագրվում նրանց կողմից [13] : Ատելության հիմքով հանցագործությունների և խտրականության լատենտային հանցավորությունը կամ իրական տարածվածությունը հասկանալու համար կարող են ձեռնարկվել տարբեր գործողություններ, այդ թվում՝ ազգային հարցումների կազմակերպում և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից հավաքագրված տվյալների ուսումնասիրություն[14]: Բացի այդ, *Իդենթոբան*

[12] Տե՛ս ՀԻԳ կարծիքը, «Ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ տարանջատ տվյալների հավաքագրում և հրապարակում», որում նշված է, որ «Ինչպես բազմիցս ընդգծվել է ՀԻԳ-ի զեկույցներում, ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ մանրամասն և առնվազն ըստ կանխակալության շարժառիթի և հանցագործության տեսակի տարանջատ տվյալների հավաքագրումն անհրաժեշտ է այդ երևույթի նկատմամբ ոստիկանության հակազդման արդյունավետությունը մշտադիտարկելու և արդյունավետ ու թիրախավորված քաղաքականություն մշակելու համար: Այս տվյալների հրապարակումը և տարածումը և դրանց դյուրամատչելիությունը նպաստավոր են՝ զոհերին և համայնքների հավաստիացնելու, որ ատելության հիմքով հանցագործությունների նկատմամբ դրսևորվում է լուրջ մոտեցում, և հասարակությանն ուղերձ հղելու, որ ատելության հիմքով հանցագործությունները մշտադիտարկվում են, քննվում և չեն հանդուրժվում», ՀԻԳ (2018թ.), էջ 11, տե՛ս նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի «Կարևոր դիտարկում Հայաստանի համար» 2018 թվականի համար՝ «ԺՀՄԻԳ-ի դիտարկմամբ՝ Հայաստանի իրավապահ մարմինները չեն արձանագրել ատելության հիմքով հանցագործությունների կանխակալության շարժառիթներ»: Բացի այդ, որևէ տվյալ չէր ներառվել ԵԱՀԿ- ԺՀՄԻԳ-ի՝ ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ 2018 թվականի զեկույցում: http://hatecrime.osce.org/armenia?year=2018: Տե՛ս նաև ԺՀՄԻԳ-ի հրապարակումը, «Ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ տվյալների հավաքագրման և մշտադիտարկման մեխանիզմներ. Գործնական ուղեցույց» (2014թ.), էջ 43: Տե՛ս նաև ՌԱԵՀ համապատասան ԸՔՀ-ները և Նախարարական հանձնառությունները:

[13] Տե՛ս ՀԻԳ (2018թ.):

[14] Տե՛ս զոհականացման մասին հարցումները, այդ թվում՝ EU-MIDIS I-ը և EU-MIDIS II-ը: Տե՛ս նաև ՀԻԳ կարծիքը, «Հանցագործության զոհականացման հարցումների մշակում և իրականացում, որոնցում ներառված են ատելության հիմքով հանցագործություններին բնորոշ հարցեր», որում ՀԻԳ-ը նշել է, որ «Հանցագործության զոհականացման հարցումների մշակումը և իրականացումը, որոնցում ներառված են ատելության հիմքով հանցագործություններին բնորոշ հարցեր, հնարավորություն կտա իշխանություններին լուսաբանել հանցագործությունների լատենտայնությունը, այսինքն՝ այն հանցագործությունների թիվը, որոնք չեն հաղորդվել ոստիկանությանը, և հասկանալ զոհերի փորձառությունը, միտումները և ի հայտ եկող խնդիրները», էջ 12, ՀԻԳ (2018թ.), տե՛ս նաև ԺՀՄԻԳ հանձնարարականներ 20-24, որոնցում մանրամասն ներկայացված է, թե ինչպես կարելի է իրականացնել զոհականացման վերաբերյալ հարցումներ և ինչ պետք է դրանք ներառեն, «Ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ տվյալների հավաքագրման և մշտադիտարկման մեխանիզմներ. Գործնական ուղեցույց» (2014թ.), էջ 33-39:

ընդդեմ Վրաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ հիմնվելով քաղաքացիական հասարակության ունեցած տվյալներին՝ ոստիկանությունը պետք է տեղյակ լիներ, որ ԼԳԲՏ անդամները հատկապես ենթակա են բռնության վտանգի Հոմոֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրվա տոնակատարության նպատակով նախատեսված միջոցառումների ընթացքում, և ձեռնարկած լիներ պատշաճ քայլեր նրանց պաշտպանելու համար՝ հիմնվելով այդ տեղեկատվության վրա: Անշուշտ, այս վճիռը վերաբերում է Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետություններին:

Սկզբունք 6, համագործակցության հանձնառություն. Միասնական մոտեցման հաջողությունը պայմանավորված է քրեական արդարադատության մարմինների և նախարարությունների միջև և համապատասխան հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության հանձնառությամբ: Միայն ոստիկանության կողմից արդյունավետ արձանագրման համակարգի ապահովումը սահմանափակ հաջողություն կունենա, եթե չլինի կապը դատախազական և դատական մոտեցումների հետ: Նմանապես, չհամագործակցելը քաղաքացիական հասարակության այն կազմակերպությունների հետ, որոնք փորձագետ են ատելության հիմքով հանցագործությունների, ատելություն սերմանող խոսքի և (կամ) խտրականության դեպքերի ոլորտում, սատարում են զոհերի գործնական և իրավական կարիքներին, կհանգեցնի կենսականորեն կարևոր տեղեկություններին չտիրապետելու և զոհերին անհրաժեշտ աջակցություն չտրամադրելու իրավիճակի: Այդպիսի համագործակցությունը հաջողության ավելի մեծ հավանականություն ունի, եթե այն ամրապնդված է միջգերատեսչական արձանագրություններով և փաստաթղթերով, որոնցում հստակ սահմանվում են դերերը և պարտականությունները[15]: Ինչ վերաբերում է ատելություն սերմանող խոսքին, ապա «Պայքար ատելություն սերմանող խոսքի դեմ»[16] ՌԱԵՀ թիվ 15 ԸՔՀ-ում առաջարկվում է, որպեսզի պետական մարմինները «աջակցեն ատելություն սերմանող խոսքի մշտադիտարկմանը քաղաքացիական հասարակության, հավասարության հարցերով զբաղվող մարմինների և մարդու իրավունքների ազգային ինստիտուտների կողմից և խթանեն համագործակցությունը նրանց և հանրային մարմինների միջև այդ առաջադրանքի ստանձնման ոլորտում»:

[15] Տե՛ս ՀԻԳ (2018թ.) քաղաքացիական հասարակության հետ համագործակցելու վերաբերյալ, և ԺՀՄԻԳ (2014թ.) միջգերատեսչական շրջանակներ ստեղծելու վերաբերյալ: Այս համատեքստում «համապատասխան քաղաքացիական հասարակության կազմակերպությունները» ներառում են այն կազմակերպությունները, որոնք ունեն ատելության հիմքով հանցագործությունների, ատելություն սերմանող խոսքի կամ խտրականության դեպքերի առողջ և թափանցիկ արձանագրման և դրանց վերաբերյալ տվյալների հավաքագրման երկարատև փորձ:

[16] https://rm.coe.int/ecri-general-policy-recommendation-no-15-on-combating-hate-speech/16808b5b01

Տվյալների հավաքագրման միասնական համակարգի ապահովում եվրոպական չափանիշներին և լավագույն փորձին համահունչ[17]

Տվյալների հավաքագրման հաջողված միասնական համակարգի ապահովումը կախված է Հայաստանի քրեական արդարադատության, քաղաքացիական և վարչական համակարգերում ատելության հիմքով հանցագործությունների, ատելություն սերմանող խոսքի և խտրականության մասին «ընդհանուր լեզվով» խոսելուց և դրանց հանդեպ միասնական *մոտեցում* դրսևորելուց: Դրան հասնելու համար պետք է ձեռնարկել մի շարք քայլեր:

Ատելության հիմքով հանցագործությունների արձանագրման Հայաստանում գործող շրջանակը և դրա քրեական, վարչական և քաղաքացիական իրավախախտումները լիարժեք կերպով համապատասխանեցված չեն կամ զարգացած չեն «ատելության հիմքով հանցագործություններ», «ատելություն սերմանող խոսք» և «խտրականություն» միջազգային հասկացություններին[18]: 3-րդ առաջարկության («միջազգային համապատասխանեցում») կատարման հետ կապված՝ շահակիր կողմերին աջակցելու նպատակով Հավելված 1-ում Հայաստանում գործող շրջանակը համադրվում է միջազգային հասկացությունների հետ: Այսպիսի մոտեցումը դյուրին կդարձնի տեղեկությունների տրամադրումը միջազգային գործակալություններին և կհստակեցնի ներպետական մակարդակում ատելության հիմքով հանցագործությունների, ատելություն սերմանող խոսքի և խտրականության դեպքերի արձանագրման և մշտադիտարկման միասնական համակարգի աշխատանքում շահակիր կողմերի ունեցած դերը:

Առաջարկություն 1. Ընդունել և զարգացնել Հավելված 1-ում ներկայացված շրջանակը՝ որպես ատելության հիմքով հանցագործությունների, ատելություն սերմանող խոսքի և խտրականության վերաբերյալ դրույթների ազգային «քարտեզ»: Ուստի զեկույցը սևեռված է ատելության հիմքով հանցագործությունների միջազգայնորեն համապատասխանեցված հասկացություններին հասնելուն, և այն քայլերի վրա, որոնք անհրաժեշտ են այս նոր հայեցակարգը օպտիմալացնելու համար, և համակարգի տարբեր օղակների միջև արդյունավետ համագործակցության համար: Առաջարկվում է ատելության հիմքով հանցագործությունների միասնական սահմանման ընդունումն համապատասխան մարմինների կողմից, որոնք պատասխանատվություն են կրում այդ երևույթների արձանագրման և դրանց վերաբերյալ տվյալների հավաքագրման համար:

[17] Միջազգային նորմերի և չափանիշների համատեքստում Հայաստանում գործող օրենսդրության և արձանագրման փորձի համապարփակ ուսումնասիրության համար առաջարկվում է ընթերցել հավելված 1-ը:

[18] Սույն զեկույցում ներառված են Իրավիճակային վերլուծության մեջ տեղ գտած առաջարկությունները, որոնց վրա հիմնված է զեկույցը:

Այնուհետև հաջորդում են գործնական առաջարկություններ համակարգման տեսակի, ձևի և ժամկետների վերաբերյալ:

Ատելության հիմքով հանցագործություններ

Ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ Հայաստանի գործող օրենսդրական դաշտը կազմված է ընդհանուր և պատիժը խստացնող հատուկ դրույթներից19: Ատելության հիմքով հանցագործությունների մասին Հայաստանի գործող օրենքներում առկա են մի շարք խնդրահարույց կետեր.

- *Պաշտպանվող հատկանիշները սահմանափակ են և բացառում են հաշմանդամությունը, սեռը, սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը20:*
- *«Կրոնական մոլեռանդության» նշանակությունը ատելության հիմքով հանցագործությունների մասին դրույթի կամ խտրականության շարժառիթի համատեքստում հստակ չէ, ուստի օգտակար կլինի տրամադրել լրացուցիչ բացատրություն կամ ուղեցույց21:*

Հայաստանի տվյալների հավաքագրման մեթոդաբանության ուժեղ և թույլ կողմերը մանրամասնված են ստորև: Այս բաժնում անդրադարձ է կատարվում քրեական արդարադատության համակարգում ատելության հիմքով հանցագործությունների համընդհանուր սահմանման ընդունման և կիրառման գաղափարին և նշանակությանը:

---

19 Տե՛ս ԺՀՄԻԳ (2009թ.) և Հավելված 1:

20 Օրինակ՝ իր վերջին զեկույցում Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարը մտահոգություն է հայտնել այն մասին, որ չկա օրենսդրություն, որով ՍԿԳԻ շարժառիթով ատելությունը ճանաչվի որպես ծանրացուցիչ հանգամանք այլ հանցագործությունների համատեքստում, Եվրոպայի խորհուրդ (2019թ.):

21 Համաձայն Իրավիճակային վերլուծության, նոր քրեական օրենսգրքի նախագիծը առաջարկում է գաղափարական հայացքները, էթնիկ, ազգային ծագումը, ռասայական և կրոնական ատելությունը, անհանդուրժողականությունը և ատելությունը, ներառյալ այնպիսի լայն հիմքեր, ինչպիսիք են «այլ սոցիալական խմբի նկատմամբ ատելության, անհանդուրժողականության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթները»: Այս կառուցակարգը նաև ենթադրում է որոշակի խառնաշփոթ այն կանխակալության շեմի վերաբերյալ, որը կպահանջվի ապացուցելու համար Հայաստանում ատելության հանցագործության կանխակալության տարրը:

Ատելության հիմքով հանցագործությունների միասնական սահմանման ընդունումը՝ տվյալների հավաքման և մշտադիտարկման նպատակով

Ատելության հիմքով հանցագործությունների միասնական սահմանման ընդունումը մշտադիտարկման նպատակով ամենակարևոր քայլերից մեկն է, որը կարելի է ձեռնարկել արժանահավատ տվյալներ ստանալու, և որ ավելի կարևոր է, զոհերի համար արդարադատության մատչելիություն, ապահովություն և անվտանգություն երաշխավորելու նպատակով: Ոստիկանության, դատախազական ծառայության և դատարանների միասնական մոտեցումն ապահովում է, որ կենսական կարևոր ապացույցը, թե տվյալ հանցագործությունը կարող է լինել ատելության հիմքով կատարված հանցագործություն, և զոհերի ապահովության ու աջակցության կարիքների վերաբերյալ տեղեկությունները մի մարմնից փոխանցվեն մյուսին, ինչը թույլ կտա առավել բարձրորակ և մանրակրկիտ ապացույցները ներկայացնել դատարանին քննության համար:

Ազգային շահակիր կողմերից ստացված արձագանքից հետո, առաջարկությունները փոփոխվել են՝ առաջնահերթություն տալով իրավապահ մարմինների կողմից ընդհանուր սահմանման ընդունմանը: Որպես հաջորդ քայլ և հաշվի առնելով, որ քրեական օրենսգրքի և քրեական դատավարության օրենսգրքերի նախագծերը ներկայումս քննարկվում են Ազգային ժողովի կողմից(2020 թվականի հուլիսի տվյալներով), կարևոր է միասնական սահմանում և մոտեցում հետապնդել ինչպես իրավապահ մարմինների կողմից, այնպես էլ դատախազության և դատարանների:

Անշուշտ, հարկ է հիշել, որ արդյունավետ վերապատրաստումը, առաջնորդությունը և քաղաքացիական հասարակության համապատասխան կազմակերպությունների հետ համագործակցությունը կարևոր են՝ երաշխավորելու, որ այդ կենսական տեղեկություններն իրոք հաշվի առնվեն:

Առաջարկություն 2. Ընդունել ատելության հիմքով հանցագործությունների ընդհանուր սահմանում . Քրեական օրենսգրքում ապագայում սպասվելիք փոփոխությունների լույսի ներքո առաջարկվում է, որ ներառական, բայցև հատուկ մոտեցում ցուցաբերվի պաշտպանվող հատկանիշների ներառման հարցին, և որ հստակ, սակայն ցածր շեմ կիրառվի «կանխակալություն» (bias) սահմանման համար: Դա «լայն ցանցին» հնարավորություն կտա որսալ ատելության հիմքով հնարավոր իրավախախտումները և խթանել հստակ ու հետևողական տվյալների ստեղծումը համապատասխան մարմիններում և հաստատություններում:

«Ատելության հիմքով հանցագործությունների» հետևյալ միասնական սահմանումը առաջարկվում է, որ ընդունվի Հայաստանի քրեական արդարադատության մարմինների՝ ներառյալ, բայց չսահմանափակվելով ոստիկանության, դատախազության, դատարանների, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի և համապատասխան նախարարությունների կողմից՝

> *«ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված ցանկացած հանցագործություն, որը կատարվել է փաստացի կամ ընկալելի ռասայի, կրոնի, սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության, սեռի, գաղափարախոսության,*

հաշմանդամության կամ այլ սոցիալական խմբի նկատմամբ լրիվ կամ մասնակի կանխակալության (bias) պատճառով[22]»:

Այս սահմանումը և գերատեսչություններին հատուկ սահմանումները, որոնք ներկայացված են ստորև, ներառում են լրիվ կամ մասամբ խտրականության շարժառիթով (bias motives) դրդված հանցագործությունները և որոնք հիմնված են պաշտպանված խմբին իրական կամ ընկալելի անդամության վրա: Սա համապատասխանում է միջազգային չափանիշներին և ՌԱԵՀ վերջին հանձնարարականներին[23] :

Հաջորդ քայլը այս սահմանումը ոստիկանության, դատախազության և դատարանների աշխատանքում գործնական դարձնելն է: Առաջարկվում է առաջնահերթ կենտրոնանալ ոստիկանության, Քննչական կոմիտեի և Հատուկ քննչական ծառայության վրա: Մինչ կիրառումն առաջ է գնում, և նոր քրեական օրենսգրքի ընդունումից հետո՝ դատախազությունը և դատարանները պետք է քննարկեն համապատասխանաբար առաջարկություն 4-ի և 5-ի կատարումը: Ստորև առաջարկվում են մշտադիտարկման հատուկ սահմանումներ[24]:

---

[22] Առաջարկվող այս սահմանումը հիմնված է Հայաստանի նոր Քրեական օրենսգրքի թարգմանության և իրավիճակային վերլուծության մեկնաբանության վրա: Թեև առաջարկվող նոր քրեական օրենսգրքով հստակ չեն նշվում սեռական կողմնորոշումը, գենդերային ինքնությունը, հաշմանդամությունը կամ սեռը, դա կարելի է եզրակացնել առաջարկված «այլ սոցիալական խումբ» ձևակերպումից: Սահմանման վրա նաև ազդեցություն է ունեցել ատելության հիմքով հանցագործությունների վերջերս Վրաստանում ընդունված սահմանումը, ինչպես նաև «Ատելության հիմքով հանցագործությունների մասին օրենքներ. Գործնական ուղեցույց», ԺՀՄԻԳ (2009թ.) և Եվրոպական հանձնաժողով, 2018թ.:

[23] Տես՝ ատելության հիմքով հանցագործությունների օրենքներ. Գործնական ուղեցույց, ԺՀՄԻԳ (2009), տես օրինակ՝ ՌԱԵՀ (2020) զեկույց Ալբանիայի մասին (վեցերորդ մշտադիտարկման շրջափուլ), էջ 14, հասանելի է առցանց այստեղ՝ https://rm.coe.int/report-on-albania-6th-monitoring-cycle-/16809e8241:

[24] Նաև առաջարկվում է, որ ոստիկանությունն արձանագրի ատելության հիմքով ենթաքրեական միջադեպերը, այլ կերպ ասած՝ ցանկացած դեպք, որը տեղի է ունեցել թվարկված պաշտպանվող հատկանիշների «նկատմամբ անհանդուրժողականության» պատճառով, բայց չի հասել քրեական հանցագործություն համարվելու համար սահմանված շեմին: Այս մոտեցումն ունի հետևյալ առավելությունները. իշխանություններին և մասնավորապես ոստիկանությանը հնարավորություն է ընձեռվում վերահսկել օրինաչափությունները նախքան դրանք ավելի լուրջ ընթացք կստանան, նաև թույլ է տալիս առավել սերտ համագործակցել քաղաքացիական հասարակության համապատասխան խմբերի հետ, որոնք նույնպես հետևում են այդպիսի միջադեպերի: Այս կետին կրկին անդրադարձ է կատարվում Մաս IV-ում:

Առաջարկություն 3. Ցանկացած հանցագործություն, որտեղ կողմակալության/խտրականության ցուցիչները [25], ներառյալ զոհի ընկալումը, ընկալվում է որպես փաստացի կամ ընկալելի «ռասայի», կրոնի, սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության, սեռի, գաղափարախոսության, հաշմանդամության կամ այլ սոցիալական խմբի նկատմամբ լրիվ կամ մասնակի անհանդուրժողականության պատճառով կատարված, պետք է արձանագրվի որպես «ատելության հիմքով հնարավոր հանցագործություն»:

Այս սահմանումը հիմնված է ՌԱԵՀ Ընդհանուր քաղաքականության թիվ 11 հանձնարարականին, և հաշվի է առնում, որ պետք է զոհի կամ որևէ մեկ այլ անձի ընկալումը ներառել ատելության միջադեպերի արձանագրման ժամանակ: Հավասարության և հետևողականության ապահովման համար այս փաստաթղթում առաջարկվող սահմանումը դուրս է գալիս «ռասայի» սահմաններից՝ ներառելով բոլոր պաշտպանվող հատկանիշները: Բացի այդ, ներմուծվում է «ատելության հիմքով հնարավոր հանցագործության» սահմանումը՝ հաշվի առնելու այն փաստը, որ ոստիկանական ծառայությունները մեծամասամբ դժկամորեն են որևէ հանցագործություն ինքնաբերաբար արձանագրում որպես «ատելության հիմքով կատարվող հանցագործություն»՝ հիմք ընդունելով միայն զոհի կամ այլ անձի ընկալումը[26]:

Այդուհանդերձ, սա քննարկման կարևոր կետ է շահակիր կողմերի համար: Առաջարկվում է, որ համապատասխան շահակիր կողմերը քննարկեն և համաձայնություն ձեռք բերեն, թե ստորև ներկայացված 10-րդ առաջարկության մեջ տեղ գտած երեք տարբերակներից որն է նպատակահարմար ընդունել:

Բոլոր «հնարավոր ատելության հիմքով կատարված հանցագործություն» արձանագրված դեպքերը պետք է գործի դնեն ատելության հանցագործությունների քննության գործող և ծրագրվող ուղեցույցները, իսկ վերաբերելի ապացույցների, տուժողի աջակցման մասին տեղեկատվության և անվտանգության կարիքները

[25] Կանխակալության/խտրականության ցուցիչները քրեական գործողության հետ կապված օբյեկտիվ փաստեր են, հանգամանքներ կամ օրինաչափություններ, որոնք միայնակ կամ այլ ցուցիչների հետ միասին ենթադրում են, որ հանցավորի գործողությունները լիովին կամ մասամբ դրդված են եղել կանխակալությամբ, կանխակալ վերաբերմունքով կամ թշնամանքով: Օրինակ, եթե ռասայական փոքրամասնության անդամի վրա հարձակվելիս հանցավորը կիրառում է ռասայական բնույթի վիրավորանք, ապա դա կարող է մատնանշել կանխակալության շարժառիթ և բավարար լինել, որպեսզի արձագանքող ոստիկանն այդ հանցագործությունը դասակարգի որպես ատելության հիմքով հնարավոր հանցագործություն: Նմանապես՝ գերեզմանոցի պղծումը կամ միասեռականների շքերթի մասնակիցների վրա հարձակումը կարող է համարվել որպես հակակրոնական կամ հակա-ԼԳԲՏ շարժառիթի կանխակալության ցուցիչ (էջ 15, «Ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ տվյալների հավաքագրման և մշտադիտարկման մեխանիզմներ. Գործնական ուղեցույց» ԺՀՄԻԳ, 2014թ.):

[26] Միացյալ Թագավորությունը ներկայում աշխարհում միակ երկիրն է, որը լիարժեք կերպով ընդունել է ընկալումների վրա հիմնված քաղաքականություն՝ ատելության հիմքով հանցագործությունների արձանագրման համար:

պետք է փոխանցվեն վարույթն իրականցնող մարմնին: Եթե դեպքը հաստատվում է որպես ատելության հանցագործություն, ապա դա պետք է ներառվի հանցագործության վիճակագրության մեջ՝ համապատասխան դասակարգման ներքո:
Կարևոր է նշել, որ անկախ նրանից, թե որ տարբերակը կընդունվի, միայն զոհի ընկալման ապացույցը բավարար չէ ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ **հետապնդում** ձեռնարկելու համար, և կիրառվում են ապացուցման սովորական կանոնները: Արդյունքում դատախազության քննիչների համար նախատեսված գործող և համապատասխան ուղենիշները պետք է վերանայվեն կամ այդպիսիք պետք է մշակվեն՝ ապահովելու, որ դրանցում հստակ նշված է կանխակալության ցուցիչների(bias indicators) շրջանակը, որոնք միասին վերցված կարող են ծառայել որպես ապացույց առ այն, որ տվյալ հանցագործությունը կատարվել է պաշտպանվող հատկանիշների նկատմամբ «անհանդուրժողականության պատճառով»: Դատարանների գործն է յուրաքանչյուր առանձին դեպքում որոշել, թե արդյոք կիրառելի է ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ համապատասխան դրույթը, թե՝ ոչ:

Առաջարկություն 4._դատախազության համար.
Ցանկացած հանցագործություն, որը հասնում է ապացուցողական շեմային չափանիշին դատական հետապնդման մասին որոշման կայացման առումով, և որը կատարվել է փաստացի կամ ընկալելի «ռասայի», կրոնի, սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության, սեռի, գաղափարախոսության, հաշմանդամության կամ այլ սոցիալական խմբի նկատմամբ լրիվ կամ մասնակի անհանդուրժողականության պատճառով, պետք է արձանագրվի որպես «ատելության հիմքով կատարվող հանցագործության համար հետապնդում»:

Առաջարկվում է, որ դատախազությունը նույնպես արձանագրի այն գործերի թիվը, որոնք ստացվել են քննիչներից և նշված են որպես «ատելության հիմքով հնարավոր հանցագործություններ», քանի որ դա կարող է օգտակար համեմատական տվյալներ տրամադրել գործադիր իշխանությանը՝ զոհի ընկալմամբ և դատարան ներկայացնելու համար շոշափելի ապացույցներով գործերի միջև առկա բացը դիտարկելու առումով:«Ատելության հիմքով հանցագործությունների հետապնդման» վերաբերյալ տվյալները պետք է ազգային կոնտակտային անձի միջոցով ըստ պահանջի տրամադրվեն միջազգային կառավարական կազմակերպություններին, ինչպես օրինակ՝ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությանը, ՌԱԵՀ-ին և ՄԱԿ-ի համապատասխան մարմիններին:

Առաջարկություն 5. դատարանների համար.

Ցանկացած իրավախախտում, երբ ապացուցված է, որ այն կատարվել է «ռասայի», կրոնի, սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության, սեռի, գաղափարախոսության, հաշմանդամության կամ այլ սոցիալական խմբի պատկանելության նկատմամբ անհանդուրժողականության պատճառով, պետք է արձանագրվի որպես «դատապարտված ատելության հիմքով կատարվող հանցագործության համար»:

Այս սահմանումները Հավելվածում ներկայացվածի հետ միասին տրամադրում են այն հայեցակարգային շրջանակը, որը թույլ կտա հետևել գործերին քրեական արդարադատական գործընթացում և ներառել դրանք հանցագործությունների էլեկտրոնային արձանագրման գործող և ծրագրված համակարգերում: Հաջորդ բաժինը նվիրված է այն գործնական քայլերին, որոնք պետք է ձեռնարկվեն միասնական մոտեցում կիրառելու համար:

<u>Առաջարկություն 6.</u> Դուրս բերել և վերլուծել գործեր, որոնց դեպքում կիրառվել են պատժի հետևյալ դրույթները:

Հատկապես այն գործերը, երբ դատարանը քննել է «ատելության», «ռասայական, կրոնական... շարժառիթների», «կրոնական մոլեռանդության» նշանակությունը: Դա կարող է օգնել շահակիր կողմերին նախնական պատկերացում ստանալ այն մասին, թե ներկայում ինչպես են վարում գործերը, բացահայտել ընթացիկ գործելակերպի ուժեղ և թույլ կողմերը և տեղեկացնել արձանագրման, քննության և դատական հետապնդման հետագա ուղենիշների մասին:

Ատելության հիմքով հանցագործությունների միասնական սահմանման կիրառում[27]

Առկա են մի շարք խնդիրներ, որոնք պետք է հաշվի առնել, երբ որոշում է կայացվում, թե ինչպես կիրառել ատելության հիմքով հանցագործությունների միասնական սահմանումը, որոնք նշված են ստորև: Դրանց հետևում է առաջարկվող քայլ առ քայլ մոտեցումը, որը համախմբում է յուրաքանչյուր շահակիր կողմի գործողությունները:

Տարանջատում

Միջազգային նորմերը և չափանիշները պետություններին օգնում են ապահովել ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ տվյալների տարանջատումն ըստ խտրականության շարժառիթի և հանցագործության

[27] Այս բաժնում հաշվի են առնվում Եվրոպայի խորհրդի նախաձեռնած Ելակետային ուսումնասիրության և Իրավիճակային վերլուծության մեջ տեղ գտած առաջարկությունները սույն ծրագրի նախապատրաստման նպատակով՝ բացահայտելու այն քայլերը, որոնք պետք է ձեռնարկվեն այս մոտեցումը կիրառելու համար: Այն պետք է ընթերցել նշված զեկույցների հետ միասին:

տեսակի[28,29]: Ներկայում տվյալները հավաքագրվում են՝ ըստ Քրեական օրենսգրքի ընդհանուր կատեգորիաների՝ առանց նշելու այն հոդվածների ենթակատեգորիաները, որոնցով սահմանվում են ատելության կամ խտրականության շարժառիթով կատարված հանցագործությունները:

Տարանջատման համար կարող են կիրառվել հետևյալ հիմքերը.

- Հանցագործության տեսակը. ցանկացած քրեական հանցագործություն Հայաստանի քրեական օրենսգրքում և ցանկացած նշված հանցագործություն Հավելված 1-ում: Դրանք այնուհետև կարելի է խմբավորել ըստ հանցագործությունների ավելի ընդհանուր կատեգորիաների, ինչպես՝ սպանություն, լուրջ հարձակում, գույքային վնաս և այլն[30]:
- Կանխակալության շարժառիթ (bias motives). Քրեական օրենսգրքի նախագծի վրա հիմնված՝ ատելության հիմքով հանցագործությունների վերոնշյալ սահմանման մեջ բերված բոլոր կանխակալության/խտրականության շարժառիթները:

Առաջարկություն 7. բոլոր շահակիր կողմերի համար, և իրավապահ մարմինների համար՝ որպես առաջնահերթություն.
Ներմուծել հետևյալ մետա կատեգորիաները մշտադիտարկման նպատակով: Դատարանների կողմից կոդավորման համար օգտագործվող առկա համակարգը կարող է ամուր հիմք ծառայել այս աշխատանքի կատարման համար:

Առաջարկվում է սահմանել ատելության հիմքով հանցագործությունների սահմանման մեջ	Ներառված հատկանիշներ և սահմանում, եթե առկա են
«ռասա»	ռասա, մաշկի գույն, լեզու, քաղաքացիություն, ազգային, էթնիկական կամ սոցիալական

[28] Տե՛ս Նախարարական խորհրդի համապատասխան որոշումները, ՌԱԵՀ ԸՔՀ-ները և ՀԻԳ (2018թ.):

[29] Հանցագործությունների տեսակները պետք է արտացոլեն առկա կատեգորիաները, որոնք օգտագործվում են հանցագործությունները տարբերելու համար, հատկապես՝ բռնության, սպանության և այլնի աստիճանները որոշելիս:

[30] Հանցագործության կատեգորիաները որոշելիս շահակիր կողմերը պետք է հետևեն Հայաստանում հանցագործության դեպքերի գրանցման ընդհանուր համակարգում արդեն իսկ հաստատված հանցագործությունների կատեգորիաներին:

	պատկանելություն, ծագում
սեռ	(ներառում է սեռը՝ որպես արական կամ իգական, սակայն բացառում է տրանսգենդերը, որն արձանագրվում է առանձին)
սեռական կողմնորոշում	լեսբի, գեյ, բիսեքսուալ, հետերոսեքսուալ
գենդերային ինքնություն	տրանսգենդեր անձինք
կրոն	քրիստոնյաներ (բոլոր դավանանքները, այդ թվում՝ Եհովայի վկաներ), հրեաներ, մահմեդականներ և այլն: Սա պետք է լինի «համընդհանուր»՝ պաշտպանելով բոլորի կրոնական տեսակետները, ներառյալ՝ ոչ հավատացյալներինը (աթեիստներինը)
գաղափարախոսություն31	անհրաժեշտ է սահմանում և (կամ) օրինակներ ներպետական մակարդակում
հաշմանդամություն	«ցանկացած ֆիզիկական կամ հոգեկան խանգարում»
խտրական այլ հիմք	անհրաժեշտ է սահմանում և (կամ) օրինակներ ներպետական մակարդակում

Առաջարկվում է, որ ԵԱՀԿ ազգային կոնտակտային անձը համաձայնություն ձեռք բերի Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի հետ, թե որ մետա կատեգորիաները պետք է ներկայացվեն Հայաստանի տարեկան տվյալների զեկույցում և որ բացառված կատեգորիաներն է անհրաժեշտ արձանագրել ներպետական մակարդակում, այլ ոչ թե ԵԱՀԿ-ին տրամադրելու համար:

Իրավապահ մարմինների կողմից արձանագրման մեթոդոլոգիայի կիրառումից հետո առաջարկվում է, որ «Ատելության հիմքով հանցագործությունների ռազմավարական խումբը» (որն առաջարկվում է ստորև) համաձայնություն ձեռք բերի համապատասխան մարմինների հետ «Փոխըմբռնման հուշագիր» ընդունելու վերաբերյալ՝ պետական համապատասխան դերակատարների կողմից հետևողական հաշվետվությունների ներկայացման ժամանակացույցի, ինչպես նաև

31 Կարևոր է նշել, որ պաշտպանվող հատկանիշի «գաղափարախոսությունը» անհրաժեշտ է զգուշորեն սահմանել: Նմանօրինակ դրույթներ չարաշահվել են այլ պետություններում՝ օրինական քաղաքական ընդդիմությանը, գիտական համայնքին և ազատ մամուլին ճնշելու նպատակով: Կարևոր է երաշխավորել, որ ղեկավարությունը միշտ կհորդորի զերծ մնալ այդպիսի նպատակներով օգտագործումից՝ Հայաստանի ժողովրդավարական ազատությունները պաշտպանելու նպատակով և ապահովելու, որ այդ ամբողջ քաղաքականությունն ընկալվում է որպես մարդու իրավունքների պաշտպանության խթան, այլ ոչ թե օրինական ժողովրդավարական ազատությունների և բանավեճի սահմանափակման գործիք:

թափանցիկության ապահովման նպատակով տվյալների հրապարակման ժամկետների և մեթոդների շուրջ պայմանավորվելու համար:

Հաղորդման, արձանագրման և տվյալների հավաքագրման առաջնահերթություն

Կարևոր է, որպեսզի քաղաքականությունն ունենա մարդու իրավունքների շրջանակ, որի նպատակն է յուրաքանչյուրին պաշտպանել չարաշահումից: Կենսական է նաև, որ իշխանությունները տիրապետեն տեղեկությունների, ինչը նրանց կօգնի առաջնահերթություններ սահմանել հասարակության առավել խոցելի հատվածներին պաշտպանելու ջանքերում և որ քաղաքականությամբ խրախուսվի առաջնահերթ անդրադառնալը ցանկացած պահի՝ անկախ երկարաժամկետությունից կամ կարճաժամկետությունից, ակնառու թշնամանքի հետ կապված խնդիրներին:

Առաջարկություն 8. բոլոր շահակիր կողմերի համար.

Ներկայում Հայաստանի իշխանությունները պետք է առաջնահերթորեն բարելավեն իրենց արձագանքը ատելության հիմքով հանցագործությունների որոշ տեսակներին, այդ թվում՝ հոմոֆոբ/տրանսֆոբ ատելության հիմքով հանցագործություններին, ինչի մասին են վկայում Փինք Արմենիա և այլ կազմակերպությունների զեկույցները[32]: Առաջարկվում է նաև, որ ներպետական շահակիր կողմերը որոշեն, քննարկեն և համաձայնության գան, թե որ խմբերը պետք է ներկայում առաջնահերթ մշտադիտարկման ենթարկվեն: Այդպիսիք կարող են լինել Եհովայի վկաները և հաշմանդամություն ունեցող անձինք:

Արձանագրման և հաղորդման ձևաթղթերի ուսումնասիրում և փոփոխում

Առաջարկություն 9. բոլոր շահակիր կողմերի համար.

Առաջնահերթ սևեռվելով իրավապահ մարմինների վրա՝ ներկայումս օգտագործվող արձանագրման և հաղորդման ձևաթղթերը պետք է փոփոխվեն և թարմացվեն, որպեսզի արտացոլեն վերոնշյալ գործառնական սահմանումները և կանխակալության/խտրականության շարժառիթների կատեգորիաները:

Բացի այդ, ոստիկանության արձանագրությունների կազմման ձևաթղթերում պետք է հնարավոր լինի արձանագրել հետևյալ տեղեկությունները՝

- հիմքի տեսակ կամ սովորական քրեական հանցագործություն՝ ըստ Հայաստանի քրեական օրենսգրքի (օրինակ՝ հարձակում, գույքային վնաս և այլն)
- կանխակալության շարժառիթ/ «անհանդուրժողականության հիմք» (վերաբերում է վերոնշյալ «մետա» կատեգորիաներին)
- միջադեպի հակիրճ նկարագրություն՝ նշելով կոնկրետ կանխակալության/խտրականության ցուցիչները և զոհի կամ մեկ այլ անձի ընկալումը
- ռիսկի ցուցիչները և համապատասխան գործողությունը
- զոհի կարիքները, այդ թվում՝ արդյոք նրանց օգնություն ցուցաբերվե՞լ է, կամ

32 Տե՛ս Փինք Արմենիա (2018թ.):

ցուցաբերելու կարիք կա՞, թե՝ ոչ[33]
- զոհի/վկայի և ենթադրյալ հանցավորի միջև կապը
- հանցագործության վայրը
- տարիքը և հարակից այլ տվյալներ

Կարևոր է, որ հնարավորության դեպքում արձանագրման համակարգերը ներառվեն արձանագրման գործող գործընթացներում, որոնք նախատեսված են արձանագրումը խթանելու համար, և բյուրոկրատական պահանջները նվազագույնի հասցնեն օպերացիոն անձնակազմի համար: Իրավիճակային վերլուծության առաջարկները հատուկ առաջարկություն են անում այն մասին, որ քաղաքականությունը, ուղենիշները և կարգավորումները պետք է վերանայվեն34: Հավելված 2-ում ներկայացված է արձանագրման ձևաթղթի օրինակ, որը մշակվել է հայկական համատեքստի համար: Խորհրդակցություններից և ուսումնասիրումից հետո այն կարող է օգտագործվել որպես հիմք միասնական մանուալ կամ էլեկտրոնային համակարգի համար, որը հնարավորինս կներառվի հանցագործությունների արձանագրման գործող կամ առաջարկվող համակարգերում:

Շահակիր կողմերը պետք է հաշվի առնեն ձևաթղթերում և ուղեցույցներում որևէ անհրաժեշտ փոփոխությունները, որոնք նշված են ստորև աղյուսակում, և քննարկվել են իրավիճակային վերլուծությունում, ներառյալ՝ «Մինչդատական վարույթը բնութագրող ցուցանիշների վիճակագրական հաշվետվությունների միասնական ձևերը և դրանց լրացման ու ներկայացման կարգերը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության՝ 2008 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 1225-Ն որոշումը:

Մեխանիզմները նախատեսելիս շահակիր կողմերը պետք հիմնվեն «Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգ սահմանելու» մասին Կառավարության 1381 որոշման վրա35: Մինչ այս մեթոդը ներառում է բազմաթիվ գերատեսչություններ, դրանով ստացված տվյալները նկարագրական են, ոչ թե վիճակագրական:

Առաջարկվում է, որ Հայաստանը նաև հաշվի առնել Վրաստանի օրինակը,

---

[33] Տե՛ս հավելված 2՝ արձանագրման մոդելային ձևաթղթի առաջին տարբերակ:

34 Ի լրումն, շահակիր կողմերը կարող են աշխատել «Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգ սահմանելու» մասին Կառավարության 1381 որոշման հիմքի վրա, որը նախանշում է տվյալների հավաքման միասնական մեխանիզմ՝ ներառելով ոստիկանությանը, դատախազությանը և այլ վերաբերելի մարմինների: Մինչ ներկայումս մեխանիզմը շարադրանքի տեսքով տվյալներ է պարունակում, որը հնարավոր չէ քանակական վերլուծության ենթարկել, նրա միջգերատեսչական մեթոդը և կառուցակարգը հետագա զարգացումների հուսադրող հիմք են:

35 Տեքստը հասանելի է հայերեն՝ https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2019/10/19-1381.pdf

մասնավորապես՝ ոստիկանությունում և դատախազությունում մարդու իրավունքների բաժինների հիմնման առումով, որոնք, ի թիվս այլոց, նաև խնդիր ունեն վերանայելու գործերը, որոնք մատնանշվել են որպես ատելության հիմքով կատարված հանցագործություններ, և խորհրդատվություն տրամադրելու այդ գործերի վարման վերաբերյալ:

Ուղեցույց և ուղենիշներ

Առաջարկություն 10. բոլոր շահակիր կողմերի համար.

Առաջնահերթ սևեռվելով իրավապահ մարմինների վրա՝ մշակել ատելության հիմքով հանցագործությունների արձանագրման, ուսումնասիրման և դրանց վերաբերյալ տեղեկությունների կազմման ուղեցույց, ներառյալ՝

- ատելության հիմքով հանցագործությունների առանձին օրինակներ, որոնք հիմնված են կանխակալության/խտրականության շարժառիթների վրա բոլոր վերը նշված պաշտպանվող հատկանիշների առնչությամբ, որոնք համատեղ մշակված են քաղաքացիական հասարակության համապատասխան կազմակերպությունների հետ և հիմնված են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան վճիռներին: Սա կօգնի երաշխավորել, որ ոստիկանները և դատախազները հստակ պատկերացում ունենան, թե ինչ տեսակի գործեր կարող են քննվել քրեական օրենսգրքի տվյալ հոդվածի շրջանակներում, երբ նոր քրեական օրենսգիրքը կիրարկվի, և կմեծացնի արձանագրությունների ճշգրտությունը և հավանականությունը, որ դատարանները ճշգրիտ կերպով կկիրառեն այս դրույթը:
- ոստիկանության, նախարարությունների և երբ անհրաժեշտ է նաև դատախազության ներկայացուցիչների հետ հետագա քննարկումներում պետք է համաձայնություն կայացվի այն մասին, թե արդյոք մշտադիտարկումը պետք է ներառի բոլոր կատեգորիաները, թե պետք է ներառել «մշտադիտարկման ենթակա» հատուկ կատեգորիաներ, որոնք ունեն առավել մեծ ազդեցություն համայնքների վրա, պետք է գերակա համարվեն մշտադիտարկման տեսակետից՝ ըստ վերոնշյալ առաջարկությունների: Առնվազն պետք է հատուկ ուշադրություն դարձվի այս խմբերի հետ կապված համապարփակ դեպքերի օրինակների և կանխակալության/խտրականության ցուցիչների խմբի մշակման հարցին:
- հստակ մշակված պարտականություններ յուրաքանչյուր մակարդակում (տե՛ս առաջարկվող ուղենիշները և աղյուսակ 2-ը ստորև, որտեղ ներկայացված է արձանագրման և մշտադիտարկման ներկա և առաջարկվող շրջանակը)
- կանխակալության/խտրականության ցուցիչների ցանկ, որը պետք է սահմանի ցանկացած կողմ՝ ատելության հիմքով

հանցագործությունները բացահայտելու և արձանագրելու նպատակով, և որը կարող է օգտագործվել որպես ապացույց, որ հանցագործությունը կատարվել է «կանխակալության/խտրականության շարժառիթների» հիման վրա պաշտպանվող հատկանիշի հիմքով՝ ըստ առկա նախադեպային վճռի, որտեղ հնարավոր է[36]

- իրավական և տեխնիկական այլ եզրույթների, մասնավորապես՝ «գաղափարախոսության» և «այլ սոցիալական խմբերի» հատուկ սահմանումը պետք է ներառվի համապատասխան ուղեցույցի, ուղենիշների մեջ և վերապատրաստման ոլորտում[37]
- ձևակերպումներ և ուղեցույց, որոնք հատուկ անդրադառնում են արձանագրման սխալ պրակտիկայի դեպքերին

Արձանագրման և տվյալների հավաքագրման վերաբերյալ ուղենիշներ մշակելիս կարելի է հիմնվել լավագույն փորձի առկա օրինակներին՝

- «Ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ տվյալների հավաքագրման ուղենիշներ և վերապատրաստման ձեռնարկ», մշակվել է ԱՄՆ Հետաքննությունների բյուրոյի իրավապահության աջակցության ստորաբաժանման և հանցագործությունների վիճակագրության կառավարման բաժնի կողմից[38]: Այս փաստաթղթում սահմանվում են իրավապահ բոլոր մարմինների համար նախատեսվող դերերը և պարտականությունները՝ ԱՄՆ-ում ատելության հիմքով հանցագործությունների արձանագրման և դրանց վերաբերյալ տվյալների հավաքագրման նպատակով: Փաստաթղթում ներառված են կոնկրետ օրինակներ ատելության հիմքով հանցագործությունների մշտադիտարկվող յուրաքանչյուր տեսակի համար՝ իրավապահներին օգնելու բացահայտել ատելության հիմքով հանցագործությունների բազմաթիվ տեսակները, որոնք նախատեսված են օրենսդրությամբ, և առաջարկված է ուսումնասիրման «երկմակարդակ» համակարգ: Առաջին արձագանքման իրավապահ մարմինները պատասխանատու են բացահայտել ատելության հիմքով հնարավոր հանցագործությունները, իսկ հանցագործությունների կառավարման հարցերով զբաղվող անձնակազմը պատասխանատու է նախնական

[36] Տե՛ս նաև ՀԻԳ (2018թ.):

[37] Հաշվի առնել ներկա մոտեցումը, որն առաջարկվում է PAHCT (Ատելության հիմքով հանցագործությունների դեմ պայքարի միջոցների ուսուցում դատախազության աշխատակիցների համար) և «Ատելության հիմքով հանցագործությունների մասին օրենքներ. Գործնական ուղեցույց», ԺՀՄԻԳ (2009թ.) փաստաթղթերով:

[38] https://ucr.fbi.gov/hate-crime-data-collection-guidelines-and-training-manual.pdf

դասակարգման ուսումնասիրման և հաստատման կամ փոփոխման համար:

- Միացյալ Թագավորության Ոստիկանության քոլեջի ուղեցույցում բացատրվում է ատելության հիմքով հանցագործությունների արձանագրման քաղաքականությունը, որն ուղղորդվում է ընկալումների վրա հիմնված մոտեցմամբ՝ ՌԱԵՀ Ընդհանուր քաղաքականության թիվ 11 հանձնարարականին համահունչ: Այն նաև ներառում է ՄԹ օրենսդրությամբ սահմանված ատելության հիմքով կատարվող բոլոր հանցագործությունների պատկերավոր օրինակները՝ օգնելու ոստիկանությանը նույնականացնել ատելության հիմքով կատարվող հնարավոր հանցագործությունները[39]:
- Դասակարգելով և քննելով ատելության հանցագործությունները Ուկրաինայում. Գործնական ուղեցույցը, ԺՀՄԻԳ (2019) 40 այս ոլորտում ոստիկանությանը ուղղորդման ուժեղ տարածաշրջանային օրինակ է:

Վերապատրաստում

Առաջարկություն 11. բոլոր շահակիր կողմերի համար.

Հայաստանում ատելության հիմքով հանցագործությունների արձանագրման համակարգի հաջող իրականացումը պայմանավորված է լիովին որակավորված ոստիկանների առկայությամբ, որոնք ունակ են բացահայտել, արձանագրել և արձագանքել ատելության հիմքով հանցագործությունների ցանկացած տեսակին, Ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տվյալների մուտքագրման անձնակազմի առկայությամբ, ինչպես նաև այնպիսի դատախազների և դատավորների առկայությամբ, որոնք օժտված են համապատասխան հմտություններով և գիտելիքներով՝ այդ նույն գործունեությունն իրենց մանդատների շրջանակում անելու համար:

Կանխակալության/ խտրականության որոշ տեսակների վերաբերյալ ապացույցների որքան հնարավոր է շուտ հայտնաբերվելու և արձանագրվելու կարևորությունը հատկապես շեշտվել է ՌԱԵՀ վերջին զեկույցում՝ նպատակ ունենալով բարձրացնել այն հավանականությունը, որ քրեական իրավունքը արդյունավետ կերպով է կիրառվում ռասիստական բռնության և հոմոֆիբ և

[39] https://www.college.police.uk/What-we-do/Support/Equality/Documents/Hate-Crime-Operational-Guidance.pdf, տե՛ս Հավելված 4. ատելության հիմքով հանցագործությունների արձանագրման ուղեցույցի նախագիծ:

40 Տես՝ Ուկրաինայի ձեռնարկ՝ https://www.osce.org/odihr/419891?download=trueODIHR

տրանսֆոբ հանցագործությունների նկատմամբ41 :

Հաջողակ համակարգը պահանջելու է փորձառու և հմուտ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, որոնք առանցքային դեր կխաղան ատելության հիմքով հանցագործությունների բացահայտման և տուժողներին աջակցման համար:

Վերը նշված ընդհանուր սկզբունքներին համահունչ՝ վերապատրաստումը, ներառյալ՝ դեպքերի ուսումնասիրությունները, պետք է լիովին համապատասխանեցվեն ոստիկանության, դատախազների և դատական դեպարտամենտի գործող և ծրագրված ուղենիշներին և քաղաքականությանը: Վերապատրաստման կարևորությունը շեշտվել է 2019 և 2020 թվականին Երևանում կայացած բազմակողմանի շահակիր կողմերի հանդիպման ընթացքում, ինչպես նաև 2020 թվականի մարտին շահակիր կողմերից ստացված կարծիքներում:

Միջգերատեսչական համագործակցություն

Առաջարկություն 12. բոլոր շահակիր կողմերի համար.

Ստեղծել միջգերատեսչական աշխատանքային խումբ, որը կվերահսկի ատելության հիմքով հանցագործությունների արձանագրման և տվյալների հավաքագրման միասնական մոտեցման իրականացումը, ինչպես նաև ատելության հիմքով հանցագործությունների ընկալման և վերացման համապարփակ մոտեցման մյուս տարրերը:

Առաջարկվում է, որ խումբը պաշտոնականացվի՝ ունենալով անդամներ կառավարության բոլոր համապատասխան գերատեսչություններից, բաժիններից, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմից, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից[42,43]:

Խմբի աշխատանքի և կազմի վերաբերյալ համաձայնելու գործընթացում առաջարկվում է, որ շահակիր կողմերն ուսումնասիրեն վերջերս ստեղծված մի աշխատանքային խմբի և միջգերատեսչական համաձայնության օրինակ Հունաստանում[44]:

Հունաստանի համաձայնության հետևյալ կետերը կարելի է ներառել Հայաստանի

41 Հայաստանի վերաբերյալ ՌԱԵՀ զեկույց, հինգերորդ մշտադիտարկման շրջափուլ: https://rm.coe.int/fourth-report-on-armenia/16808b5539

42 Հիմք ընդունելով ելակետային հետազոտության և իրավիճակային վերլուծության արդյունքները՝ առաջարկվում է հղում կատարել Հունաստանում վերջերս կազմված արձանագրությանը՝ https://www.osce.org/odihr/402260?download=true

43 Այս առաջարկությունը ներկայացրել են տարանջատ տվյալների վերաբերյալ 2019 թվականի հուլիսի 3-ին կայացած հանդիպման մասնակիցները:

44 https://www.osce.org/odihr/402260

մոտեցման մեջ՝

- Ատելության հիմքով հանցագործությունների փոխհամաձայնեցված սահմանումը ներառվում է միջգերատեսչական Հուշագրում (Հոդված 1)
- Հուշագրում նշվում են բոլոր շահակիր կողմերի անունները, ներառյալ՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները ՀԿ-ների ազգային ցանցի տեսքով (Հոդված 2)
- Հուշագիրը ներառում է ատելության հիմքով հանցագործությունների ընկալման և քննության համապարփակ մոտեցման, ներառյալ՝ արձանագրման և տվյալների հավաքագրման բազմաթիվ տարրեր
- Հուշագիրը ստորագրող բոլոր կողմերը հանձն են առնում արձանագրման և տվյալների հավաքագրման բարելավման վերաբերյալ որոշակի պարտավորություններ (Հոդված 3)
- Ներառված են ատելության հիմքով հանցագործությունների մասին տեղեկությունների հրապարակման և զոհականացման վերաբերյալ հարցումների անցկացման հանձնառություններ (տե՛ս ստորև առաջարկությունները)
- Սահմանված են ատելության հիմքով հանցագործությունների արձանագրման և տվյալների հավաքագրման ոլորտում դերերը և պարտականությունները (Հոդվածներ 4, 5, 6,9, 10, 11, 12)
- Սահմանված են տեղեկությունների և տվյալների տրամադրման, հանդիպումների կազմակերպման պարտականությունները, օրակարգերը և հանդիպումների հետ կապված ծախսերը (Հոդվածներ 13, 14)

Շահակիր կողմերը նաև պետք է նկատի առնեն, որ անհրաժեշտ է նշանակել հանդիպումների և օրակարգերի կազմակերպման գործընթացը ղեկավարող մեկ մարմին: Դատախազությունը կամ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը կարող են լավ մեկնակետ լինել45:

Շահակիր կողմերը կարող են նաև համաձայնել խմբի նախագահությունը հաջորդաբար փոխանցելու շուրջ: Սա նշանակում է, որ շահակիր կողմերը հերթով կնախագահեն հանդիպումները և կաշխատեն համակարգող մարմնի հետ օրակարգի և ցանկացած հետագա աշխատանքների ուղղությամբ: Այդպիսով կապահովվի ընդհանուր հաշվետվողականություն և քաղաքական գործիչների ներգրավվածություն պետական մարմիններում և գերատեսչություններում:

Այս ոլորտներին անդրադառնալու նպատակով կառաջարկեինք նաև, որ միջգերատեսչական աշխատանքային խումբը ստեղծեր մի շարք, գուցե ժամանակավոր, աշխատանքային ենթախմբեր՝ մշակելու այս քաղաքականության որոշակի ոլորտները՝ ներառելով, բայց չսահմանափակվելով հետևյալով՝

1. Տվյալների համակարգեր և հաղորդման ընթացակարգեր:
2. Համագործակցություն քաղաքացիական հասարակության հետ:

45 Օրինակ՝ Իսպանիայում այս գործառույթը կատարում է մարդու իրավունքների ազգային ինստիտուտը (OBERAXE):

3. Գիտական համայնքի հետ փոխգործակցություն և հետազոտություններ ատելության հիմքով հանցագործությունների ոլորտում:
4. Ընթացակարգեր՝ կապված ատելություն սերմանող խոսքի (այդ թվում նաև առցանց) և առանց հանցագործության հատկանիշների ատելության միջադեպերի արձանագրման կամ դրանց վերաբերյալ հետազոտությունների իրականացման հետ: Այս ենթախումբը կարող է ներառել տվյալների մշակման ներուժ քրեական արդարադատության հետ կապ չունեցող դերակատարներից, ինչպիսիք են քաղաքացիական հասարակության գործընկերները, կրթական հաստատությունները և քրեակատարողական հիմնարկները:
5. Վերապատրաստման ենթախումբ, որը կզբաղվի առանցքային դերակատարների և առաջին արձագանքման ընդհանուր մասնագետների վերապատրաստման ծավալներով և մեթոդներով:

Որպես առաջին քայլ առաջարկվում է, որ ոստիկանությունը, քննչական կոմիտեն, Ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնը և Արդարադատության նախարարությունը ընդունեն ատելության հիմքով հանցագործության միասնական ընդհանուր սահմանում: Առաջարկվում է դիմել Եվրոպայի խորհրդի աջակցությանը ատելության հիմքով հանցագործությունների ընդհանուր սահմանման ընդունման հարցում, վերաբերելի ձևաթղթերի և համակարգի վերանայման, ինչպես նաև ատելության հանցագործության արձանագրման և տվյալների հավաքման ուղեցույցների կազմման հարցերում: Ձևանմուշների օրինակները ներկայացված են հավելված 2-ում:

Առաջարկություն 13. բոլոր շահակիր կողմերի համար.

Ներպետական աշխատանքային խմբի և միջգերատեսչական համաձայնության ձևաչափի և կառուցվածքի վերաբերյալ քննարկումների ընթացքում շահակիր կողմերը պետք է նաև հաշվի առնեն այլ համատեքստերից սովորելը: Օրինակ, Վրաստանը կարող է լավ օրինակ լինել, որը ոստիկանությունում հիմնել է մարդու իրավունքների բաժին՝ արձանագրելու և մշտադիտարկելու ատելության հիմքով հանցագործությունները:

Համագործակցություն քաղաքացիական հասարակության համապատասխան կազմակերպությունների հետ

Առաջարկություն 14. բոլոր շահակիր կողմերի համար.

Փնտրել արդյունավետ համագործակցության հնարավորություններ և համագործակցել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ, որոնք մշտադիտարկում և արձանագրում են ատելության հիմքով հանցագործությունները:

Վերջին հետազոտությունները ցույց են տվել, որ քաղաքացիական հասարակության տվյալները հանդիսանում են և պետք է ընկալվեն որպես ատելության հիմքով հանցագործությունների արձանագրման և տվյալների հավաքագրման ցանկացած

ներպետական համակարգի անբաժանելի բաղադրիչ [46]: Սա արդյունք է տվել ներպետական մակարդակում *Իդենթոբան և այլոք ընդդեմ Վրաստանի* գործով, երբ դատարանը վճռեց, որ Վրաստանի իշխանությունները պետք է տեղյակ լինեին ԼԳԲՏ+ համայնքների նկատմամբ սպառնալիքի մասին քաղաքացիական հասարակության հասանելի տվյալների հիման վրա: Արդյունքում քաղաքացիական հասարակության այն կազմակերպությունները, որոնք արձանագրում են և մշտադիտարկում ատելության հիմքով հանցագործությունները՝ հիմնվելով հստակ, թափանցիկ և կուռ մեթոդաբանության վրա, պետք է համարվեն ոստիկանության, դատախազության և դատական դեպարտամենտի հավասար գործընկերներ՝ ատելության հիմքով հանցագործությունների, խտրականության և ատելություն սերմանող խոսքի ընկալման և դրա դեմ պայքարի ուղղությամբ Հայաստանի գործադրած ջանքերում: Շահակիր կողմերը պետք է քննարկեն ատելության հիմքով հանցագործությունների արձանագրման և տվյալների հավաքագրման ոլորտում համագործակցության խորացման ուղիները: Բացի քաղաքացիական հասարակության տվյալների հասանելիության օգուտից (զոհերի տվյալների և գաղտնիության համապատասխան պաշտպանությանը համահունչ), այս համագործակցությունը կարող է մեծացնել փոխհարաբերությունների որակը և խորությունը, ինչն իր հերթին կարող է մեծացնել քրեական արդարադատության գործընթացում զոհերի ներգրավված մնալու հնարավորությունը և իշխանությունների նկատմամբ վստահությունը: Անհրաժեշտ է նաև սերտորեն համագործակցել քաղաքացիական հասարակության համապատասխան կազմակերպությունների հետ՝ ուսումնասիրելու, մշակելու և ընդունելու իրազեկության բարձրացման և զոհերին տեղեկատվության տրամադրման հատուկ ռազմավարություններ, որոնք կանդրադառնան հաղորդումների ներկայացման ակնհայտ խոչընդոտներին, այդ թվում և ոստիկանության կողմից վատ արձագանքմանը և քննությունների տևական ձգձգումներին[47]:

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը առաջարկել է, որ ոստիկանության ուժերում ստեղծվեն ատելության հանցագործությունների հարցերով մարմիններ կամ պատասխանատու անձինք: Այս մարմինները պետք է հատուկ վերպատրաստում անցնեն ատելության հանցագործությունների հարցերով, ինչպես նաև ապահովեն ներկայություն խոցելի

---

[46] Perry, J. (պատրաստվում է տպագրության):

[47] Տե՛ս նաև ՀԻԳ-ի կարծիքները և հատուկ բաժինը քաղաքացիական հասարակության հետ համագործակցության վերաբերյալ, էջ 17 և 27:

Տե՛ս «Ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ տվյալների հավաքագրման և մշտադիտարկման մեխանիզմներ. Գործնական ուղեցույց» (2014թ.), ԵԱՀԿ, https://www.osce.org/odihr/datacollectionguide?download=true, տե՛ս նաև ՌԱԵՀ թիվ 11 ԸՔՀ՝ ոստիկանության հետ կապված, «Ստեղծել ոստիկանության և փոքրամասնությունների խմբերի միջև երկխոսության և համագործակցության շրջանակներ»:

համայնքներում՝ նրանց հետ վստահելի հարաբերություններ ստեղծելու համար, որպեսզի ատելության հանցագործության զոհերը հնարավորություն ունենան ատելության դեպքերի վերաբերյալ ներկայացնել հաղորդումներ մարդկանց, ում վստահում են։ 48 Այդուհանդերձ, այս մոտեցումը պահանջում է միջոցներ և հանձնառություն՝ զարգացնելու քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունները, որոնք ներկայում չեն կարողանում ապահովել մշտադիտարկման և տուժողներին աջակցության բավարար բարձր չափանիշներ։

ԵՄ հիմնարար իրավունքների գործակալությունը նշում է քաղաքացիական հասարակության հետ համագործակցության չորս ձև, որոնց վրա հիմնված են սույն զեկույցում տեղ գտած առաջարկությունները՝

- համապատասխան տվյալների և տեղեկությունների փոխանակում,
- համատեղ աշխատանք ատելության հիմքով հանցագործությունների լատենտայնությունը բացահայտելու ուղղությամբ
- աշխատանքային խմբերի ստեղծում
- ուղենիշների համատեղ մշակում, օրինակ՝ կանխակալության հիմնական ցուցիչների ընդունման վերաբերյալ[49]։

Այլ նկատառումներ

Շահակիր կողմերը պետք է ընդունեն, որ հաջող իրականացման մասին վկայող ցուցիչներից մեկը կլինի ատելության հիմքով հանցագործությունների արձանագրման թվի զգալի աճը։ Անհրաժեշտ է, որպեսզի բարձրաստիճան պաշտոնյաները ողջունեն այս զարգացումը՝ որպես ոստիկանության և այլ պետական մարմինների կողմից արձանագրման բարելավման և այդ հանցագործությունների մասին հաղորդում ներկայացնելու հետ կապված՝ զոհերի և համայնքների վստահության մեծացման ցուցիչ։ Այս մոտեցման որդեգրումը պետք է լինի թափանցիկության բարելավման, այդ թվում՝ նաև տվյալների և խնդիրը հասկանալու և լուծելու նպատակով պատկան մարմինների ձեռնարկած քայլերի վերաբերյալ տեղեկությունների պարբերական հրապարակման ավելի լայն ռազմավարության բաղադրիչը։ Այս խնդիրը պետք է ճանաչվի և լիարժեք կերպով քննարկվի հնարավորինս շուտ[50]։

---

48 Տե՛ս, օրինակ, ՌԱԵՀ-ի 5- ի 5-րդ զեկույցը Վրաստանի մասին, 2016թ. , որում հիմնական առաջարկությունները ներկայացված են 68-րդ կետում։

[49] Տե՛ս ՀԻԳ, 2018թ.։

[50] Հաշվի առեք ՄԹ աշխատանքը սրա հետ կապված։ Սա կարող է ներառել բարձրաստիճան պաշտոնյաների մամլո հաղորդագրությունների օրինակների ուսումնասիրումը, որոնք հստակ ողջունում են ատելության հիմքով հանցագործությունների դեպքերի արձանագրման աճը։

Հավելված 1. Հայաստանում դեպքերի արձանագրման և տվյալների հավաքագրման մասին համապատասխան օրենսդրությունը և փորձը միջազգային նորմերի և չափանիշների համատեքստում

Ստորև ներկայացված աղյուսակներում բերված են Հայաստանի իրավական դրույթները և միջազգայնորեն փոխհամաձայնեցված սահմանումները: Դա թերևս կօգնի Հայաստանի իրավական դաշտին առավել լավ ինտեգրվել միջազգային հայեցակարգային սահմանումներին: Հիմնական փաստաթուղթը հիմնված է դրա վրա և առաջարկում է կոնկրետ սահմանումներ Հայաստանի և քրեական արդարադատության տարբեր գերատեսչությունների և նախարարությունների համար:

Այս հավելվածում ներկայացված են Հայաստանի քրեական օրենսգրքի համապատասխան դրույթները, ինչպես նաև վարչական և քաղաքացիական օրենսգրքերի համապատասխան դրույթներ՝ ըստ ատելության հիմքով հանցագործությունների, ատելություն սերմանող խոսքի և խտրականության հասկացությունների միջազգայնորեն ընդունված սահմանումների: Որոշ դեպքերում դա անհարմար է՝ քրեական օրենսգրքի առանձին դրույթները տրոհելու առումով, և անհրաժեշտ է քննարկել շահակիր կողմերի հետ, թե որը կլինի լավագույն մոտեցումը: Նպատակն է ի ցույց դնել, թե Հայաստանի առաջարկվող՝ արձանագրման և տվյալների հավաքագրման համակարգում ինչպես կազմակերպել իրավական դրույթները՝ միջազգային նորմերին և չափանիշներին համապատասխանություն ապահովելու համար:

Աղյուսակ 1.
Հայաստանի՝ ատելության հիմքով հանցագործությունների ներպետական դրույթների համապատասխանեցումը ատելության հիմքով հանցագործությունների միջազգայնորեն համաձայնեցված սահմանմանը

Ատելության հիմքով հանցագործությունները սահմանվում են որպես՝ ***Կանխակալության շարժառիթով կատարված քրեական արարք (հանցագործության տեսակների և պաշտպանվող հատկանիշների ցանկը)***	**Մեկնաբանություններ**
ՀՀ քրեական օրենսգիրք (հատվածներ) **Հոդված 63. Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքները**	Օրենսգրքի ընդհանուր մաս: Այն չի ներառում այլ հիմքեր՝ էթնիկական, ռասայական կամ կրոնական

1. Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ են՝ (...) (6) **հանցանքն ազգային, ռասայական կամ կրոնական ատելության, կրոնական մոլեռանդության,** այլ անձանց իրավաչափ գործողությունների համար վրեժի շարժառիթներով կատարելը (...) 2. Դատարանը, ելնելով հանցագործության բնույթից, կարող է ծանրացնող չհամարել սույն հոդվածի առաջին մասի 10-րդ և 14-րդ կետերում մատնանշված հանգամանքները: 3. Պատիժ նշանակելիս դատարանը չի կարող հաշվի առնել սույն հոդվածի առաջին մասով չնախատեսված այլ հանգամանքներ: 4. Եթե սույն հոդվածի առաջին մասում նշված որևէ հանգամանք սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված է որպես հանցագործության հատկանիշ, ապա դա չի կարող կրկին հաշվի առնվել որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք:	շարժառիթներից բացի:
Հոդված 104. Սպանությունը 1. Սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ 6-ից 12 տարի ժամկետով: 2. Սպանությունը՝ (...) (13) **ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով,** **պատժվում է ազատազրկմամբ 8-ից 15 տարի ժամկետով կամ ցմահ ազատազրկմամբ:** (...)	Հիմնական հանցակազմ: Կրկին «շարժառիթները» սահմանափակվում են՝ ազգային, ռասայական կամ կրոնական հիմքերով:
Հոդված 112. Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը 1. Դիտավորությամբ մեկ ուրիշին մարմնական վնասվածք պատճառելը կամ առողջությանն այլ	Հիմնական հանցակազմ: Ինչպե՞ս է սահմանվում կրոնական

ծանր վնաս պատճառելը, որը վտանգավոր է կյանքի համար կամ առաջացրել է տեսողության, խոսքի, լսողության կամ որևէ օրգանի կամ օրգանի ֆունկցիայի կորուստ կամ արտահայտվել է դեմքի անջնջելի այլանդակմամբ, ինչպես նաև կյանքի համար վտանգավոր այլ վնաս է պատճառել առողջությանը կամ առաջացրել է դրա քայքայում՝ զուգորդված ընդհանուր աշխատունակության ոչ պակաս, քան մեկ երրորդի կայուն կորստով կամ հանցավորի համար ակնհայտ մասնագիտական աշխատունակության լրիվ կորստով կամ առաջացրել է հղիության ընդհատում, հոգեկան հիվանդություն, թմրամոլությամբ կամ թունամոլությամբ հիվանդացում՝ պատժվում է ազատազրկմամբ՝ 3-ից 7 տարի ժամկետով։ 2. Նույն արարքը, որը կատարվել է՝ (...) (12) **ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով,** **պատժվում է ազատազրկմամբ՝ 5-ից 10 տարի ժամկետով։**	«մոլեռանդությունը»՝ ի տարբերություն «կրոնական ատելության շարժառիթների»։ Կրկին «ատելությունը» նշված է։
Հոդված 113. Դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը 1. Դիտավորությամբ մեկ ուրիշին մարմնական վնասվածք կամ առողջությանը որևէ այլ վնաս պատճառելը, որը վտանգավոր չէ կյանքի համար և չի առաջացրել սույն օրենսգրքի 114-րդ հոդվածով նախատեսված հետևանքներ, բայց առաջացրել է առողջության տևական քայքայում կամ ընդհանուր աշխատունակության մեկ երրորդից պակաս զգալի կայուն կորուստ՝ պատժվում է կալանքով՝ 1-ից 3 ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 3 տարի ժամկետով։ 2. Նույն արարքը, որը կատարվել է՝ (...) (7) **ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով՝** պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը 5 տարի ժամկետով։	Հիմնական հանցակազմ է ։ Ինչպե՞ս է սահմանվում կրոնական «մոլեռանդությունը»՝ ի տարբերություն «կրոնական ատելության շարժառիթների»։ Կրկին «ատելությունը» նշված է։

(...)	
Հոդված 185. Գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը 1. Ուրիշի գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որը զգալի չափերի վնաս է պատճառել՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինսնապատիկից հարյուրապատիկի չափով, կամ ուղղիչ աշխատանքներով՝ առավելագույնը 1 տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը 2 ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 2 տարի ժամկետով: 2. Նույն գործողությունը, որը՝ (...) (4) **կատարվել է ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը 4 տարի ժամկետով:** 3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված գործողությունը, որը՝ (...) (3) առաջացրել է պատմական, գիտական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկաների ոչնչացում կամ վնասում՝ պատժվում է ազատազրկմամբ՝ 2-ից 6 տարի ժամկետով: (...)	Հիմնական հանցակազմ է: Կրկին «ատելությունը» նշված է: Ինչպե՞ս է սահմանվում կրոնական «մոլեռանդությունը»՝ ի տարբերություն «կրոնական ատելության շարժառիթների»:

Հոդված 265. Դիակը կամ թաղման վայրերն անարգանքի ենթարկելը 1. Դիակն անարգանքի ենթարկելը կամ թաղման վայրերը, մահացածներին թաղելու կամ նրանց հիշատակի հետ կապված ծիսակատարությունների համար նախատեսված գերեզմանների վրա եղած շինությունները կամ առարկաները ոչնչացնելը, վնասելը կամ պղծելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը 2 ամիս ժամկետով: 2. Նույն արարքները, որոնք կատարվել են՝ (...) (2) **ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ թշնամանքի շարժառիթով, պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ 1-ից 3 ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 3 տարի ժամկետով:**	Հիմնական հանցակազմ է: Կրկին «ատելությունը» նշված է: Ինչպե՞ս է սահմանվում կրոնական «մոլեռանդությունը»՝ ի տարբերություն «կրոնական ատելության շարժառիթների»:
Հոդված 119. Ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը 1. Անձին դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, եթե դա չի առաջացրել սույն օրենսգրքի 112-րդ և 113-րդ հոդվածներով նախատեսված հետևանքները, և եթե բացակայում են սույն օրենսգրքի 309.1-ին հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները՝ 2. Նույն գործողությունները, որոնք կատարվել են՝ (...) (7) **ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով՝** **պատժվում են ազատազրկմամբ՝ 3-ից 7 տարի ժամկետով:** (...)	Հիմնական հանցակազմ է: Կրկին «ատելությունը» նշված է: Ինչպե՞ս է սահմանվում կրոնական «մոլեռանդությունը»՝ ի տարբերություն «կրոնական ատելության շարժառիթների»: «Խոշտանգում» հասկացությունը սահմանելը դժվար է:

Աղյուսակ 2. Ատելություն սերմանող խոսք

Ենթադրվում է, որ քրեական բնույթի ատելություն սերմանող խոսքի դեպքերի արձանագրման և տվյալների հավաքագրման համակարգը նույնն է, ինչ վերը նշված՝ ատելության հիմքով հանցագործությունների դեպքերի արձանագրման և տվյալների հավաքագրման համակարգը։

Ատելություն սերմանող խոսքի սահմանումը հետևյալն է՝ Ատելություն սերմանող խոսքը ... ենթադրում է արտահայտման մեկ կամ ավելի հատուկ ձևերի օգտագործումը, մասնավորապես՝ անձի կամ անձանց խմբի նկատմամբ ստորացման, ատելության կամ անարգանքի ջատագովությունը, խթանումը կամ սադրանքը, ինչպես նաև այդպիսի անձի կամ անձանց նկատմամբ ցանկացած ոտնձգություն, վիրավորանք, բացասական կարծրատիպացում, խարան կամ սպառնալիք և ցանկացած արդարացում արտահայտման վերոնշյալ բոլոր ձևերի համար, որը հիմնված է անձնական բնորոշ հատկանիշների կամ կարգավիճակի ոչ սպառիչ ցանկի վրա, ներառյալ՝ «ռասան», մաշկի գույնը, լեզուն, կրոնը կամ դավանանքը, ազգությունը կամ ազգային կամ էթնիկական պատկանելությունը, ինչպես նաև ծագումը, տարիքը, հաշմանդամությունը, սեռը, գենդերը, գենդերային ինքնությունը և սեռական կողմնորոշումը։	**Մեկնաբանություններ/ առաջարկություններ**
Իրավական դրույթներ	
ՀՀ Սահմանադրություն **Հոդված 77. Հիմնական իրավունքների և ազատությունների չարաշահման արգելքը** Արգելվում է հիմնական իրավունքների և ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով:	

Հոդված 226. Ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելը 1. Ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելուն, ռասայական գերազանցությանը կամ ազգային արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված գործողությունները՝ պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից չորս տարի ժամկետով: 2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են՝1) հրապարակայնորեն կամ լրատվության միջոցներ օգտագործելով, 2) բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, 3) պաշտոնեական դիրքն օգտագործելով, 4) կազմակերպված խմբի կողմից՝ պատժվում են ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:	Ըստ իրավիճակային վերլուծության՝ «Քննչական և դատախազության մարմինները իրենց հերթին հազվադեպ են գործ հարուցում Քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածով:
Հոդված 226.1. Ահաբեկչության, ահաբեկչության ֆինանսավորման և միջազգային ահաբեկչության հրապարակային կոչերը, նշված հանցանքների կատարումը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը 1. Սույն օրենսգրքի 217-րդ, 217.1-ին կամ 389-րդ	

հոդվածներով նախատեսված հանցանքներ կատարելու հրապարակային կոչերը, այդ հանցանքների կատարումը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը, եթե առաջացել է նշված հանցանքները կատարելու իրական վտանգ՝ պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:	
Հոդված 226.2. Բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը 1. Անձի կամ անձանց խմբի նկատմամբ սեռով, ռասայով, մաշկի գույնով, էթնիկական կամ սոցիալական ծագումով, գենետիկական հատկանիշներով, լեզվով, կրոնով, աշխարհայացքով, քաղաքական կամ այլ հայացքներով, ազգային փոքրամասնությանը պատկանելությամբ, գույքային վիճակով, ծնունդով, հաշմանդամությամբ, տարիքով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ մասով, 226-րդ, 226.1-ին, 301-րդ, 385-րդ, 397.1-ին հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշները՝ պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրհիսնապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով: 2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են՝	

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ կազմակերպված խմբի կողմից. 2) պաշտոնեական դիրքն օգտագործելով՝ պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրհինսնապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մեկից երեք տարի ժամկետով կամ առանց դրա:	

Աղյուսակ 3. Խտրականություն

Հայաստանի սահմանադրությունն արգելում է խտրականությունը մի շարք հիմքերով և նախատեսում է միջոցներ: Չկա խտրականության դեմ պայքարի հատուկ օրենք (իրավիճակային վերլուծություն):

| **Խտրականության մշտադիտարկման սահմանումը (վերցված է ՌԱԵՀ թիվ 6 ԸՔՀ-ից՝ ներառելու խտրականության բոլոր ձևերը).**

«խտրականություն» նշանակում է ցանկացած տարբերակված վերաբերմունք, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն հիմնված է փաստացի կամ ընկալելի սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկական կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի կամ դավանանքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային փոքրամասնությանը պատկանելության, գույքային վիճակի, ծնունդի, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքների վրա, որը չունի օբյեկտիվ և ողջամիտ արդարացում: | **Մեկնաբանություններ/ առաջարկություններ** |
| ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

(...) | Սահմանադրական դրույթներ |

Հոդված 23. Մարդու արժանապատվությունը Մարդու արժանապատվությունն անխախտելի է: **Հոդված 28. Օրենքի առջև ընդհանուր հավասարությունը** Բոլորը հավասար են օրենքի առջև: **Հոդված 29. Խտրականության արգելքը** Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է: **Հոդված 30. Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը** Կանայք և տղամարդիկ իրավահավասար են:	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ **Հոդված 52. Մարդու իրավունքների պաշտպանին դիմելու իրավունքը** Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իր իրավունքների և ազատությունների խախտման դեպքում Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը ստանալու իրավունք: Մանրամասները սահմանվում են օրենքով:	

Հոդված 61. Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը 1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք: 2. Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, ունի իր իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունք:	
Խտրականության բացառման հիմնարար իրավունքը նախատեսված է Սահմանադրության 29-րդ հոդվածում՝ ռասայի, մաշկի գույնի, տարիքի, գույքային վիճակի, լեզվի, էթնիկական կամ սոցիալական ծագման, կրոնական դավանանքի և այլ հիմքերով: Վերջում էական հիմքերի ցանկը եզրափակվում է *«անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներ»* լայնորեն սահմանված հասկացությամբ: Հաշվի առնելով, որ սահմանադրական դրույթը չի սահմանում այնպիսի հիմքեր, ինչպիսիք են գենդերային ինքնությունը կամ սեռական կողմնորոշումը, վերոնշյալ լայն դրույթը կարող է ներառել այդ հիմքերը, որպեսզի դրանք արտացոլվեն օրենսդրական ակտերում: Հարկ է նշել, որ Հայաստանը վավերացրել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 12-րդ Արձանագրությունը, որը լրացնում է ընդհանուր խտրականության արգելքի մասին վերը նշված սահմանադրական հայեցակարգը:	
«ընդհանուր 143-րդ հոդվածը, որով մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների ուղղակի կամ անուղղակի ոտնահարումը հիմնված է այնպիսի բնորոշ հատկանիշների վրա, ինչպիսիք են ռասան, մաշկի գույնը, էթնիկական ծագումը, տարիքը, սեռը, քաղաքական կամ այլ հայացքները և	Սա հանցագործություն է: Այն ներառված չէ ատելության հիմքով հանցագործությունների մասին օրենքում, քանի որ խտրականությանը

այլն, սահմանվում է որպես հանցագործություն»։ Իրավիճակային վերլուծությունից։	վերաբերող դրույթ է։ Համապատասխան դիտարկումը Իրավիճակային վերլուծությունից՝ «գործնականում այս հոդվածը հազվադեպ է կիրառվել՝ հաշվի առնելով դրա անորոշությունը և անհստակությունը»
Քաղաքացիական օրենսգրքի հոդված 1087.1-ն ապահովում է վիրավորանքի ու զրպարտության համապարփակ շրջանակ։	Ըստ իրավիճակային վերլուծության՝ «այս դրույթը, որը ներառվել է օրենքում 2010 թվականի մայիսին, հարուցել է մի շարք քաղաքացիական վեճեր և դատական գործեր՝ ձևավորելով զրպարտության մասին կայուն և լավ մշակված իրավագիտական հիմք։ Հաճախ այս շրջանակն օգտագործվում է ատելություն սերմանող խոսքը քաղաքացիական վեճերում վիճարկելու նպատակով։ Սակայն կա նաև անորոշություն՝ կապված ատելություն սերմանող խոսքի չափերի հետ, որն առաջացնում է քաղաքացիական, այլ ոչ թե քրեական պատասխանատվություն։ Քաղաքացիական օրենսգիրքը և ընդհանրապես քաղաքացիական իրավունքը չի պարունակում հստակ սահմանումներ և դատական պրակտիկա

	ատելություն սերմանող խոսքի հետ կապված»:

Աղյուսակ 4.
Այլ հոդվածներ, որոնք ներառում են ցեղասպանությունը և մարդկության դեմ կատարված հանցագործությունները

Առաջարկվում է, որ այս դրույթները նշվեն ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ դրույթներից առանձին՝ միջազգային նորմերին համապատասխան՝ առավել հստակ տարբերակման նկատառումով: «Ատելության հիմքով հանցագործությունների մասին օրենքներ. Գործնական ուղեցույց» վերնագրով իր հրապարակման մեջ ԺՀՄԻԳ-ն առաջարկում է այս դրույթները դիտարկել ատելության հիմքով հանցագործություններից առանձին:

> «Ցեղասպանության միջազգային հանցագործությունը երբեմն ներառվում է ատելության հիմքով հանցագործությունների մասին օրենքների քննարկման շրջանակներում: Թեև ներպետական իրավունքը կարող է արգելել ցեղասպանությունը և այլ հարակից հանցագործությունները՝ որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություններ, այս համատեքստում դրանք չեն նկարագրվում որպես ատելության հիմքով հանցագործություններ: Ցեղասպանությունը պահանջում է ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խումբ լրիվ կամ մասնակի ոչնչացնելու մտադրություն: Սա որակապես և քանակապես տարբերվում է ատելության հիմքով հանցագործություններից, ինչպեսև միջազգային իրավունքում նախատեսված բոլոր այն հանցագործությունները, որոնք ենթադրում են համատարած, համակարգված բռնություններ: Այդպիսի միջազգային հանցագործություններից բխող օրենսդրական, քննչական և դատախազական խնդիրները միանգամայն տարբերվում են այն խնդիրներից, որոնք ի հայտ են գալիս ատելության հիմքով հանցագործությունների հետ կապված»[51]:

[51] ԺՀՄԻԳ (2009թ.), էջ 24ã:

Գործնականում այս դրույթների ներգրավումը քիչ է հավանական։

392 (արտաքսումը, ապօրինաբար կալանքի տակ պահելը, ստրկացնելը, առանց դատի զանգվածային և պարբերական մահապատիժներ կիրառելը և այլն), 393 (ցեղասպանություն կատարելը), 397[1] հոդված 390 (միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումները զինված ընդհարումների ժամանակ, որոնք կատարվել են ապարտեիդի, ռասայական խտրականության, անձի արժանապատվությունը նվաստացնող և այլ ոչ մարդասիրական կամ նվաստացուցիչ գործողությունների դրդապատճառներով)։	

Հավելված 2. Տվյալների հավաքման ձևաթղթերի նախագիծ

Ձևաթուղթ XX (լրացվելուց հետո գաղտնի է)

Ատելության հիմքով հնարավոր հանցագործության» մասին հաղորդման ձևաթուղթ

Մաս 1- Ոստիկանության համար

Եզակի հերթական համար	/տարի

1. **Հանցագործության վերաբերյալ մանրամասներ**

Ա) Հիմնական հանցագործության տեսակը (օգտագործել հանցագործությունների դասակարգման ներկա կատեգորիաները)

Բ) Հանցագործության/միջադեպի ամսաթիվը
Բ1) Հաղորդվել է
Բ2) Հանցագործության ժամանակը (սկիզբ և ավարտ)

Գ) Հանցագործության վայրը. *ամբողջական հասցե*

Դ) Հանցագործության մանրամասները (Հակիրճ նկարագրեք միջադեպը, ներառյալ ժամանակահատվածը, հանցագործների քանակը, հանցագործության վայրը, թե արդյոք առկա էին որևէ կանխակալության ցուցիչներ(օրինակ՝ ռասիստական արտահայտություններ կամ սիմվոլներ), որևէ այլ վերաբերելի տեղեկատվություն)

2. **Արձանագրող աշխատակից**

Ա) Կոչում/անուն
Բ) ID համար
Գ) Աշխատանքի վայր
Դ) Հեռախոս
Ե) Էլ-փոստ

3. Հանցագործության/միջադեպի տեսակը

(Բոլոր համապատասխան տարբերակները նշեք «X»)

Ա) Ռասա	Ո՞ր ռասայական խումբը			
Բ) Սեռ	տղամարդ	կին	այլ	
Գ)Սեռական կողմնորոշում	հետերոսեքսուալ	լեսբի	գեյ	բիսեքսուալ
Դ)Գենդերային ինքնություն				
Ե) Տարիք	նշեք տարիքային խումբը			
Զ) Կրոն	նշեք կրոնը			
Է)Քաղաքական կամ այլ կարծիք	Ո՞ր կարծիքը			
Ը)Հաշմանդամություն	նշեք խումբը			
Թ)Գույք, սոցիալական կարգավիճակ կամ բնակություն				
Ժ) Այլ խտրական հիմքեր				

4. **Տուժողի վերաբերյալ մանրամասներ**

Ա) Անուն
Բ) Ծննդյան ամսաթիվ
Գ) Հասցե
Դ) Հեռախոս
Ե) Էլ-փոստ
Զ) Էթնիկ ինքնորոշում
Է) Սեռը
Ը) Հաղորդակցվում է մայրենի լեզվով Ա/Ո

Եթե ոչ, ապա ինչ լեզվով

Թ) Ծնողի, խնամատարի կամ ներկայացուցչի անունը, կապը տուժողի հետ և կոնտակտային տվյալները (անհրաժեշտության դեպքում)

Ժ) Ինչպե՞ս է տուժողը ցանկանում հաղորդակցվել

Ցանկացած եղանակով Խնամատարի/ներկայացուցչի միջոցով Այլ (նշեք)

Որոշ տուժողների դեպքում կարող է անհրաժեշտ լինել նրբանկատ մոտեցում, եթե նրանք պետք է վստահեն իշխանություններին հանցագործությունների մասին հաղորդում տալիս: Այդպիսի օրինակները կարող են ներառել, սակայն չսահմանափակվել՝

- *Միասեռական տուժող, որը չի բացահայտել իր սեռական կողմնորոշումն ընտանիքի անդամների կամ աշխատանքային գործընկերների շրջանում:*
- *Հարևանների կողմից ռասիզմի դրսևորման զոհ, որի նկատմամբ կարող է մեծանալ նրանց թշնամանքը՝ տեսնելով, որ իրենց հասցեով ոստիկաններ են գալիս:*

ԺԱ) Տուժողների հատուկ կարիքները

Գրանցեք այստեղ այն կարիքները, որ կարող է ունենալ տուժողը ցուցմունք տալու համար: Դա կարող է ներառել, սակայն չսահմանափակվել հետևյալով. նրանք վախենում են իրավախախտի կողմից ահաբեկման ենթարկվելուց, ունեն հաղորդակցման հատուկ կարիքներ, օրինակ՝ թարգմանչի պահանջ, կամ ունեն ֆիզիկական սահմանափակումներ դատարանի հասանելիության հետ կապված և այլն:

ԺԲ) Ստացված վնասվածքները (ներառյալ՝ հոգեբանական վնասը)

ԺԳ) Ստացվել է հայտարարություն (Ա/Ո) Ամսաթիվ _____

5.**Կողմնակալության ցուցիչներ**

Ա) Կողմնակալության ի՞նչ ցուցիչներ է նշել արձանագրողը (նշեք բոլոր համապատասխան տարբերակները)

Բ) Ապացույցներ կցվել են գործին Ա/Ո

Գ) Տուժողի ընկալմամբ հանցագործության շարժառիթն առնվազն մասամբ եղել է անհանդուրժողականությունը Ա/Ո

Դ) Ոստիկանի ընկալմամբ դա այդպես է Ա/Ո

Ե) Մեկ այլ անձի ընկալմամբ դա այդպես է (Նշեք ում)

Կողմնակալության ցուցիչների ցուցակ (ոչ սպառիչ) **<u>Մեկնաբանություններ, գրավոր հայտարարություններ, ժեստեր կամ գրաֆիտի</u>** 1. Կասկածյալը մեկնաբանություններ, գրավոր հայտարարություններ կամ ժեստեր արե՞լ է տուժողի համայնքի վերաբերյալ:

2. Դեպքի վայրում թողե՞լ են նկարներ, նշումներ, խորհրդանիշներ կամ գրաֆիտի։
3.Եթե թիրախը եղել է գույք, արդյո՞ք դա կրոնական կամ մշակութային նշանակություն ունեցող օբյեկտ է կամ վայր, ինչպես օրինակ՝ պատմական հուշարձան կամ գերեզմանոց։

Ռասայական, էթնիկ, գենդերային և մշակութային տարբերություններ

4. Կասկածյալը և տուժողը տարբերվու՞մ են իրենց ռասայական, կրոնական կամ էթնիկ/ազգային պատկանելությամբ կամ սեռական կողմնորոշմամբ։
5. Կա՞ արդյոք թշնամանքի պատմություն տուժողի և կասկածյալի խմբերի միջև։
6. Տուժողը որևէ խմբի անդա՞մ է, որի նկատմամբ մյուս խումբն իր անդամների թվաքանակով գերակշիռ դիրք ունի այն տարածքում, որտեղ տեղի է ունեցել միջադեպը։
7. Տուժողը ներգրավված եղե՞լ է իր խումբը խթանող գործունեության մեջ միջադեպի պահին։
8. Արդյո՞ք միջադեպը տեղի է ունեցել հատուկ նշանակություն ունեցող օր (օրինակ՝ կրոնական կամ ազգային տոն)։

Կազմակերպված ատելության խմբեր

9. Դեպքի վայրում թողե՞լ են առարկաներ կամ իրեր, որոնք կարող են վկայել, որ հանցագործությունը կատարել է որևէ ռազմականացված կամ ծայրահեղական ազգայնական կազմակերպություն։
10. Մոտակայքում կա՞ն այդպիսի խմբի ակտիվության ապացույցներ (օրինակ՝ պաստառներ, գրաֆիտի կամ թռուցիկներ)։

Կողմնակալություն ենթադրող նախկին հանցագործություններ/միջադեպեր

11. Համանման միջադեպեր եղե՞լ են այդ նույն տարածքում։ Ովքե՞ր էին տուժողները։
12. Տուժողը ստացե՞լ է սպառնալիքներով նամակ կամ հեռախոսազանգեր, կամ ենթարկվե՞լ է վերբալ սպառնալիքի թիրախավորված խմբի հետ կապ ունենալու կամ դրան անդամակցելու պատճառով։
13. Տուժողը եղե՞լ է որոշակի խմբի հետ սովորաբար ասոցացվող տարածքում կամ վայրում կամ դրա մոտակայքում (օրինակ՝ համայնքային կենտրոն կամ մզկիթ, եկեղեցի կամ երկրպագության որևէ այլ վայր)։

6. Կասկածյալի վերաբերյալ մանրամասներ

Ա) Հայտնաբերվե՞լ է մեկ կամ մի քանի կասկածյալ (Ա/Ո) (*Նշում. Եթե այո, անցեք հաջորդ էջ Բաժին 7)*

Բ) Եթե բոլոր հարցումների ավարտին որևէ կասկածյալ չի հայտնաբերվել, տուժողը տեղեկացվում է _____ կողմից

Եթե հարցաթերթիկը լրացնելիս կասկածյալը չի հայտնաբերվել, կարիք չկա պատճեն ուղարկել դատախազություն, սակայն պատճեն անհրաժեշտ է ուղարկել

համակարգող համապատասխան մարմին

Գ) Լրացրեք ստորև, եթե կասկածյալն անհայտ է
Գ1) Արդյո՞ք իրավախախտի էթնիկ պատկանելությունը հայտնի է վկաներին (Ա/Ո) Մանրամասները
Գ2) Արդյո՞ք իրավախախտի սեռը հայտնի է վկաներից (Ա/Ո) Մանրամասները
Գ3) Արդյո՞ք իրավախախտի կրոնը հայտնի է վկաներից (Ա/Ո) Մանրամասները

Անուն
Ամսաթիվ

7.Կասկածյալի վերաբերյալ մանրամասներ

Կասկածյալ 1.
(Ստորև ավելացրեք յուրաքանչյուր կասկածյալի վերաբերյալ տվյալներ)
Ա) Անուն
Բ) Ծննդյան ամսաթիվ
Գ) Հասցե
Դ) Էթնիկ ինքնորոշում
Ե) Սեռ
Զ) Հաղորդակցվում է ազգային լեզվով Ա/Ո Եթե ոչ, ապա ինչ լեզվով
Է) Քրեական գործի համար

8. Լրացնելը

Հարցաթերթիկը լրացնող աշխատակցի ստորագրությունը
Անուն և ամսաթիվ

Այս ձևաթղթի պատճեն կցեք դատախազություն ուղարկվող գործին
Անհրաժեշտ է նաև պատճեն ուղարկել համապատասխան պատկան մարմին [ավելացնել համապատասխան հաստատության/նախարարության անվանումը և կոնտակտային տվյալները]

Ձևաթուղթ XX (լրացվելուց հետո գաղտնի է)

Ատելության հիմքով հնարավոր հանցագործության» մասին հաղորդման ձևաթուղթ
Մաս 2- Դատախազության համար

Եզակի հերթական համար	/տարի

1. **Ուսումնասիրող իրավաբան**

Ա) Անուն

Բ) Աշխատավայրի հասցե

Գ) Հեռախոս

Դ) Էլ-փոստ

2. **Քննիչների ուսումնասիրություն**

Ա) Առաջնային ուսումնասիրման ամսաթիվ

Բ) Ուսումնասիրումը բավարար ապացույցներ գտե՞լ է ապացույցների շեմային չափանիշին հասնելու համար (Ա/Ո կամ վերադարձվել է հետագա հարցումների համար)

Գ) Եզրափակիչ ուսումնասիրման ամսաթիվ (եթե գործն ուսումնասիրվել է մեկից ավելի անգամ)

Դ) Գործը բավարարե՞լ է ապացույցների շեմային չափանիշին մեղադրանք առաջադրելու համար (Ա/Ո) Եթե ոչ, անցում կատարեք դատարանի բաժին

Ե) Գործը բավարարե՞լ է հանրային շահի չափանիշին մեղադրանք առաջադրելու համար (Ա/Ո)

Զ) Բավարար ապացույցներ կա՞ն՝ դատարանին միջնորդություն ներկայացնելու հաշվի առնել 63-րդ հոդվածով նախատեսված պատժի նշանակման իրավասությունները (Ա/Ո)

Է) Նշեք պատճառը, եթե Ե. կետին պատասխանել եք Ոչ

Ը) Ապացուցված մեղադրանքներ

3. Լրացնելը

Ա) Տուժողը տեղեկացված է դատախազության որոշման մասին _____
Բ) Հետազոտող իրավաբանը տեղեկացվել է _____
Գործը լրացնող իրավաբանի ստորագրությունը և անունը

Լրացրած պատճեն ուղարկեք Դատարանի վարչակազմին էլ. Փոստով և համապատասխան պատճենն ուղարկել պատկան մարմին:

Ձևաթուղթ XX (լրացվելուց հետո գաղտնի է)

Ատելության հիմքով հնարավոր հանցագործության»
մասին հաղորդման ձևաթուղթ
Մաս 3- Դատարանների համար

Դատական հերթական համար	/տարի

1. Դատական արդյունք

Ա) Տուժողին աջակցություն. Միջոցներ ձեռնարկվե՞լ են տուժողների հատուկ կարիքները հոգալու համար (օրինակ՝ թարգմանիչներ)
Բ) Գործը լսվե՞լ է դատարանում
Գ) Նշեք պատճառը (եթե չի լսվել)
Դ) Եզրափակիչ դատական նիստի ամսաթիվը
Ե) Վերջնական վճիռը ներկայացնող դատարան
Զ) Դատական արդյունքը
Է) Դատարանը հաշվի առե՞լ է 63 հոդվածի իրավասությունները (Ա/Ո)
Ը) Նշեք պատճառը, եթե հաշվի չի առել
Թ) Պատժի նշանակման մանրամասները

2. Լրացնելը

Ա) Տուժողը տեղեկացված է արդյունքի մասին
Գործն արձանագրող պաշտոնյայի ստորագրությունը և անունը և ամսաթիվը _____

Նշում լրացնող աշխատակցի համար. Լրացրած պատճեն ուղարկեք [ավելացնել

համապատասխան համակարգող մարմնի անվանումը]_____

Հավելված 3.
Ատելության հիմքով հանցագործությունների դեպքերի արձանագրման և տվյալների հավաքագրման ներկա և առաջարկվող գործընթացները և դերերն ու պարտականությունները

Այս բաժնում ամփոփվում է ատելության հիմքով հանցագործությունների արձանագրմանը և տվյալների հավաքագրմանը Հայաստանի ներկա մոտեցումը[52], ինչպես նաև համախմբվում են այս բաժնի առաջարկությունները՝ ներկայացնելով արձանագրման ձևաթղթերի օրինակներ և ուղենիշներ (տե՛ս Հավելված 2)։ Նպատակն է հիմք ծառայել շահակիր կողմերի միջև քննարկումների համար, որոնք պետք է հաշվի առնեն, թե ինչ չափով կարող է առաջարկվող մոտեցումը ներառվել հանցագործությունների արձանագրման ներկա և առաջարկվող գործընթացներում և ընթացակարգերում (տե՛ս առաջարկություն 1)։

Մոտեցման ամփոփ նկարագիրը

Ոստիկանության տեղեկատվական կենտրոնը, Գլխավոր դատախազությունը, դատարանները և Մարդու իրավունքների պաշտպանը պարբերաբար զեկույցներ են ներկայացնում հանցագործությունների և մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ։ Սակայն նրանցից ոչ մեկը ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ տարանջատ տվյալներ չի հավաքագրում և չի մշակում։

Ատելության հիմքով հանցագործությունների դեպքերի արձանագրման և տարանջատ տվյալների հավաքագրման քայլեր	**Թերություններ**
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ	
Քայլ 1 Ոստիկանությունն արձանագրում է միջադեպը՝ օգտագործելով արձանագրման քարտը (տե՛ս հավելված 2, Իրավիճակային վերլուծություն)	

52 Մանրամասն նկարագրության համար տե՛ս իրավիճակային վերլուծության զեկույցը։

Քայլ 2 Ոստիկանության քննիչներն արձանագրում են հանցագործությունները՝ օգտագործելով Հանցագործությունների մասին հաղորդումների վիճակագրական քարտը։ Ոստիկանությունը տասն օր ունի դեպքը քննելու և որոշելու, թե արդյոք այն հասնում է հանցագործության՝ արձանագրման ենթակա շեմին։ Եթե գործը ենթակա է արձանագրման, ապա Վիճակագրական քարտը լրացվում է, ուսումնասիրվում է վերադասի կողմից և ուղարկվում ոստիկանության տեղեկատվական կենտրոն։ Քարտը կազմված է 39 հարցից և լրացվում է «Ուղենիշ 15-ի համաձայն»։ Միջադեպերն արձանագրվում են ըստ կասկածյալի/հանցավորի անվան, այլ ոչ թե ըստ հոդվածի կամ հանցագործության բնույթի, ինչպես սահմանված է Քրեական օրենսգրքում։ Այսպիսով, հանցագործության բնույթը կամ Քրեական օրենսգրքի հոդվածը հիմնական տվյալներ չեն, որոնց հիման վրա կատարվում է տվյալների հավաքագրումը և մշակումը։	Քայլ 2 Ատելության հիմքով հանցագործությունների ընդհանուր սահմանում կամ գործառնական սահմանումներ չկան։ Վիճակագրական քարտի մի շարք տվյալների կետերը հնարավորություն են ընձեռում ներառել ատելության հիմքով հանցագործությունների և միջադեպերի վերաբերյալ տվյալներ։ 25-րդ կետով հնարավորություն է տրվում ներառել և արձանագրել ատելության շարժառիթների վրա հիմնված լրացուցիչ տվյալներ։ 13-րդ կետով հնարավորություն է տրվում մուտքագրել ազատ տեքստ, որը կարելի է օգտագործել կանխակալության ցուցիչների կամ դրանց հետ կապված այլ տեղեկությունների արձանագրման համար։ 30-րդ կետը ոստիկանությանը թույլ է տալիս ներառել «զոհերի բնորոշ հատկանիշները», ինչը կարող է ատելության հիմքով հանցագործությունների կամ միջադեպերի անուղղակի ցուցիչ լինել։ Այս տվյալները հիմք են տրամադրում այնպիսի քաղաքականության համար, որի համաձայն իրականացվում է ատելության հիմքով հանցագործությունների արձանագրում և տվյալների հավաքագրում Հավելված 2-ով տրամադրված ձևաթղթի նպատակների լույսի ներքո։
Քայլ 3 Տվյալները ստացվում և մշակվում են	Քայլ 3 Վերջնական վիճակագրությունը

ոստիկանության տեղեկատվական կենտրոնի կողմից։ Ոստիկանության տեղեկատվական կենտրոնը տվյալներ է հավաքում իրավապահ մարմիններից, քննչական և դատախազական մարմիններից, ինչպես նաև դատարաններից և քրեակատարողական հիմնարկներից։ Տեղեկատվական կենտրոնը հավաքագրում և մշակում է հանցագործությունների վերաբերյալ տվյալները՝ ըստ հանցագործությունների տեսակների, ինչպես դասակարգված է Քրեական օրենսգրքում։ Մասնավորապես՝ հանցագործությունների վերաբերյալ տեղեկությունը մուտքագրվում է տվյալների շտեմարան՝ ըստ Քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածի և ենթաբաժնի, որում նշված է հանցագործության հատուկ ասպեկտը, ինչպես օրինակ՝ ծանրացուցիչ հանգամանքները։ Եթե ծանրացուցիչ հանգամանքը վերաբերում է ատելության շարժառիթին, ապա հավելյալ պարզաբանում պետք է մուտքագրվի, թե ատելության կոնկրետ որ շարժառիթի մասին է խոսքը (ազգային, էթնիկական կամ միայն կրոնական)։	տվյալներ չի տրամադրում ըստ առանձին շարժառիթի։ Կենտրոնը կազմում է կիսամյակային կամ տարեկան վիճակագրություն։
Քայլ 4 Ոստիկանության տեղեկատվական կենտրոնի ուղենիշները տրամադրում են տվյալների դասակարգման 28 մանրամասն հիմքեր՝ հատուկ կոդերով։ Ուղենիշ 14-ում տրամադրված է հանցագործությունների շարժառիթների ցանկը, որոնց թվում սահմանված են ատելության հինգ շարժառիթ՝ նշված որպես	Քայլ 4 Սակայն այս տարանջատման պրակտիկային հետևողական կերպով չեն հետևում։ Դրա պատճառը կարող է լինել այն, որ ուղենիշները մշակվել են ավելի վաղ՝ որպես հանցագործությունների դասակարգման լրացուցիչ, այլ ոչ՝ պարտադիր գործիքներ։ **Դիտարկում՝** ուղենիշները

«ռասայական», «ազգային», «կրոնական», «այլ անձնական» և «այլ շարժառիթներ», և որոնք կոդավորված են համապատասխանաբար 90, 91, 92, 95 և 99 թվերով: Այսպիսով, երբ հանցագործությունն արձանագրվում է թղթային կամ էլեկտրոնային տվյալների շտեմարանում, նշվում է ոչ միայն Քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածը, այլև հանցագործության վերոնշյալ շարժառիթներին համապատասխանող կոդը:	հնարավորություն են ընձեռում ատելության այլ շարժառիթներ ներառել, նույնիսկ եթե դրանք օրենքում ընդգրկված չեն: Սա հուսադրող նախադեպ է ստեղծում հանցագործությունների արձանագրման չափանիշներում կանխակալության շարժառիթների ներառման համար, որոնք ներկայում Քրեական օրենսգրքում ընդգրկված չեն53: Առաջարկել, որ առկա ուղենիշները հիմք ծառայեն վերջնականորեն փոխհամաձայնեցված ուղենիշների համար: Այդ դեպքում անհրաժեշտ կլինի նշված ուղենիշների թարգմանված օրինակը:
Քայլ 5 Դատախազության մասին օրենքի Հոդված 5(5)-ի համաձայն՝ նախաքննության մարմինները յուրաքանչյուր տարի մինչև փետրվարի 1-ը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն են ներկայացնում նախորդ տարվա ընթացքում կատարված հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ տեղեկություններ և վիճակագրական տվյալներ: Այս ընթացակարգը կանոնակարգվում է Կառավարության 2008 թ. հոկտեմբերի 23-ի N 1225-Ն որոշմամբ, որով նաև տրամադրվում են վիճակագրական տվյալների հավաքագրման և մշակման ձևաթղթերը: Որոշմամբ սահմանվում են ամսական, երկամյա և տարեկան	Քայլ 5 Գոյություն ունի ոստիկանության և դատախազության միջև վիճակագրական տվյալների փոխանակման հստակ մեխանիզմ, ինչը դրական է: Պարզվում է, որ չկա որևէ մեխանիզմ երկու մարմինների միջև «իրական ժամանակում» կանխակալության ցուցիչների կամ զոհի անվտանգության վերաբերյալ տվյալների փոխանակման համար: Ընդհանուր սահմանման շուրջ համաձայնություն ձեռք բերելու դեպքում տվյալները հնարավոր կլինի տարանջատել՝ ըստ կանխակալության շարժառիթի և հանցագործության տեսակի:

53 Այս փորձին հետևում են Անգլիայում և Ուելսում, Իռլանդիայում և Իտալիայում:

կտրվածքով իրականացված և ավարտված քննությունների թվի վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման ձևաթղթերը: Տվյալները դասակարգվում են ըստ Քրեական օրենսգրքի հոդվածների:	
ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ	
Քայլ 6 Դատախազությունն իր ներկա համակարգում չի կիրառում «ատելության հիմքով հանցագործություններ» կատեգորիան:	Քայլ 6 Դատախազությունը չունի ատելության հիմքով հանցագործությունների տվյալների տարանջատման մեխանիզմներ: Որպես ատելության հիմքով հանցագործություններ արձանագրվող միջադեպերը քննվում են սովորական դեպքերի նման: Այս հարցը պետք է լուծվի ամբողջ համակարգում ատելության հիմքով հանցագործությունների ընդհանուր սահմանում ընդունելու միջոցով:
ԴԱՏԱՐԱՆՆԵՐ	
Քայլ 7 Դատական դեպարտամենտը հավաքում է ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ տվյալները՝ կիրառելով համեմատաբար առաջադեմ մեթոդ, երբ քրեական իրավունքի դրույթների համար օգտագործվում են վիճակագրական կոդեր, և դրանց խմբավորումը՝ ըստ պատճառված առանձին վնասների, օրինակ՝ «քաղաքացիների կյանքին և առողջությանն ուղղված հանցագործություններ»: Յուրաքանչյուր ցուցիչի և Քրեական	Քայլ 7 Դատարանները չունեն ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ տվյալների տարանջատման մեխանիզմներ: Տրամադրվում են միայն միասնական տվյալներ՝ ըստ Քրեական օրենսգրքի յուրաքանչյուր հոդվածի՝ առանց նշելու, թե արդյոք հանցագործությունը կատարվել է ծանրացուցիչ հանգամանքներով, թե, ինչպես նշված է ներպետական օրենսդրությունում, որակելով հանցագործության օբյեկտիվ ասպեկտները: Ինչպես արդեն վերը նշվեց, ատելության շարժառիթն

օրենսգրքի համապատասխան հոդվածի ներքո տրամադրվում է վիճակագրական տվյալ, որը ցույց է տալիս կայացված վճիռների թիվը, բողոքարկված գործերի թիվը, ուժի մեջ մտած դատական որոշումների թիվը, հաշվետու ժամանակահատվածում կայացված դատական որոշումների թիվը և այլն։	այդպիսի ծանրացուցիչ հանգամանքներից մեկն է՝ համաձայն Քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի։ Առարկայական զեկույցում տվյալների մշակման միասնական մեթոդը չի կարող ի հայտ բերել, թե արդյոք տվյալ տեղեկությունները ներառում են հանցագործություններ ծանրացուցիչ հանգամանքներով, ինչպիսին ատելության շարժառիթն է, ինչը նշված ընդհանուր հոդվածով նախատեսված հանցագործությունների բաղադրիչներից մեկն է։ Դատական համակարգը կարող էր նկատի առնել «ատելության հիմքով հանցագործություններ» վիճակագրական խումբ ստեղծելու և Քրեական օրենսգրքի դրույթի և 63-րդ հոդվածի շրջանակներում տարանջատում ապահովելու հարցը։
ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼ	
Ազգային վիճակագրական ծառայությունը հավաքագրում, մշակում և հրապարակում է հանցագործությունների վերաբերյալ ընդհանուր վիճակագրական տվյալներ։ Ծառայությունը հանցագործությունների վերաբերյալ պարբերաբար տվյալներ է ստանում ոստիկանության տեղեկատվական կենտրոնից, ինչը կանոնակարգվում է Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի «Վիճակագրական տեղեկությունների ներկայացման կարգը հաստատելու մասին» Կառավարության N 11-Ն որոշմամբ (2003թ. հոկտեմբերի 3) [54] :	Գոյություն ունեն տվյալների փոխանակման հստակ մեխանիզմներ։ Դա ենթադրում է, որ «ատելության հիմքով հանցագործությունները» որպես տվյալների կատեգորիա ավելացնելը՝ ըստ միջգերատեսչական սահմանման, հնարավոր կլինի։ Ազգային վիճակագրական հետազոտությունը հստակ տվյալներ չի տրամադրում Հայաստանում ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ։

54 Տե՛ս N 11-Ն որոշման հայերեն տեքստը այստեղ՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=47765

Համապատասխան զեկույցը տրամադրվում է Ազգային վիճակագրական ծառայությանը նախքան հաշվետու ժամանակաշրջանին հաջորդած ամսի տասներորդ օրը: Հանցավորության վիճակագրությունը խմբավորվում է ըստ վեց խմբերի:	

Քաղաքացիական հասարակության մի շարք կազմակերպություններ նույնպես մշտադիտարկում են ատելության հիմքով հանցագործությունների դեպքերը և տվյալներ ու տեղեկություններ հրապարակում: Այդպիսիք են Փինք Արմենիան, Նոր Սերունդը, Հելսինկյան կոմիտեն և Խտրականության դեմ պայքարի կոալիցիան, որոնք տվյալներ են հավաքագրում իրենց անդամ կազմակերպություններից: Այնուհանդերձ, նրանց մոտեցումը հետևողական չէ, իսկ տրամադրած քանակական տվյալները լիարժեք չեն: Տեղեկությունների մեծ մասը ներկայացված է դեպքերի ուսումնասիրության ձևաչափով:

Հավելված 4. Աղբյուրներ

Ոստիկանության քոլեջ (2014թ.), Ատելության հիմքով հանցագործությունների գործառնական ուղեցույց, ուղենիշներ, https://www.college.police.uk/What-we-do/Support/Equality/Documents/Hate-Crime-Operational-Guidance.pdf, մուտք է գործվել 2019թ. փետրվարի 20-ին։

Եվրոպայի խորհուրդ (2019թ.)։ «Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Դունյա Միյատովիչի զեկույցը 2018 թ. սեպտեմբերի 16-ից 20-ը Հայաստան կատարած այցից հետո», հասանելի է առցանց՝ https://search.coe.int/commissioner/Pages/result_details.aspx?ObjectId=090000168091f9d5#_Toc536200060, հրապարակվել է 2019թ. հունվարի 29-ին, [մուտք է գործվել 2019թ. նոյեմբերի 17-ին]։

Եվրոպական միության խորհուրդ (2013թ.), Խորհրդի 2013թ. դեկտեմբերի 6-ի 2013/JHA եզրակացությունները Եվրոպական միությունում ատելության հիմքով հանցագործությունների դեմ պայքարի վերաբերյալ, http://www.consilium.europa.eu/uedocs/cms_data/docs/pressdata/en/jha/139949.pdf, մուտք է գործվել 2019թ. փետրվարի 20-ին։

Եվրոպական միության խորհուրդ (2008թ.), Խորհրդի շրջանակային որոշում, քրեական իրավունքի միջոցով ռասիզմի և այլատյացության որոշակի ձևերի և արտահայտությունների դեմ պայքարի վերաբերյալ 2008թ. նոյեմբերի 28-ի 2008/913/JHA Որոշում, OJ 2008 L 328։

Եվրախորհրդարանի և Եվրոպայի խորհրդի 2012թ. հոկտեմբերի 25-ի 2012/29/ԵՄ հրահանգը սահմանում է հանցագործությունների զոհերի իրավունքների, աջակցության և պաշտպանության վերաբերյալ նվազագույն չափանիշներ, և փոխարինում Խորհրդի 2001/220/JHA շրջանակային որոշումը (Զոհերի իրավունքների հրահանգ)։

Եվրոպական հանձնաժողով (2018թ.), քրեական իրավունքի միջոցով ռասիզմի և այլատյացության որոշակի ձևերի և արտահայտությունների դեմ պայքարի վերաբերյալ Խորհրդի 2008/913/JHA շրջանակային որոշումների գործնական կիրառման մասին ուղեցույց, https://www.google.com/url?sa=t&rct=j&q=&esrc=s&source=web&cd=1&ved=2ahUKEwjSiey6gsffAhXKKo8KHa8sCLsQFjAAegQIBBAC&url=https%3A%2F%2Fec.europa.eu%2Fnewsroom%2Fjust%2Fdocument.cfm%3Fdoc_id%3D55607&usg=AOvVaw3FipG8p3yzxyO5qbhm4ppN, մուտք է գործվել 2019թ. փետրվարի 20-ին։

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի (ՌԱԵՀ) (ընդունված 2002թ., վերանայված 2017թ.) Ընդհանուր քաղաքականության թիվ 7 հանձնարարականը (վերանայված) ռասիզմի և ռասայական խտրականության դեմ պայքարի ներպետական օրենսդրության վերաբերյալ:

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողով (ՌԱԵՀ) (2007թ.) ՌԱԵՀ Ընդհանուր քաղաքականության թիվ 11 հանձնարարականը ոստիկանությունում ռասիզմի և ռասայական խտրականության դեմ պայքարի վերաբերյալ (2007թ.), https://www.coe.int/t/dghl/monitoring/ecri/activities/GPR/EN/Recommendation_N11/e-RPG%2011%20-%20A4.pdf, մուտք է գործվել 2019թ. փետրվարի 20-ին:

Հայաստանի վերաբերյալ ՌԱԵՀ զեկույց, հինգերորդ մշտադիտարկման շրջափուլ, պարբեր. 64: https://rm.coe.int/fourth-report-on-armenia/16808b5539

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողով, Ընդհանուր քաղաքականության թիվ 15 հանձնարարական ատելություն սերմանող խոսքի դեմ պայքարի վերաբերյալ (2015թ.), https://rm.coe.int/ecri-general-policy-recommendation-no-15-on-combating-hate-speech/16808b5b01, մուտք է գործվել 2019թ. փետրվարի 20-ին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարան (2015թ.) Վճիռ, Իդենթոբան և այլոք ընդդեմ Վրաստանի գործով, Ստրասբուրգ, 2015թ. մայիսի 12, https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-154400%22]}, մուտք է գործվել 2019թ. փետրվարի 20-ին:

Եվրոպական միության հիմնարար իրավունքների գործակալություն (ՀԻԳ) (2018թ.) Ատելության հիմքով հանցագործությունների դեպքերի արձանագրման և տվյալների հավաքագրման ԵՄ-ի պրակտիկան, FRAU, 2018թ. հունիս, https://fra.europa.eu/en/publication/2018/hate-crime-recording, մուտք է գործվել 2019թ. փետրվարի 20-ին:

Եվրոպական միության հիմնարար իրավունքների գործակալություն (ՀԻԳ) (2009թ.), Եվրոպական միության փոքրամասնությունների և խտրականության հետազոտություն, EU-MIDIS I , https://fra.europa.eu/en/project/2011/eu-midis-european-union-minorities-and-discrimination-survey, մուտք է գործվել 2019թ. փետրվարի 20-ին:

Եվրոպական միության հիմնարար իրավունքների գործակալություն (ՀԻԳ) (2018թ.) EU-MIDIS II. Եվրոպական միության փոքրամասնությունների և խտրականության երկրորդ հետազոտություն, https://fra.europa.eu/en/project/2015/eu-midis-ii-second-european-union-minorities-and-discrimination-survey, մուտք է գործվել 2019թ. փետրվարի 20-ին:

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն (ԵԱՀԿ), Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ (ԺՀՄԻԳ) (2009թ.), Ատելության հիմքով հանցագործությունների մասին օրենքներ. Գործնական ուղեցույց։

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն (ԵԱՀԿ), Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ (ԺՀՄԻԳ) (2014թ.), Ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ տվյալների հավաքագրման և մշտադիտարկման մեխանիզմներ. Գործնական ուղեցույց, 2014թ. սեպտեմբերի 29, http://www.osce.org/odihr/datacollectionguide, մուտք է գործվել 2019թ. փետրվարի 20-ին։

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն (ԵԱՀԿ) (2009թ.) Նախարարական խորհրդի 9/09 որոշում ատելության հիմքով հանցագործությունների դեմ պայքարի վերաբերյալ, 2009թ. դեկտեմբերի 2, www.osece.org/cio/40695?download=true, մուտք է գործվել 2019թ. փետրվարի 20-ին։

Perry, J. (պատրաստվում է տպագրության), Առերեսվելով բոլոր փաստերին, եվրոպական զեկույց, CEJI։

Փինք Արմենիա (2018թ.) «ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների իրավիճակը Հայաստանում, 2018թ. տարեկան զեկույց», հասանելի է առցանց՝ https://www.pinkarmenia.org/wp-content/uploads/2019/05/2018annualreview_en.pdf, մուտք է գործվել 2019թ. նոյեմբերի 19-ին։

Միացյալ Նահանգների Հետաքննությունների դաշնային բյուրո (2015թ.) Ատելության հիմքով հանցագործությունների տվյալների հավաքագրման վերաբերյալ ուղենիշներ և ուսումնական ձեռնարկ, https://ucr.fbi.gov/hate-crime-data-collection-guidelines-and-training-manual.pdf, մուտք է գործվել 2019թ. փետրվարի 20-ին։

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն (ԵԱՀԿ), Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ (ԺՀՄԻԳ) (2018թ.) Հունաստանում ատելության հիմքով հանցագործությունների դեմ պայքարի վերաբերյալ միջգերատեսչական համաձայնություն, https://www.osce.org/odihr/402260?download=true, մուտք է գործվել 2019թ. փետրվարին։

Եվրոպայի խորհրդի և ազգային փորձագետի կողմից սույն ծրագրի շրջանակներում տրամադրված փաստաթղթերը

«Հանցագործությունների մասին հաղորդումների լրացվող վիճակագրական քարտ». ոստիկանության կողմից լրացվող ձևաթուղթ, երբ սահմանվում է՝ արդյոք միջադեպը պետք է գրանցվի որպես հանցագործություն: (թարգմանված)

Կառավարության 2008 թ. հոկտեմբերի 23-ի N 1225-Ն որոշում, որը նախատեսում է նաև վիճակագրական տվյալների հավաքագրման և մշակման ձևանմուշներ. համապատասխան միասնական աղյուսակում բերվում են սույն Որոշման համաձայն համադրված տվյալներ:

Հայաստանի ելակետային ուսումնասիրություն (հասանելի է Եվրոոպային խորհրդին)

Մաս 2: Իրավիճակային վերլուծություն

Ներածություն

Սույն իրավիճակի վերլուծության զեկույցի նպատակն է ուսումնասիրել ատելության հիմքով կատարվող հանցագործությունների և ատելության խոսքի մասին տվյալների հավաքագրման և մշակման իրավական համակարգի և մեխանիզմների ներկայիս վիճակը Հայաստանում: Որպես Եվրոպայի խորհրդի Անդամ պետություն՝ Հայաստանը միջազգային պարտավորություն ունի՝ ստեղծելու խտրական գործելակերպի դեմ պայքարի արդյունավետ իրավական դաշտ և իրավական պաշտպանության մեխանիզմներ: Այդ պարտավորությունը ներառում է, մասնավորապես, ատելության խոսքի, ատելության հիմքով կատարվող հանցագործություններին և խտրականությանը վերաբերող տվյալների հավաքման և մշակման այնպիսի արդյունավետ մեխանիզմներ ունենալու պարտավորությունը, որոնք ի զորու են բացահայտել ոչ միայն այդ հանցագործությունների թիվը, այլ՝ ատելության հիմքով կատարվող հանցագործություն ներառող խտրական գործելակերպի միտումները: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է առկա մեխանիզմների փոխարեն ունենալ տվյալների հավաքագրման և մշակման տեսակավորված մեխանիզմներ, քանի որ, երբ տեղեկություններն հավաքագրվում են ամբողջացված՝ առանց տեսակավորման, ատելության շարժառիթով կամ խտրականության այլ շարժառիթներով կատարվող հանցագործություններն հաճախ մնում են չհայտնաբերված, ուստի նաև՝ չպատժված:

Հայաստանը չի իրագործել արդյունավետ միջոցառումներ խտրականության դեմ պայքարի իր օրենսդրությունը և պրակտիկան բարեփոխելու և եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ: Չնայած օրենքների բարեփոխման ուղղությամբ անցյալում ձեռնարկված քայլերին՝ երկիրը դեռևս չի ընդունել խտրականության դեմ պայքարի առանձին օրենք: Տղամարդկանց և կանանց հավասար իրավունքների մասին օրենքը («գենդերի մասին օրենքը») արդյունավետորեն կյանքի չի կոչվել, քանի որ հասարակությունում, ինչպես նաև իրավակիրառողների շրջանում դեռևս պահպանվում են խորարմատ կարծրատիպեր՝ կապված հավասարության տարբեր դրսևորումների և խտրականության բացառման սկզբունքի հետ: Դա ներառում է, նաեւ, իրավակիրառողների շրջանում փորձի և գիտելիքի պակասը, որն անհրաժեշտ է խտրական շարժառիթներով (անգլ.՝ «bias motivations») տեղի ունեցած գործերով զբաղվելու համար, ինչպես նաև՝ արդյունավետ փոխհատուցումն ապահովելու նպատակով՝ խտրական շարժառիթների գոյությունն արձանագրելու համար: Քրեական օրենսգիրքը չի պարունակում խտրականության շարժառիթներով կատարված հանցագործությունների դեմ պայքարի համար անհրաժեշտ կարևորագույն նյութաիրավական հիմքերը: Քրեական օրենսգիրքը խտրականության՝ որպես ատելության շարժառիթների տարրերի չափազանց նեղ հիմքեր է նախատեսում: Քրեական գործերով զբաղվող քննիչները, դատախազները և դատավորներն հաճախ չեն տիրապետում խտրականության բացառման կարևորագույն սկզբունքներին վերաբերող նվազագույն

գիտելիքին:Այնուամենայնիվ անհրաժեշտ է նշել, որ ներկայումս քրեական օրենսգիրքը և քրեական դատավարության օրենսգիրքը մշակման փուլում են, և նոր օրենսգրքերն արդեն դրվել էին հանրային քննարկման: Դեռ ավելին, 2020 թվականի մայիսի 21-ին ՀՀ Կառավարությունը հավանություն տվեց երկու օրենսգրքերի նախագծերին55: Հունիսի սկզբին դրանք ուղարկվել են ՀՀ Ազգային ժողով:

Քրեական արդարադատության համակարգի վերոհիշյալ թերացումները բացասաբար են ազդում ատելության հիմքով կատարվող հանցագործությունների, խտրականության և ատելության խոսքի վերաբերյալ տվյալների հավաքագրման և մշակման համակարգի վրա: Արձանագրված հիմնական թերությունն այն է, որ տվյալների բոլոր համակարգերը նախագծվել են Քրեական օրենսգրքի հիմնական դրույթներին համապատասխան՝ առանց հստակեցնելու հոդվածի համապատասխան մասը կամ կետը, որը նախատեսում է ատելության և խտրական շարժառիթներով կատարված հանցագործությունները: Տվյալների հավաքման այդօրինակ ամբողջացված մոտեցման պարագայում ատելության հողի վրա կատարված հանցագործությունները մնում են չբացահայտված: Համակարգային այս խնդիրը վերացնելու նպատակով առաջարկվում է համալիր մոտեցում: Մասնավորապես, հաշվի առնելով, որ իշխանությունները մտադիր են քրեական դատավարության և քրեական նոր օրենսգրքեր ընդունել, որոնցով ակնկալվում է կառուցվածքի և բովանդակության արդյունավետ փոփոխություններ կատարել քրեական արդարադատության համակարգում, առաջարկվում է այս պահն օգտագործել՝ քրեական և վարչական համակարգերում ներդնելու համար տվյալների տեսակավորված հավաքագրման համար անհրաժեշտ բոլոր սկզբունքները, նյութաիրավական հիմքերը և ընթացակարգերը: Մասնավորապես, առաջարկվում է հետևել Դատական դեպարտամենտի ձևավորած պրակտիկային և դասակարգիչներ (կոդեր) մշակել ատելության հիմքով կատարվող հանցագործություն և ատելության խոսք պարունակող բոլոր տեսակի հանցագործությունների համար: Դասակարգիչների լիարժեք համախումբ մշակելուց հետո առաջարկվում է դրանք ներդնել Ոստիկանությունում, քննչական մարմիններում և դատական համակարգում արդեն իսկ գործող ծրագրերում: Այս գործընթացին զուգահեռ՝ տվյալների մուտքագրման համար պատասխանատու բոլոր աշխատողներին անհրաժեշտ է վերապատրաստել՝ նրանց բացատրելով խտրականության բացառման, ատելության հիմքով կատարվող հանցագործությունների և ատելության խոսքի հետ կապված հիմնարար սկզբունքները: Լայնամասշտաբ այլ աշխատանքներ ևս կարելի է նախատեսել, ինչպես օրինակ՝ վերապատրաստման ծրագրերի մշակում պրակտիկ իրավաբանների համար:

55 Տես՝ http://moj.am/article/2718

Մեթոդաբանությունը

Իրավիճակի սույն վերլուծությունը կատարվել է 2019 թվականի հոկտեմբերից մինչև 2020 թվականի մայիսն ընկած ժամանակահատվածում՝ փաստաթղթերի հետազոտության և վերլուծության, ինչպես նաև դեմառդեմ հարցազրույցների միջոցով: Փաստաթղթերի հետազոտությունը ներառել է օրենսդրական ակտերի, Ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի, Գլխավոր դատախազության, Դատական դեպարտամենտի, իրավապաշտպան ՀԿ-ների և Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) գրասենյակի վիճակագրական զեկույցների և պարբերական ամփոփագրերի հետազոտությունը և վերլուծությունը: Ուսումնասիրվել են Եվրոպայի խորհրդի փաստաթղթերը՝ ներառյալ Ռասայական խտրականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի («ECRI»), ԵԽԽՎ-ի և Նախարարների կոմիտեի փաստաթղթերը՝ նպատակ ունենալով անդրադառնալ այդ մարմինների բարձրացրած համակարգային հիմնախնդիրներին: Հատուկ ուշադրության են արժանացել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի վիճակագրական տվյալները և ատելության հիմքով կատարվող հանցագործությունների թեմայով երկրի վերաբերյալ մի քանի տարի առաջ կազմված զեկույցը, որում ուսումնասիրվել են նաև տվյալների հավաքագրման մեխանիզմները:

Անցկացվել են դեմառդեմ հարցազրույցներ մի քանի պաշտոնատար անձանց, մասնավորապես՝ Ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի պետի տեղակալ պարոն Արման Աբովյանի, ՄԻՊ գրասենյակի ներկայացուցիչ տիկին Նինա Փիրումյանի, առաջատար փաստաբանների, դատախազների և այլ իրավաբանների, մասնավորապես՝ «Իրավական ուղի» ՀԿ-ի համահիմնադիր, փաստաբան Ռուբեն Մելիքյանի, քրեական օրենսգրքի և քրեական դատավարության օրենսգրքի մշակող հանձնաժողովի անդամ Աննա Մարգարյանի հետ: Հարցազրույցները և փաստաթղթերի հետազոտությունը և վերլուծությունն օգնել են հետազոտողին՝ ներկայացնել տվյալների հավաքագրման և վերլուծության վիճակի համապարփակ վերլուծություն Հայաստանի վերաբերյալ:

Օրենսդրական դաշտը

Խտրականության չենթարկվելու հիմնարար իրավունքն ամրագրված է Սահմանադրության 29-րդ հոդվածով, որի համաձայն արգելվում է խտրականությունը՝ կախված ռասայից, մաշկի գույնից, տարիքից, գույքային վիճակից, լեզվից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, կրոնից, և այլն: Նյութական հիմքերի թվարկումն ավարտվում է «*կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից*» ընդգրկուն արտահայտությամբ: Հաշվի առնելով, որ սահմանադրական դրույթը չի ներառում այնպիսի հիմքեր, ինչպիսիք են գենդերային ինքնությունը կամ սեռական կողմնորոշումը, վերոհիշյալ ընդգրկուն

ձևակերպումը կարող է ներառել այդ հիմքերը, մասնավորապես՝ օրենքներում դրանց արտացոլումն հնարավոր դարձնելու տեսանկյունից: Հարկ է նշել, որ Հայաստանը վավերացրել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 12 արձանագրությունը, որով լրացվում է խտրականության ընդհանուր արգելքի վերոհիշյալ սահմանադրական սկզբունքը:

Ավելին, Սահմանադրության 77-րդ հոդվածով նախատեսվում է հիմնական իրավունքների և ազատությունների չարաշահման արգելքը, որն իրականում հավասարազոր է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 17-րդ հոդվածում ամրագրված սկզբունքին: Դրանով արգելվում է հիմնական իրավունքների և ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային,էթնիկ, ռասայական, ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով: Ատելության հիմքով կատարվող հանցագործությունները և ատելության խոսքն արգելող սահմանադրական դրույթը փաստացի սա է:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 143-րդ հոդվածով նախատեսվում է ընդհանուր այն կարգավորումը, որով քրեականացվում է մարդու իրավունքներն ու ազատություններն ուղղակի կամ անուղղակի խախտելը՝ կախված ռասայից, մաշկի գույնից, էթնիկական ծագումից, տարիքից, սեռից, քաղաքական կամ այլ հայացքներից և այլն: Գործնականում, սակայն, այդ հոդվածն հազվադեպ է կիրառվել՝ հաշվի առնելով դրա անհստակությունը և անորոշությունը: Քրեական օրենսգրքով ընդհանուր առմամբ երկու տեսակի մոտեցումներ են սահմանված ատելության հիմքով կատարվող հանցագործությունների և ատելության խոսքի սահմանման հարցում: Առաջինի պարագայում՝ որպես առանձին ատելության հիմքով կատարվող հանցագործություններ են սահմանված որոշակի կոնկրետ գործողություններ: Դրանք են 226-րդ հոդվածով (ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելը), 392-րդով (մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները), 393-րդով (ցեղասպանությունը), 397[1] հոդվածով (ցեղասպանությունը և խաղաղության ու մարդկության անվտանգության դեմ ուղղված մյուս հանցագործությունները հերքելը, մեղմացնելը, դրանց հավանություն տալը կամ արդարացնելը) և 390-րդ հոդվածի որոշ դրույթներով (միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումները զինված ընդհարումների ժամանակ, որոնք կատարվել են ապարտեիդի կամ ռասայական խտրականության շարժառիթներով, կամ անձի արժանապատվությունը ստորացնելը, ոչ մարդասիրական և նվաստացնող այլ գործողությունները) նախատեսված հանցագործությունները: Կարևոր է նշել, որ վերջերս ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ են կատարվել, և ավելացվել է նոր 226.2 հոդվածը 56: Այն քրեական պատախանատվություն է նախատեսում «բռնություն գործադրելու հրապարակային կոչերի, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելու կամ քարոզելու համար»: Մասնավորապես, այն քրեականացնում է անձի կամ անձանց խմբի նկատմամբ բռնություն

56 Տես՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=141919

գործադրելու հրապարակային կոչերը, նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը: Հոդվածի կարևոր հատկանիշներից է լայն շրջանականով պաշտպանվող հիմքերի նախատեսումը: Հոդված 226.2-ը նախատեսում է «սեռը, ռասան, մաշկի գույնը, էթնիկական կամ սոցիալական ծագումը, գենետիկական հատկանիշները, լեզուն, կրոնը, աշխարհայացքը, քաղաքական կամ այլ հայացքները, ազգային փոքրամասնությանը պատկանելությունը, գույքային վիճակը, ծնունդը, հաշմանդամությունը, տարիքը կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքները» որպես ոչ սպառիչ պաշտպանվող հատկանիշների ցանկ: Կարևոր է նաև նշել, որ այս նույն ցանկն է օգտագործվել նաև քրեական օրենսգրքի նախագծում, որն արդեն ուղարկվել է Ազգային ժողով : Հետևաբար, կարող ենք ենթադրել, որ ցանկացած նոր փոփոխություն, ինչպիսին է հոդված 226.2-ը, պետք է որ համապատասխանի քրեական օրենսգրքի նախագծին:

Երկրորդ մոտեցման պարագայում՝ «*ազգային, էթնիկ կամ կրոնական ատելությունը*» Քրեական օրենսգրքով նախատեսվում են որպես օրենսգրքով նախատեսված հանցագործությունների համար պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ: Այս իմաստով՝ ընդհանուր բնույթ ունեցող 63(1) հոդվածով նախատեսվում է, որ հանցանքն ազգային, ռասայական կամ կրոնական ատելության շարժառիթով կատարելը պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ են: Ավելին, Օրենսգրքով նախատեսված մի քանի հանցանքներ սահմանվում են թե՛ հասարակ ձևով (օրինակ՝ հոդված 104 (սպանությունը)), թե՛ ծանրացնող հանգամանքներով (104 հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետ՝ ազգային, էթնիկ կամ կրոնական ատելության շարժառիթով կատարված սպանությունը): Մեկ այլ օրինակ է 112-րդ հոդվածը (դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը), որի 2-րդ մասի 12-րդ կետի համաձայն՝ որպես ծանրացնող հանգաման է նախատեսված, եթե հանցանքը կատարվել է ազգային, էթնիկ կամ կրոնական ատելության շարժառիթով):

Քրեական օրենսգրքում քննադատության ենթակա մոտեցումներից մեկն այն է, որ օրենսգրքում նախատեսվում են ատելության շարժառիթների ընդամենը երեք հիմքեր՝ ազգայինը, էթնիկը և կրոնականը, մինչդեռ խտրականության արգելված հիմքերի և ատելության հիմքով կատարվող հանցագործությունների հնարավոր շարժառիթների շրջանակը շատ ավելի լայն է և ներառում է խտրականության համընդհանուր արգելքի հայեցակարգը: Օրենսդրական այս բացի պատճառով չեն բացահայտվում և անպատիժ են մնում ատելության շարժառիթներով կատարվող մի շարք հանցագործություններ: Օրինակ, եթե ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչը տարվում է ոստիկանություն և վատ վերաբերմունքի ենթարկվում ոստիկանների կողմից իր սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության պատճառով, ապա անգամ եթե ոստիկաններին մեղադրանք է առաջադրվում վատ վերաբերմունքի համար, նրանք պատասխանատվության չեն ենթարկվում ատելության հիմքով կատարված հանցագործության համար, քանի որ վերոհիշյալ 63-րդ հոդվածը, որպես ընդհանուր իրավակարգավորում, կամ Քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածը, որպես հատուկ նորմ, չեն նախատեսում սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը՝ որպես ատելության առանձին տարրեր, որոնք ծանրացնում են քրեական պատասխանտվությունը կամ պատիժը:

Օրենսգրքում նույն մոտեցումն է ցուցաբերված նաև ծանրացնող հիմքերով սահմանված այլ հանցագործությունների նկատմամբ (113-րդ հոդվածում (դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը), 119-րդ հոդվածում (ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը), 185-րդ հոդվածում (գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը), 265-րդ հոդվածում (դիակը կամ թաղման վայրերն անարգանքի ենթարկելը) և այլն:

Քրեական օրենսդրության վերոհիշյալ թերությունը կվերանա, եթե իշխանությունն ընդունի Քրեական օրենսգրքի նախագիծը: Ինչպես նշվել է վերևում, նախագծով նախատեսվում են ավելի լայն, նույնիսկ՝ անսահմանափակ հիմքեր, որոնցով կարելի է խտրականության արգելքի խախտման մասին պնդում ներկայացնել քրեական օրենսդրության ներքո: Նախագծի հեղինակներն հաշվի են առել Ռասայական խտրականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի («ECRI») հանձնարարականները: [57] Նախագծով մի կողմից նախատեսվում է խտրականության արգելվող հիմքերի ավելի լայն շրջանակ, իսկ մյուս կողմից՝ խտրականության ընդհանուր արգելքը: Եթե գործող օրենսգրքով որպես ատելության հիմքով կատարվող հանցագործության տարրեր նախատեսվում են միայն ռասան, էթնիկ ծագումը և կրոնը, ապա նախագծով առաջարկվում են գաղափարախոսական, ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական ատելությունը, անհանդուրժողականությունը կամ թշնամանքը՝ ներառյալ այնպիսի ընդգրկուն հիմքեր, ինչպիսիք են «*այլ սոցիալական խմբի նկատմամբ ատելությունը, անհանդուրժողականությունը կամ թշնամանքը կամ կրոնական մոլեռանդության շարժառիթը*»: [58] Կարելի է ենթադրել, որ «այլ սոցիալական խումբ» լայն ձևակերպումը պետք է որ, ի թիվս այլնի, ներառի նաև սեռական և կրոնական փոքրամասնություն կազմող խմբերը, քանի որ Ռասայական խտրականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովը խորհուրդ էր տվել բարեփոխել քրեական օրենսգիրքը՝ արգելված հիմքերի ցանկում ներառելով սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը: [59] Ծանրացնող հանգամանքների վերոհիշյալ ձևակերպումն առկա է նաև օրենսգրքի նախագծի ընդհանուր մասում՝ նախատեսելով, որ խտրականության վերը նշված հիմքերի մատնանշմամբ կարելի է պնդել, որ հանցանքը կատարվել է ատելության շարժառիթով, ուստի, պետք է այն

57 Ռասայական խտրականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի («ECRI») զեկույցն Հայաստանի մասին (մշտադիտարկման հինգերորդ շրջան), զեկույցն ընդունվել է 2016 թվականի հունիսի 28-ին, էջեր 35-36:

58 Տե՛ս, օրինակ, Քրեական օրենսգրքի նախագծի 156(2)(13), 167(2)(12), 168(2)(12) և մի շարք այլ հոդվածները:

59 Ռասայական խտրականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի («ECRI») զեկույցն Հայաստանի մասին (մշտադիտարկման հինգերորդ շրջան), զեկույցն ընդունվել է 2016 թվականի հունիսի 28-ին, էջ 35:

որակել ծանրացնող հանգամանքներում կատարված հանցանք:[60] Դեռ ավելին, քրեական օրենսգրքի նախագիծը նախատեսում է խտրականությունը որպես առանձին հանցագործություն: Մասնավորապես, նախագծի հոդված 19861-ը փորձ է կատարում սահմանել խտրականությունը հետևյալ կերպ. «խտրականությունը՝ տարբերակված վերաբերմունքի դրսևորում է, որը ոտնահարում է անձի պատիվն ու արժանապատվությունը կամ իրավունքներն ու ազատությունները կամ որով անձին առավելություններ են տրվում՝ առանց օբյեկտիվ հիմքի կամ ողջամիտ բացատրության»: Կարևոր է նշել, որ սա առաջին ներպետական իրավական ակտն է, որը փորձ է կատարում սահմանել խտրականություն հասկացությունը: Ավելին, այս հոդվածը թվարկում է պաշտպանվող հատկանիշների ոչ սպառիչ ցանկ՝ տրամադրելով հատկանիշների լայն շրջանակ: Մասնավորապես, հոդվածը նախատեսում է «սեռը, ռասան, էթնիկ կամ սոցիալական ծագումը, գենետիկական հատկանիշները,, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ հայացքները, ազգային փոքրամասնությանը պատկանելությունը, գույքային վիճակը, ծնունդը, առողջական վիճակը, հաշմանդամությունը, տարիքը կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքները»: Այսպիսով, Քրեական օրենսգրքի նախագծի ընդունվելու դեպքում հնարավոր է, որ Հայաստանի քրեական օրենսդրությունն ատելության հիմքով կատարվող հանցագործությունների դասակարգման առումով համապատասխանեցվի եվրոպական չափանիշներին: Այն, փաստորեն, կնպաստի ապագայում տվյալները տեսակավորված եղանակով հավաքագրելու համակարգի ձևավորմանը կամ անգամ կծառայի որպես հարթակ այդ նպատակի համար :

Խտրականությունն արգելող նորմեր են նախատեսված մի շարք օրենքներով: Թիվ 1 հավելվածում զետեղված են այդ օրենքները՝ մատնանշելով դրանցում խտրականությունն արգելող հոդվածները: Հարկ է նշել, որ ցանկում ներառված օրենքներից ոչ մեկը խտրականությունն արգելող իրավական շրջանակ չի նախատեսում: Նշված հոդվածներն օրենքներում ներառված են զուտ որպես խտրականության արգելված հիմքեր՝ չսահմանելով ավելի լայն հայեցակարգեր և հիմքեր, օրինակ՝ խտրականության տեսակները, խտրականության արգելքից հնարավոր բացառությունները, «համեմատական եզրի» հայեցակարգը, ապացուցման չափանիշները և ձևերը, խտրականության սահմանումը և այլն: Ուստի, չնայած օրենքներից շատերում խտրականությունն արգելող ստանդարտ դրույթների գոյությանը, օրենսդրությունը՝ որպես մեկ ամբողջություն, չի ապահովում խտրականությունն արգելող համապարփակ իրավական շրջանակ: Ի լրումն, կարևորագույն այնպիսի օրենսդրական ակտեր, ինչպիսիք են

60 Տե՛ս Քրեական օրենսգրքի նախագծի 71(1)(7) հոդվածը:

61 Տես՝ http://parliament.am/draft_docs7/K-634.pdf

Քաղաքացիական օրենսգիրքը և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքը, ընդհանրապես չեն պարունակում խտրականությունն արգելող դրույթ, որի առնչությամբ օրենքի հիմնարար բացի խնդիր է առաջանում:

Ավելին, թվարկված օրենքներից ոչ մեկը չի նախատեսում ատելության խոսքի որևէ սահմանում: Քաղաքացիական օրենսգիրքը ներառում է վիրավորանքի և զրպարտության հասկացությունը և կառուցակարգը (հոդված 1087.1): Այդ դրույթը, որն օրենսգրքի մեջ ավելացվել է 2010 թվականին, քաղաքացիական բազմաթիվ վեճերի և դատական գործերի տեղիք է տվել՝ նպաստելով զրպարտության վերաբերյալ կայուն և մանրակրկիտ նախադեպային պրակտիկայի ձևավորմանը: Այդ մոտեցումն հաճախ է կիրառվում քաղաքացիական վեճի շրջանակում ատելության խոսքի հետ կապված բողոք ներկայացնելու համար: Այնուամենայնիվ, անորոշություն կա նաև այն հարցում, թե ատելության խոսքը որ մասով է առաջացնում ոչ թե քրեական, այլ՝ քաղաքացիական պատասխանատվություն: Քաղաքացիական օրենսգիրքում և ընդհանրապես քաղաքացիական օրենսդրությունում բացակայում են հստակ սահմանումներ և դատական պրակտիկա՝ կապված ատելության խոսքի հետ: Քրեական գործեր քննող և քրեական հետապնդում իրականացնող մարմիններն իրենց հերթին հազվադեպ են վարույթ հարուցում Քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածի հատկանիշներով:

2017 թվականին ընդունելով «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության եվ ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքը 62 ՝ իշխանությունները նախաձեռնեցին ընտանեկան բռնության մասին տվյալների արձանագրման միասնական համակարգի ձևավորմանն ուղղված բարեփոխումը: 2019 թվականի հոկտեմբերի 10-ին Կառավարությունն ընդունեց թիվ 1381 որոշումը «Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգը հաստատելու մասին»63: Այն տվյալների հավաքագրման միասնական մեխանիզմ է նախատեսում, որի շրջանակում տվյալներն հավաքվում և մշակվում են կարգավորող մարմնի կողմից, ընդ որում՝ տվյալները ստացվում են տարբեր մարմիններից՝ Ոստիկանությունից, Գլխավոր դատախազությունից, քննչական մարմիններից, Դատական դեպարտամենտից, խնամակալության և հոգաբարձության տարածքային և համայնքային մարմիններից, Առողջապահության նախարարությունից և ընտանեկան բռնության գործերի հետ առնչություն ունեցող այլ մարմիններից: Որոշման հավելվածներով նախատեսվում են հատուկ թերթիկներ, որոնք լրացվում են թվարկված շահակիր մարմինների կողմից՝ տվյալներն հավաքելու և իրավասու մարմնին ուղարկելու նպատակով: Թերթիկների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցով չի նախատեսվում տեսակավորված տվյալներ հավաքագրելու

62 «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության եվ ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենք:

63 Հայերեն տեքստի համար տե՛ս https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2019/10/19-1381.pdf

մեխանիզմ: Փոխարենը՝ թերթիկներում նախատեսված են նկարագրողական բնույթի հարցեր, որոնք վերաբերում են բռնության հանգամանքներին և տեսակներին. դրանք ընդհանուր առմամբ կարող են բացահայտել նաև ատելության շարժառիթը, բայց ոչ՝ այնպիսի տվյալների տեսքով, որոնք ենթակա կլինեն հետագա մշակման: Կարծիք կա, որ կարգավորող մարմինը կարող է ապագայում մեծապես նպաստել տվյալները տեսակավորված եղանակով հավաքագրելու միասնական կամ կենտրոնացված համակարգի ձևավորմանը:

Վերջում հարկ է նշել, որ Հայաստանը չի ընդունել խտրականությունն արգելքի մասին առանձին օրենք: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ ներկայումս՝ 2020 թվականի հուլիսի դրությամբ, Հավասարության ապահովման օրենքի նախագիծը, որպես հիմնական և համապարփակ խտրականության արգելքի օրենք, գտնվում է լրամշակման փուլում, և հայտնի չէ, թե այն երբ է ընդունվելու: Խտրականության արգելքի մասին առանձին օրենքի բացակայությունն օրենսդրության մեջ լուրջ բաց է, որը զգալիորեն թուլացնում է խտրականությունից, ատելության խոսքից և ատելության հիմքով հանցագործություններից իրավական պաշտպանություն ընձեռող մեխանիզմները՝ ներառյալ տեսակավորված տվյալներ հավաքագրելու մեխանիզմի մշակման գործընթացը: Ամփոփելով՝ կարելի է նշել, որ օրենսդրությունը չի նախատեսում համապարփակ իրավական դաշտ և փոխհատուցման մեխանիզմներ խտրականության, ատելության հիմքով հանցագործությունների և ատելության խոսքի դեմ պայքարի համար, ինչը ներառում է նաև տեսակավարված տվյալներ հավաքագրելու և մշակելու միասնական մեխանիզմի բացակայությունը:

Ատելության հիմքով հանցագործությունների, ատելության խոսքի և խտրականության մասին ներպետական մակարդակում առկա տվյալները

Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2016 թվականին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ին հայտնել է ատելության հիմքով հանցագործությունների 3 գործերով քրեական հետապնդում իրականացնելու մասին: 2017 թվականին Կառավարությունն հայտնել է ատելության հիմքով հանցագործությունների մասին արձանագրված 14 հաղորդումների և մեկ գործով քրեական հետապնդում իրականացնելու մասին: 64 Նախորդող կամ հաջորդող տարիներին ԵԱՀԿ-ին նմանօրինակ տեղեկություններ երբևէ չեն տրամադրվել: Վերջին տարիներին պետական պաշտոնատար անձինք սովորաբար պատասխանել են, որ Հայաստանում չկան ատելության հիմքով հանցագործություններ: Այնուամենայնիվ, դեռևս պարզ չէ, թե ինչպես են վերոհիշյալ ցուցանիշներն ստացվել, քանի որ երկրում չկա տեսակավորված տվյալների հավաքագրման

64 Տեղեկությունն առկա է այստեղ. http://hatecrime.osce.org/armenia

համակարգ և պրակտիկա: Կայքէջում որպես վերոհիշյալ տեղեկությունների աղբյուր մատնանշվում են Կառավարության թիվ 1495-Ն և 1225-Ն որոշումները: Այնուամենայնիվ, ինչպես նշված է ստորև, այդ կարգերի համաձայն հավաքագրվող տվյալները մանրակրկիտ չեն եւ տեսակավորված չեն՝ ըստ հանցագործությունների շարժառիթների: Հետևաբար, վերոհիշյալ ցուցանիշը չի կարող արժանահավատ և ստույգ տվյալ համարվել ատելության հանցագործությունների դեպքերի մասով: ՀԿ-ների տրամադրած տեղեկություններն ավելի արժանահավատ են: Այնուհանդերձ, այդ տեղեկություններն հիմնականում պարունակում են ստացված հաղորդումների թիվը, սակայն չկան տվյալներ վարույթների վերջնարդյունքի մասին, որը նույնպես հույժ կարևոր է ատելության հիմքով հանցագործությունների գործերի քննության միտումներն հասկանալու համար:

Պետական մի քանի մարմիններ, այդ թվում՝ Ոստիկանությունը, Գլխավոր դատախազությունը, քննչական մարմինները և Մարդու իրավունքների պաշտպանը, պարբերական զեկույցներ են հրապարակում հանցագործությունների և մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ: Այնուհանդերձ, նրանցից ոչ մեկը չի հավաքում և չի մշակում որևէ հանցագործությունների տեսակավորված տվյալներ: Թվարկված բոլոր գերատեսչությունները տվյալները մշակում են ըստ ձևավորված ընդհանուր պրակտիկայի, որի պարագայում հանցագործության տեսակը սահմանվում է ըստ Քրեական օրենսգրքի ընդհանուր հոդվածի՝ չհստակեցնելով հոդվածների մասերը կամ կետերը, որոնցով էլ հաճախ սահմանված են լինում հանցակազմի այնպիսի ծանրացնող դրսևորումները, ինչպիսիք են ատելության շարժառիթները: Այդ մոտեցման հետևանքն այն է, որ հանցագործությունների վիճակագրությունը մանրակրկիտ տվյալներ չի պարունակում ատելության հողի վրա կատարված հանցագործությունների մասին: Դրանում սովորաբար նշվում է բուն հանցագործությունը (օրինակ՝ սպանություն), սակայն չեն հստակեցվում ծանրացնող դրսևորումները, որոնք սովորաբար նախատեսված են լինում հոդվածի առանձին մասերի առանձին կետերում (օրինակ՝ ազգային ատելության շարժառիթը):

Ուստի, ատելության հիմքով հանցագործությունների հաղորդումների, քննությունների, արդարացումների, դատարան ուղարկված և քննված գործերի թվաքանակի վերաբերյալ արժանահավատ և ստույգ տվյալներ չկան: Տվյալների մշակման համապարփակ համակարգի բացակայությունն է հենց պատճառը, որ ԺՀՄԻԳ-ին տրված տեղեկատվությունը ոչ լիարժեք է, քանի որ վերջինս չի ներառում տեղեկություններ հաղորդված դեպքերի վերջնարդյունքի մասին կամ հանցագործությունների հաղորդումներով կատարված քննությունների և դատական գործերի միտումների մասին:

Երբ Քրեական օրենսգրքում ատելության հիմքով հանցագործության կոնկրետ տեսակը սահմանված է որպես հանցագործության հիմնական ձև, Դատական դեպարտամենտի ամենամյա վիճակագրությունը պարունակում է ստույգ տվյալներ տվյալ հանցագործության առնչությամբ կայացված դատական ակտերի վերաբերյալ: Օրինակ, 226-րդ հոդվածում ատելության հիմքով հանցագործության հանցակազմը սահմանված է որպես տվյալ հանցանքի հիմնական տարրը: Ուստի, 226-րդ հոդվածը տեսանելի է զեկույցներում՝ որպես առանձին և կոնկրետ անվանում, որը կարելի է հեշտորեն նույնականացնել: Դատական դեպարտամենտի

ամենամյա զեկույցների արագ որոնումը ցույց կտա, որ 226-րդ հոդվածով գեթ մեկ դատական ակտ չի կայացվել 2015 թվականից ի վեր: Ըստ երևույթին, վերջին տարիներին չեն քննվել ատելության խոսքին առնչվող քրեական գործեր, քանի որ եթե նման գործեր քննված լինեին, ապա դատական քննության համար դատարան ուղարկված գործերի թվի վերաբերյալ գոյություն կունենային որոշ տվյալներ: Ինչ վերաբերում է ատելության հանցագործությունների այլ տեսակներին, ապա Դատական դեպարտամենտի զեկույցներում հնարավոր չէ տվյալներ որոնել և գտնել, քանի որ ինչպես արդեն նշվեց՝ դրանցում զետեղված են չտեսակավորված վիճակագրական տվյալներ հանցագործությունների վերաբերյալ:

Ավելին, հնարավոր չէ տվյալներ ստանալ քննչական մարմինների քննած՝ ատելության հիմքով հանցագործությունների գործերի վերաբերյալ, քանի որ այդ տվյալները, նույնիսկ եթե դրանք հավաքագրվում և մշակվում են, Ոստիկանության ինֆորմացիոն կենտրոն են ուղարկվում կիսամյակային և տարեկան կտրվածքով՝ չհրապարակելով դրանք հանրությանը: Այդ տեղեկանքները չեն հրապարակվում, այլ՝ օգտագործվում են քննչական և դատախազական մարմինների կողմից բացառապես վերջիններիս օպերատիվ կարիքների համար: Այդ տեղեկանքներում հավաքագրվող տվյալներն հանրությանը ներկայացվում են միայն Գլխավոր դատախազի կողմից Ազգային ժողովին ներկայացվող տարեկան հաղորդումների միջոցով: Այնուհանդերձ, ինչպես մանրամասնեցված է ստորև, քրեական վարույթի այս փուլին վերաբերող՝ հանցագործության մասին տվյալներն հավաքագրվում և մշակվում են ամբողջացված՝ չդասակարգելով տվյալներն ըստ հանցագործությունների ծանրացնող հանգամանքների, որոնցից է մասնավորապես ատելության շարժառիթը: Ուստի, օրինակ՝ սպանության գործերի թվին առնչվող տեղեկատվությունից հնարավոր չէ պարզել ատելության շարժառիթով կատարված սպանությունների թիվը:

Խտրական գործելակերպի կոնկրետ դրսևորումների վերաբերյալ քիչ թե շատ արժանահավատ տեղեկություններ ստանալու համար կարելի է օգտվել ՀԿ-ների վիճակագրությունից, որն ավելի արժանահավատ է: Այնուհանդերձ, դրանք հաճախ խիստ հասցեական և նեղ տվյալներ են, որոնք վերաբերում են խտրականության կամ ատելության հանցագործությունների շատ կոնկրետ շրջանակի: Օրինակ, ՓԻՆՔ հասարակական կազմակերպությունն հայտնել է 2018 թվականի ընթացքում ատելության հիմքով կատարված 25 հանցագործությունների մասին: Հաշվի առնելով, որ ՓԻՆՔ հասարակական կազմակերպությունը մասնագիտանում է սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիման վրա տեղի ունեցող խտրականությունից տուժող անձանց պաշտպանության ուղղությամբ, վերոհիշյալ տեղեկությունները կարելի է արժանահավատ համարել:

Ատելության հիմքով հանցագործությունների, ատելության խոսքի և խտրականության դեպքերի արձանագրման և տվյալների հավաքագրման ներկայիս համակարգը՝ ներառյալ դերերը և պարտականությունները

Հայաստանում ներկայումս չկա ատելության հիմքով հանցագործությունների, ատելության խոսքի և խտրականության մասին տեսակավորված տվյալներ հավաքագրող կենտրոնացված մարմին կամ մեխանիզմ: Ուստի, հնարավոր չէ համապարփակ տվյալներ ստանալ՝ Հայաստանում խտրականության գործելակերպի մասին ընդհանուր պատկերացում կազմելու համար: Ատելության շարժառիթով կատարված հանցանքների մասին վիճակագրական համապարփակ և տեսակավորված տվյալներ չկան՝ պայմանավորված տվյալների հավաքագրման և մշակման հնացած մեթոդաբանությամբ և մեխանիզմներով:
Պետական մի քանի մարմիններ կան, որոնք հանցավորության տվյալներ են հավաքում և մշակում Հայաստանում: Նրանց թվում են Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը, ինչպես նաև՝ խտրականության դեմ պայքարի ոլորտում մասնագիտացող մի քանի ՀԿ-ներ: Հանցագործությունների մասին տվյալներ հավաքագրող և մշակող կենտրոնական մարմինը ՀՀ ոստիկանության Ինֆորմացիոն կենտրոնն է:

Տվյալների հավաքագրումը Ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի կողմից

Ինֆորմացիոն կենտրոնը (հետայսու՝ նաև «Կենտրոն») վարում է հանցագործությունների մասին տվյալների ամենահամապարփակ և ամենակենտրոնացված բազան Հայաստանում: Կենտրոնի կողմից օգտագործվող թերթիկները ներկայացված են Հավելված 2-ում: Տվյալների հավաքագրումը և լրացումը կատարվում է Կառավարության թիվ 933-Ն որոշմամբ սահմանված կարգով: Բազայի մեջ մուտքագրվում են հանցագործություններին վերաբերող հետևյալ տեղեկությունները.

- Տվյալներ Հայաստանի Հանրապետության տարածքում հանցագործության մեջ մեղադրվող կամ դատապարտված Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների մասին,
- Տվյալներ այլ երկրներում դատապարտված և պատիժը կրելու համար Հայաստանի Հանրապետություն տեղափոխված Հայաստանի Հանրապետության քաղաքացիների մասին,
- Տվյալներ այն անձանց մասին, որոնց նկատմամբ հայտարարված է հետախուզում,
- Տվյալներ այն անձանց մասին, որոնք մեղադրվել են հանցանք կատարելու

մեջ, սակայն հետագայում նրանց նկատմամբ քրեական գործը կարճվել է ոչ արդարացնող հիմքերով (օրինակ՝ վաղեմության ժամկետի կիրառության արդյունքում),

- Հետախուզվողների ցուցակում գտնվող անձանց մասին տվյալներ
- Տվյալներ քրեական պատասխանատվությունից ազատված այն անչափահասների մասին, որոնց նկատմամբ կիրառվել են դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ,
- Տվյալներ Քրեական օրենսգրքով նախատեսված արարք կատարած այն անձանց մասին, որոնց նկատմամբ դատարանի որոշմամբ կիրառվել են բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ,
- Դատապարտված այն անձանց մասին տվյալներ, որոնց նկատմամբ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը կիրառվել է համաներում կամ ներում,
- Տվյալներ այն անձանց մասին, որոնց վերաբերյալ նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է ոչ արդարացնող հիմքերով (օրինակ՝ վաղեմության ժամկետ, անձեռնմխելիություն և այլն),
- Տվյալներ այն անձանց մասին, ովքեր ձերբակալումից ազատվել են հանցագործության հիմքերի անբավարարության պատճառով:

Կենտրոնը տվյալներ է ստանում իրավապահ, քննչական և դատախազական մարմիններից, ինչպես նաև դատարաններից և քրեակատարողական հիմնարկներից:
Տվյալները պահվում են մինչև անձի 80 տարեկան դառնալը՝ բացառությամբ երբ անձը դատապարտվել է ծանր հանցագործություն կատարելու համար կամ մահացել է ազատազրկման վայրում կամ քրեական հետապնդումը դադարեցվել է արդարացնող հիմքով:
Տվյալները մուտքագրվում են՝ ներառելով անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը/ամիսը/տարին և վայրը: Անձնական տվյալներին հաջորդում են տեղեկություններ քաղաքացիության, աշխատանքի և բնակության վայրի, ձերբակալման կամ կալանավորման ամսաթվի և հանցագործոթյան բնույթի և Քրեական օրեսգրքի կոնկրետ հոդվածի մասին: Տվյալների մուտքագրման այս մեխանիզմը վկայում է այն մասին, որ տվյալները մուտքագրվում և որոնումները կատարվում են ըստ անձի անունի, այլ ոչ՝ ըստ Քրեական օրենսգրքի կոնկրետ հանցագործության բնույթի: Այսպիսով, հանցագործության բնույթը կամ Քրեական օրենսգրքի հոդվածն առաջնային տվյալներ չեն, որոնց վրա կատարվում է տվյալների հավաքագրումը և մշակումը:
Կենտրոնը գործում է գաղտնիության սկզբունքով և որպես այդպիսին վիճակագրական տվյալներ չի հրապարակում: Այն տվյալներ է տրամադրում իրավասու պետական մարմինների և անձանց դիմումի հիման վրա: Պետական մարմինները տեղեկութուններ պահանջում են իրենց աշխատանքային կարիքների և նպատակների համար: Անձը կարող է տեղեկություններ պահանջել և ստանալ միայն այն դեպքում, երբ տեղեկությունները վերաբերում են իրեն: Միակ բացառությունը փաստաբանի դիմումն է, ով կարող է երրորդ անձին վերաբերող տեղեկություններ խնդրել՝ հիմնվելով «Տեղեկատվության ազատության մասին»

օրենքի և «Փաստաբանության մասին» օրենքի վրա՝ իր կողմից իրականացվող իրավաբանական ներկայացուցչության առնչությամբ: Այսպիսով, Ինֆորմացիոն կենտրոնի կողմից հավաքագրվող տվյալները միմիայն օպերատիվ բնույթ ունեն, և Կենտրոնը տեղեկություններ կարող է տրամադրել միայն պետական մարմինների կամ անձանց դիմումի վրա, երբ այդ տեղեկությունները հայցվում են կոնկրետ նպատակների համար: Ինֆորմացիոն կենտրոնը չի մշակում և չի հրապարակում վիճակագրական տվյալներ համընդհանուր օգտագործման համար:

Ավելին, Ինֆորմացիոն կենտրոնն հանցագործությունների մասին տվյալներն հավաքագրում և մշակում է ըստ Քրեական օրենսգրքով նախատեսված հանցագործությունների տեսակների: Մասնավորապես, հանցագործությունների մասին տեղեկությունները տվյալների բազայի մեջ մուտքագրվում են ըստ Քրեական օրենսգրքի հոդվածի և մասի, որով նախատեսվում է հանցագործության կոնկրետ ձևը, մասնավորապես՝ ծանրացնող հանգամանքները: Եթե ծանրացնող հանգամանքները վերաբերում են ատելության շարժառիթին, ապա լրացվում են հստակեցնող լրացուցիչ տվյալներ, որոնք վերաբերում են տվյալ հանցագործության շարժառիթ հանդիսացած կոնկրետ ատելությանը (ազգային, էթնիկ կամ կրոնական): Ավելին, հաշվի առնելով, որ օրենքով նախատեսվում են ատելության շարժառիթի միայն նշված երեք հիմքերը, խտրականության այլ հիմքերը, որոնք ատելության շարժառիթներ են, չեն կարող որպես տվյալներ մուտքագրվել բազայի մեջ: Ուստի, հանցագործության մասին տեղեկությունները մուտքագրվում են ամբողջացված, իսկ վերջնական արդյունքում ստացվող նյութը՝ տվյալների բազայի ինֆորմացիան, չի ներառում տվյալներ այն մասին, թե ատելության կոնկրետ որ շարժառիթով է կատարվել հանցանքը:

Հաշվի առնելով տվյալների խիստ սահմանափակ տեսակավորումը՝ Ինֆորմացիոն կենտրոնի աշխատողները մշակել են տեղեկատուներ, որոնք նախատեսում են տվյալների դասակարգման 28 առավել մանրակրկիտ հիմքեր, որոնցից յուրաքանչյուրը կոդավորված է ըստ կոնկրետ թիվ: Թիվ 14 տեղեկատուն ներառում է հանցագործությունների շարժառիթների ցանկը, որոնցում նշվում են ատելության հինգ շարժառիթներ՝ «ռասայական», «ազգային», «կրոնական», «անձնական այլ» և «այլ շարժառիթ», որոնք կոդավորված են 90, 91, 92, 95 և 99 թվերով: Այսպիսով, երբ հանցագործության մասին տվյալներ են մուտքագրվում թղթային կամ էլեկտրոնային բազայի մեջ, նշվում է ոչ միայն Քրեական օրենսգրքի հոդվածը, այլ նաև այն կոդը, որն համապատասխանում է հանցագործության վերը նշված շարժառիթին: Այնուհանդերձ, այդ պրակտիկան ոչ հետևողականորեն է կիրառվում, քանի որ տեղեկատուները մշակվել են որպես հանցագործությունների դասակարգման խորհրդատվական, այլ ոչ՝ պարտադիր ցուցումներ:

Տվյալների հավաքագրումը քննչական մարմինների կողմից

Հայաստանի Հանրապետության քննչական մարմինները կատարում են քրեական գործի քննություն, որը բաղկացած է երկու փուլերից՝ հետաքննությունից և նախաքննությունից: Այս երկու փուլերը միասին կազմում են քրեական վարույթի քննչական փուլը՝ նախքան գործի դատական քննությունը: Քննչական մարմինները տվյալների հավաքման մեծածավալ գործունեություն են իրականացնում և տվյալներ են հաղորդում Ինֆորմացիոն կենտրոնին և Գլխավոր դատախազությանը: Հետաքննության մարմիններն հիմնականում գտնվում են ոստիկանության համակարգում: Քննչական մարմինները ներկայումս չորսն են՝ Քննչական կոմիտեն, Հատուկ քննչական ծառայությունը, Ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունը և Պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունը: Նշված բոլոր մարմինները, որոնցից կազմված է քննչական հիմնական համակարգը, պարտավոր են ամենամսյա տվյալներ հավաքել և կիսամյակային կամ տարեկան մանրակրկիտ վիճակագրական տվյալներ հաղորդել իրենց քննած հանցագործությունների թվի և տեսակների մասին: Այդ գործունեությունը կարգավորվում է «**Մինչդատական վարույթը բնութագրող ցուցանիշների վիճակագրական հաշվետվությունների միասնական ձևերը եվ դրանց լրացման ու ներկայացման կարգերը հաստատելու մասին**» Կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 1225-Ն որոշմամբ: Դրանից զատ, դեպքերի, հանցագործությունների կամ վարչական իրավախախտումների մասին հաղորդումներ ստացող ոստիկանները պարտավոր են պարբերական հաշվետվություններ լրացնել, որոնք կարգավորվում են Կառավարության 2017 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1495-Ն որոշմամբ:

Թիվ 1225-Ն որոշման համաձայն, նախաքննության և հետաքննության մարմինները պարտավոր են ամսական կտրվածքով տարաբնույթ վիճակագրական տվյալներ հավաքել, մասնավորապես՝ քննված և դատարան ուղարկված քրեական գործերի թիվը, արդարացված կամ կարճված գործերի թիվը, անչափահասների հանցագործությունների գործերի թիվը, քննված հանցագործությունների տեսակները (դասակարգված ըստ Քրեական օրենսգրքի հոդվածների), կիրառված և դադարեցված խափանման միջոցների թիվը, տվյալներ պատճառված և փոխհատուցված գույքային վնասի մասին, և տարաբնույթ այլ վիճակագրական տվյալներ: Սույն ուսումնասիրության թեմային առավել սերտորեն վերաբերում է նշված որոշման այն մասը, որով կարգավորվում է հանցագործությունների տարբեր տեսակների մասին տվյալների դասակարգման եղանակը: Հանցագործությունների տեսակները դասակարգված են ըստ Քրեական օրենսգրքի հոդվածների՝ չկոնկրետացնելով հոդվածների այն մասերը, որոնք նախատեսում են ծանրացնող հանգամանքները, ինչպիսիք են ազգային, էթնիկ կամ ռասայական ատելությունը: Ուստի, պարզ չէ, թե ինչպես են իշխանությունները պայքարում ատելության հիմքով հանցագործությունների դեմ, երբ հանցակազմը սահմանված է հանցագործության ծանրացնող հանգամանքներում: Երբ ատելության հիմքով հանցագործության հանցակազմը սահմանված է հանցագործության հասարակ ձևով, օրինակ՝ Օրենսգրքի 226-րդ հոդվածի դեպքում (ատելության խոսք՝ բռնություն հարուցելը),

վիճակագրական տվյալները հեշտ է պարզել, բայց երբ ատելության հիմքով հանցագործությունը սահմանված է որպես ծանրացնող հիմք, ապա տվյալներն այն չեն արտացոլում, քանի որ ծանրացնող հիմքերը սովորաբար սահմանված են հոդվածի որոշակի մասերի որոշակի կետերում, որոնք վիճակագրական ձևաթղթերում սովորաբար չեն նախատեսվում որպես հանցագործության առանձին տեսակ։ Ձևաթղթերում նորմերը սովորաբար նշվում են ընդհանրացված, այլ ոչ՝ տեսակավորված։ Ուստի, նախաքննության տվյալների հաշվետվական համակարգն ունի նույն թերությունը, ինչ Ինֆորմացիոն կենտրոնի կողմից վարվող համակարգը. տվյալները մշակվում են ընդհանրական կերպով, որը չի արտացոլում մանրակրկիտ վիճակագրական տվյալներ, և ատելության հիմքով հանցագործությունների մեծ մասը դուրս է մնում վիճակագրական հաշվետվություններից։ Ուստի, պարզ չէ, թե ինչպես է Կառավարությունը ԺՀՄԻԳ-ին հայտնել ատելության հիմքով կատարված 17 հանցագործությունների մասին տվյալներ՝ հղում անելով Կառավարության 1225-Ն որոշմանը, եթե վերջինիս մեջ օգտագործված մեթոդաբանությունը թույլ չի տալիս գտնել և հավաքագրել մանրակրկիտ տվյալներ ատելության հիմքով հանցագործությունների մասին։

Գլխավոր դատախազության ամենամյա հաղորդումները

Գլխավոր դատախազը Սահմանադրությամբ պարտավոր է հանցագործությունների մասին ամենամյա հաղորդումներ ներկայացնել Ազգային ժողովին։ Հաղորդումը ներառում է Հայաստանում հանցագործությունների միտումների թե՛ նկարագրողական, թե՛ վիճակագրական վերլուծություններ։ Ամենամյա հաղորդումը կազմելու մեթոդաբանություն սահմանված չէ։ Հանցագործությունների միտումները նկարագրելիս հաղորդման մեջ հղում է արվում հավաքագրված վիճակագրական տվյալներին ըստ հանցագործությունների ծանրության (ծանր, միջին և ոչ մեծ ծանրության), բնույթի (գույքային, անձի դեմ ուղղված, պետական պաշտոնյայի կողմից կատարված և այլն) և տեսակի (ըստ Քրեական օրենսգրքի հոդվածների)։ Հաղորդման մեջ ընդգծվում են այնպիսի հանցագործություններ, ինչպիսիք են սպանությունը, մարմնական վնասվածք պատճառելը, զենքի գործադրմամբ կատարված հանցագործությունները, գույքային հանցագործություններ, բնակարանային գողությունը, խուլիգանությունը, ճանապարհային երթևեկության հանցագործություններ, անչափահասների հանցագործությունները։ Կոնկրետ նշում չի պարունակվում ատելության հիմքով հանցագործությունների, ատելության խոսքի կամ խտրական շարժառիթներով կատարված ընդհանուր հանցագործությունների մասին։ Հանցագործությունների այնպիսի շարժառիթները, ինչպիսիք են ազգային, էթնիկ կամ կրոնական ատելությունը, չեն հիշատակվում կամ որևէ կերպ դասակարգվում հաղորդման

մեջ։[65] Օրինակ, եթե տվյալները վերաբերում են այնպիսի հանցագործությունների, ինչպիսիք են սպանությունը, գույքի վնասումը, մարմնական վնասվածք պատճառելը, հաղորդումը լրացուցիչ տվյալներ չի տալիս այն մասին, թե արդյոք այդ հանցագործությունները կատարվել են ատելության շարժառիթի ծանրացնող հանգամանքով։

Ամփոփելով՝ կարելի է նշել, որ Գլխավոր դատախազության ամենամյա հաղորդումներն հրապարակվում և լայնորեն հասանելի են դառնում հանրությանը։ Այնուամենայնիվ, դրանք չեն պարունակում տեսակավորված տվյալներ ատելության հիմքով հանցագործությունների կամ ընդհանրապես խտրական շարժառիթներով կատարված հանցագործությունների մասին։

Դատական համակարգի ամենամյա զեկույցները

Դատական համակարգը կիսամյակային և տարեկան զեկույցներ է հրապարակում դատական պրակտիկայի մասին, որոնցում ներկայացնում է քաղաքացիական, քրեական և վարչական դատարանների կայացրած դատական ակտերի թիվը և տեսակները։[66] Տվյալների փաստացի հավաքագրումը և մշակումը կատարում է Դատական դեպարտամենտը, որը դատական համակարգի վարչական մարմինն է, որը զբաղվում է դատական համակարգի բոլոր կազմակերպական, տեխնիկական և վարչական հարցերով։ Դատական դեպարտամենտի փորձագետները տվյալները դասակարգում են ըստ հատուկ ինդեքսների (ծածկագրերի), որոնք մշակվել են մի քանի տարի առաջ. յուրաքանչյուր ինդեքս նկարագրում է օրենքի կոնկրետ դրույթ։ Օրինակ, ավելի քան 300 ինդեքս է մշակվել քրեական դատարանների կայացրած դատական ակտերին վերաբերող տվյալները ներկայացնելու համար։ Յուրաքանչյուր ծածկագիր նկարագրում է Քրեական օրենսգրքի մեկ հոդված։ Ծածկագրերը բաժանված են 18 խմբերի (Հավելված 3)։ Թե՛ խմբերը, թե՛ ինդեքսները կազմված են ըստ Քրեական օրենսգրքի բաժինների և հոդվածների։[67] Օրինակ, առաջին խումբը («Քաղաքացու կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություններ») ներառում է 28 ինդեքսներ, որոնցից յուրաքանչյուրն համապատասխանում է Քրեական օրենսգրքի կոնկրետ հոդվածի. ծածկագիր 1.1.՝

65 Տե՛ս 2014 թվականին Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեության մասին հաղորդումը։ Ամենամյա հաղորդումները տեղադրված են Գլխավոր դատախազության կայքէջի հետևյալ բաժնում. http://prosecutor.am/am/messages-to-the-president-and-the-national-assembly/

66 Բոլոր զեկույցներն հրապարակվում են դատական իշխանության ինտերնետային էջում. www.court.am

67 Ընդհանուր իրավասության քրեական դատարանների պրակտիկայի 2014 թվականի տարեկան ամփոփման համար տե՛ս http://court.am/?l=lo&id=50

հոդված 104 (սպանություն), ծածկագիր 1.9՝ հոդված 112 (դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը), ծածկագիր 1.16՝ հոդված 119 (խոշտանգում) և այլն։ «Հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ» խումբը ներառում է 37 ինդեքսներ, որոնց թվում են 226-րդ հոդվածը (ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելը), 222 (ավազակություն) 236 (ապօրինի կերպով զենք պատրաստելը)։ Յուրաքանչյուր ինդեքսի և Քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածի ներքո բերվում են վիճակագրական տվյալներ կայացված դատավճիռների թվի, բողոքարկված գործերի թվի, ուժի մեջ մտած դատական ակտերի թվի, հաշվետու ժամանակաշրջանում կայացված դատական որոշումների թվի մասին և այլն։ Տվյալների հավաքագրման այս մեթոդի բացասական կողմն այն է, որ ամբողջացված տվյալներ են ստացվում Քրեական օրենսգրքի յուրաքանչյուր հոդվածի մասին՝ չկոնկրետացնելով, թե արդյոք տվյալները վերաբերում են ծանրացնող հանգամանքներում կատարված հանցագործությանը կամ՝ ինչպես ազգային օրենսդրությամբ է նախատեսված, հանցակազմի որակյալ հատկանիշով կատարված հանցագործությունները։ Ինչպես նշվեց վերևում՝ ատելության շարժառիթը Քրեական օրենսգրքի 63-րդ ընդհանուր հոդվածով նախատեսված ծանրացնող հանգամանքներից միայն մեկն է։ Դատական համակարգի զեկույցի մեջ տվյալների հավաքագրման ամբողջացված մեթոդով հնարավոր չի լինում հիմնավորել, թե արդյոք ներկայացված տեղեկությունը ներառում է նաև ծանրացնող հանգամանքներում կատարված հանցանքը, օրինակ՝ ատելության շարժառիթով կատարված հանցանքը, որը թեպետ հանցակազմի տարրերից է այդ ընդհանուր հոդվածի ներքո, սակայն տվյալներում չի արտացոլված։ Ցանկացած պարագայում, տվյալների հավաքագրման այս մեթոդի դրական կողմն այն է, որ ի տարբերություն Ինֆորմացիոն կենտրոնի կողմից հավաքագրվող տվյալների և Գլխավոր դատախազության ամենամյա հաղորդումների, Դատական դեպարտամենտի կողմից տվյալների մշակումն իրականացում է՝ օգտագործելով ծածկագրեր (կոդեր), որն ավելի կատարելագործված մեթոդ է։ Այն թույլ է տալիս ապագայում իրականացնել ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ տեսակավորված տվյալների մշակում, եթե կատարվեն անհրաժեշտ փոփոխություններ օրենքներում և այլ իրավական ակտերում (տե՛ս ստորև՝ Առաջարկություններին նվիրված բաժինը)։ Ծածկագրերի օգտագործումը թույլ է տալիս տվյալների մշակումը թղթային հարթակից (ինչպիսին ներկայումս կիրառվում է Ինֆորմացիոն կենտրոնի կողմից) հեշտորեն անցում կատարել թվայնացվածի։ Հաշվի առնելով քրեական արդարադատության համակարգը գործերի վարման թվային, էլեկտրոնային ենթակառուցվածքի վերածելու ուղղությամբ ներկայումս ընթացող բարեփոխումները, Դատական դեպարտամենտի կողմից ծածկագրերի օգտագործումը կարող է լավ օրինակ լինել նշված նպատակին հասնելու համար։

Վիճակագրական կոմիտեի տվյալները

Վիճակագրական կոմիտեն հավաքում, մշակում և հրապարակում է վիճակագրական տվյալներ իրավական կոնկրետ ոլորտի՝ ներառյալ հանցագործությունների մասին։ Հանցագործություններին վերաբերող վիճակագրական տվյալների հավաքումը, դասակարգումը և հրապարակումը կատարվում են Կառավարության 2004 թվականի փետրվարի 23-ի թիվ 05-Ն որոշմամբ հաստատված կարգով և ձևաթղթերով։[68] (Հավելված 4) Վիճակագրական կոմիտեն պարբերաբար ստանում է հանցագործությունների վերաբերյալ տվյալներ Ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնից, ինչը կարգավորված է «ՀՀ վիճակագրության պետական խորհրդին վիճակագրական տեղեկությունների ներկայացման կարգը հաստատելու մասին» Կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 11-Ն որոշմամբ։[69] Համապատասխան տեղեկատվությունը ներկայացվում է Վիճակագրական կոմիտեին նախքան հաշվետու ժամանակաշրջանի ավարտին հաջորդող ամսի 10-ը։ Հանցագործության վիճակագրությունը խմբավորված է ըստ հետևյալ վեց խմբերի.

- *անձի դեմ ուղղված հանցագործություններ,*
- *հասարակական անվտանգության, հասարակական կարգի և հանրային առողջության դեմ ուղղված հանցագործություններ,*
- *գույքի դեմ ուղղված հանցագործություններ,*
- *տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններ,*
- *պետական իշխանության, պետական ծառայության և կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործություններ,*
- *Այլ հանցագործություններ։*

Տվյալները մանրամասնեցվում և ներկայացվում են նաև ըստ ծանրության (ոչ մեծ ծանրության հանցագործություններ, միջին ծանրության հանցագործություններ և ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններ)։ Տեղեկությունները ներկայացնելիս տվյալների որևէ այլ տեսակավորում չի իրականացվում Ինֆորմացիոն կենտրոնի կամ Վիճակագրական կոմիտեի կողմից։ Վեց խմբերից յուրաքանչյուրը կարող է տվյալներ պարունակել ատելության հիմքով հանցագործությունների մասին, սակայն դրանք չեն ներկայացվում և չեն մշակվում, քանի որ տվյալների մշակումը կատարվում է ամբողջացված՝ ինչպես վերը

68 Կարգի և ձևաթղթի օրինակների համար տե՛ս Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կայքէջի հետևյալ բաժինը. http://www.armstat.am/am/?nid=302

69 Տե՛ս թիվ 11-Ն որոշման տեքստը. http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=47765

թվարկված բոլոր այլ պետական մարմինների պարագայում: Ուստի, Վիճակագրական կոմիտեն առանձին տվյալներ չի տալիս Հայաստանում ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ:

Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցները

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը չի վարում ատելության հիմքով հանցագործությունների, ատելության խոսքի կամ խտրականության տվյալների բազա: Հիմնվելով իր մանդատի վրա՝ այն քննարկում է իրավաբանական և ֆիզիկական անձանց դիմումները մարդու իրավունքների խախտումների մասին, որոնք կարող են ներառել նաև խտրականության, ատելության հիմքով հանցագործությունների կամ ատելության խոսքի դեպքեր: Գրասենյակը դրանք քննարկում է ընդհանուր կարգով, և հատուկ ընթացակարգ նախատեսված չէ այդ դիմումների քննարկման համար: Նմանապես, Մարդու իրավունքների պաշտպանն պարբերական զեկույցներ է հրապարակում մարդու իրավոնքների տարբեր խախտումների մասին, որոնցում հղում է արվում նաև խտրական տարաբնույթ գործելակերպերին: Երբեմն այդ զեկույցներում նշվում են որոշակի վիճակագրական տվյալներ, սակայն այդ նշումները կամ տվյալների հավաքագրումն համակարգված չեն և արվում են հիմնականում դեպքից դեպք: Խտրականության դեմ պայքարի մասին օրենքի նախագծով նախատեսվում է, որ Մարդու իրավունքների պաշտպանը դառնալու է խտրականության դեմ պայքարը կարգավորող ազգային մարմինը: Եթե դա տեղի ունենա, ապա Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը թերևս կզբաղվի նաև տվյալների մշակմամբ, ինչն անելով կաջակցի այդ ոլորտում գործող պետական այլ մարմիններին:

Տվյալների հավաքագրումն իրավապաշտպան ՀԿ-ների կողմից

Խտրականության դեմ պայքարի տարբեր խնդիրներով մասնագիտացող իրավապաշտպան ՀԿ-ները վիճակագրական տվյալներ են հավաքագրում խտրական գործելակերպի տարբեր դրսևորումների մասին: Օրինակ, ՓԻՆՔ հասարակական կազմակերպությունը, որն զբաղվում է սեռական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությամբ, պարբերական զեկույցներ է հրապարակում Հայաստանում *ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների*

վիճակի մասին: 70 Այնտեղ թե՛ նկարագրողական, թե՛ վիճակագրական տեղեկություններ կան: 2018 թվականի զեկույցում նշվել են խտրական բնույթի 25 հարձակումներ՝ հիմնված սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության վրա:71 Սեռական փոքրամասնությունների իրավունքներին նվիրված համանման զեկույց (թեպետ՝ ըստ առանձին դեպքերի կազմված) է հրապարակում «Նոր սերունդ» իրավապաշտպան ՀԿ-ն: Այս ՀԿ-ներն ատելության հիմքով հանցագործությունների բնույթի և տեսակների մասին մշակված տեղեկատվության կարևոր աղբյուրներ են:

Ավելին, 2018 թ. հուլիս-դեկտեմբեր ամիսներին Ատելության խոսքի մշտադիտարկման միջանկյալ զեկույցում Հայաստանի հելսինկյան կոմիտեն մի ամբողջ գլուխ նվիրել է դիտարկված գործերի վիճակագրությանը: 72 Վերջինս վերաբերում էր առցանց և տպագիր տարբեր լրատվամիջոցների և հեռուստաալիքների կողմից ատելության խոսքի դեպքերին և այդ մեդիաների կողմից տարածվող ատելության խոսքի և վնասակար խոսքի դեպքերի վիճակագրությանը: Այդ դիտարկման համաձայն՝ ատելության խոսքի և վնասակար խոսքի դեպքերի մեծ մասն ուղղված է եղել անձանց դեմ՝ պայմանավորված վերջիններիս կրոնական համոզմունքներով և սեռական կողմնորոշմամբ:

«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան 2016-2017 թվականների զեկույցում («Կնասպանությունը Հայաստանում. լուռ համաձարակ»)73 մի բաժին է նվիրել կնասպանության քանակական ցուցանիշներին, ընդ որում՝ «կնասպանություն» եզրույթը սահմանվել է որպես կանանց սպանությունը կնատյացության հիման վրա: Նշված զեկույցում վերլուծվել է կնասպանության երևույթին առնչվող ընդհանուր իրավիճակը, ինչպես նաև՝ ընտանեկան բռնության գործերով Հայաստանում ընթացող դատական գործերը:

2017 թվականին «Նոր սերունդ» իրավապաշտպան ՀԿ-ն ազգային զեկույց է հրապարակել Հայաստանում ԼԳԲՏՔ+ անձանց իրավունքների խախտումների մասին: 74 Զեկույցում քննարկվել են օրենսդրական դաշտը, ինչպես նաև նշված իրավունքների (օրինակ՝ համարժեք բուժօգնություն ստանալու իրավունքի, արժանապատվության իրավունքի, մասնավոր կյանքի, արդյունավետ իրավական պաշտպանության միջոցի և այլ իրավունքների) խախտումների մի քանի

70 Վերջին զեկույցի համար տե՛ս https://www.pinkarmenia.org/wp-content/uploads/2019/05/2018annualreview_en.pdf

71 Տե՛ս նշված զեկույցը, էջ 1:

72 Տե՛ս զեկույցի հայերեն ամբողջական տեքստը. http://armhels.com/publications/atelutyan-xosqi-mshtaditarkum/

73 Տե՛ս զեկույցի ամբողջական տեքստը. http://coalitionagainstviolence.org/wp-content/uploads/2019/07/femicide2018en.pdf?x24321

74 Տե՛ս զեկույցի ռուսերեն ամբողջական տեքստը. https://ngngo.net/files/pdf/1/15337385748058.pdf

գործնական օրինակներ:
Ամփոփելով՝ հարկ է նշել, որ իրավապաշտպան ՀԿ-ները հետազոտություններ և զեկույցներ են հրապարակում, որոնք հիմնականում նկարագրողական-պատմողական բնույթ ունեն և շատ փոքր ծավալի վիճակագրական տվյալներ են պարունակում՝ չընդգրկելով ատելության հիմքով հանցագործությունների, ատելության խոսքի և խտրականության ամբողջ դաշտը:

Առաջարկներ պետական շահակիր կողմերին

- Մշակել ատելության հիմքով հանցագործությունների և ատելության խոսքի հանցագործությունների վերաբերյալ տվյալների ծածկագրեր (կոդեր)՝ ըստ խտրականության և ատելության շարժառիթների պաշտպանվող հատկանիշների (մասնավորապես՝ ռասայի, մաշկի գույնի, տարիքի, սեռի, գենդերային ինքնության, մասնագիտության, կարծիքներիև այլն) ՝ ներառյալ խտրականության ընդհանուր արգելքի սկզբունքը: Որպես ուղենիշ՝ նշված ծածկագրերը մշակելիս հղում անել Քրեական օրենսգրքի նախագծով սահմանված խտրականության հիմքերին: Քրեական օրենսգրքի նախագծով համապարփակ կերպով նախատեսվում են խտրականության նյութական հիմքերը և տեսակները՝ ներառյալ խտրականության ընդհանուր արգելքի սկզբունքը:
- Ծածկագրերը ներդնել Ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի կողմից օգտագործվող թղթային և/կամ էլեկտրոնային ձևաթղթերի մեջ: Այդ նպատակով անհրաժեշտ կլինի էական փոփոխություններ կատարել Կառավարության թիվ 933-Ն որոշման մեջ:
- Ծածկագրերը ներդնել հետաքննության և նախաքննության մարմիններում տվյալներ մշակող մասնագետների կողմից օգտագործվող թղթային և/կամ էլեկտրոնային ձևաթղթերի մեջ: Ծածկագրերն այդ ենթակառուցվածքի մաս դարձնելու համար անհրաժեշտ կլինի էական փոփոխություններ կատարել Կառավարության թիվ 1225-Ն որոշման մեջ:
- Մշակել լրացուցիչ ծածկագրեր Դատական դեպարտամենտի հաշվետվությունների համակարգի համար՝ դրանք ավելացնելով ծածկագրերի արդեն իսկ գոյություն ունեցող համակարգին: Նոր ծածկագրեր ավելացնելու համար անհրաժեշտ կլինի փոփոխել Դատական դեպարտամենտի գործունեությունը կարգավորող իրավական ակտերը:
- Որպես այլընտրանք վերոհիշյալ չորս կետերին՝ լավագույն տարբերակը կլիներ մշակել ատելության հիմքով հանցագործությունների և ատելության խոսքի հանցագործությունների միասնական ծածկագրեր քրեական արդարադատության ողջ համակարգի համար: Հաշվի առնելով, որ Քրեական օրենսգիրքը և Քրեական դատավարության օրենսգիրքն այս տարի կամ հաջորդ տարի փոխարինվելու են նոր օրենսգրքերով, ինչը ենթադրում է նաև ենթակառուցվածքի ծավալուն բարեփոխումներ, առաջարկվում է պահն օգտագործելով նոր ծածկագրերը դարձնել քրեական արդարադատության համակարգի մաս: Դա իրավապահ մարմիններին և քննչական մարմիններին

թույլ կտա ծածկագրեր վերագրել գործերին քրեական վարույթի ամենասկզբից (հանցագործության մասին հաղորդումն ստանալու պահից), որը թույլ կտա դիտարկել գործերի ընթացքը քրեական արդարադատության ողջ համակարգում՝ ներառյալ դատարաններում, պարզելու համար ատելության հիմքով հանցագործությունների և ատելության խոսքի գործերի քննության ընդհանուր միտումները:

- Մշակել ծածկագրերի համապարփակ ուղեցույց, որը որպես հղումային փաստաթուղթ կօգտագործվի Ինֆորմացիոն կենտրոնի, Դատական դեպարտամենտի և քննչական մարմինների տվյալներ մշակող և համապատասխան բազաների մեջ տվյալներ մուտքագրող մասնագետների կողմից: Որպես ուղեցույց՝ օգտագրոծել Ինֆորմացիոն կենտրոնի կողմից արդեն իսկ մշակված տեղեկատուները (օրինակ՝ տե՛ս թիվ 14 տեղեկատուն):
- Մշակել խտրականության, ատելության խոսքի և ատելության հիմքով հանցագործությունների դեմ պայքարի վերապատրաստման դասընթացներ՝ նվիրված այնպիսի կարևորագույն հայեցակարգերի, ինչպիսիք են խտրականության պաշտպանվող հիմքերը, խտրականության տեսակները, ատելության հիմքով հանցագործությունների և ատելության խոսքի միջազգային սահմանումները, խտրական ցուցանիշների հասկացությունը, ատելության հիմքով հանցագործությունների և ատելության խոսքի գործերի քննության առանձնահատկությունները:
- Կարողությունների զարգացմանն ուղղված դասընթացներ կազմակերպել պրակտիկ իրավաբանների, մասնավորապես՝ քննիչների, դատախազների և դատավորների համար՝ նվիրված խտրականության, ատելության հիմքով հանցագործությունների և ատելության խոսքի հիմնական խնդիրներին՝ հատուկ ուշադրություն դարձնելով խտրական ցուցանիշներին և ատելության հիմքով հանցագործությունների և ատելության խոսքի գործերի քննության առանձնահատկություններին:
- Կարողությունների զարգացմանն ուղղված դասընթացներ կազմակերպել Ինֆորմացիոն կենտրոնի, Դատական դեպարտամենտի և քննչական մարմինների տվյալներ մշակող և համապատասխան բազաների մեջ տվյալներ մուտքագրող մասնագետների համար՝ նվիրված խտրականության, ատելության խոսքի և ատելության հիմքով հանցագործությունների դեմ պայքարի հիմնական սկզբունքներին՝ հատուկ ուշադրություն դարձնելով խտրականության պաշտպանվող հիմքերին, ատելության հիմքով հանցագործությունների և ատելության խոսքի՝ ԵԱՀԿ-ի սահմանումներին, ինչպես նաև խտրականության ցուցանիշներին:
- Կարողությունների զարգացմանն ուղղված դասընթացներ մշակել և իրականացնել իրավապաշտպան ՀԿ-ների համար՝ ուղղված ՀԿ-ների աշխատանքում նրանց հանդիպող տվյալները հավաքագրելու և վերլուծելու կարողությունները զարգացնելուն:

Հավելված 1: Օգտագործված աղբյուրները

Ազգային և միջազգային զեկույցներ, կառավարության որոշումներ, ուղենիշներ.

1. Ռասայական խտրականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի («ECRI») զեկույցն Հայաստանի մասին (մշտադիտարկման հինգերորդ շրջան), զեկույցն ընդունվել է 2016 թվականի հունիսի 28-ին):
2. OSCE/ODIHR, Hate crime reporting: http://hatecrime.osce.org/armenia
3. Կառավարության թիվ 1381 որոշում «Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգը հաստատելու մասին», 10-ը հոկտեմբերի, 2019 թ.:
4. Կառավարության թիվ 1225-Ն որոշում «**Մինչդատական վարույթը բնութագրող ցուցանիշների վիճակագրական հաշվետվությունների միասնական ձևերը եվ դրանց լրացման ու ներկայացման կարգերը հաստատելու մասին**», 23-ը հոկտեմբերի, 2008 թ.:
5. Կառավարության թիվ 11-Ն որոշում «ՀՀ վիճակագրության պետական խորհրդին վիճակագրական տեղեկությունների ներկայացման կարգը հաստատելու մասին», 3-ը հոկտեմբերի, 2003 թ.:
6. 2014 թվականին Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեության մասին հաղորդումը: Ամենամյա հաղորդումները տեղադրված են Գլխավոր դատախազության կայքէջի հետևյալ բաժնում.

   http://prosecutor.am/am/messages-to-the-president-and-the-national-assembly/

7. Ընդհանուր իրավասության քրեական դատարանների պրակտիկայի 2014 թվականի տարեկան ամփոփումը, 2014 թ.:
8. ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների վիճակը Հայաստանում, ամենամյա ամփոփում, Հայաստան, 2018 թ., ՓԻՆՔ Արմենիա.

   https://www.pinkarmenia.org/wp-content/uploads/2019/05/2018annualreview_en.pdf

9. 2018 թ. հուլիս-դեկտեմբեր ամիսներին Ատելության խոսքի մշտադիտարկման միջանկյալ զեկույց, Հայաստանի հելսինկյան կոմիտե.

   http://armhels.com/publications/atelutyan-xosqi-mshtaditarkum/

10. Հայաստանում ԼԳԲՏՔ+ անձանց իրավունքների խախտումների մասին ազգային զեկույց, «Նոր սերունդ» իրավապաշտպան ՀԿ, Հայաստան, 2017թ. https://ngngo.net/files/pdf/1/15337385748058.pdf

11. «Կնասպանությունը Հայաստանում. լուռ համաձարակ», «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիա, 2016-2017 թթ. զեկույց.

http://coalitionagainstviolence.org/wp-content/uploads/2019/07/femicide2018en.pdf?x24321

Հավելված 2. Վերաբերելի օրենսդրությունը

	Իրավական ակտի անվանումը (այբբենական կարգով)	**Հոդված**
1.	«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենք	14(1)
2.	«Ազգային ժողովի աշխատակազմում հանրային ծառայության մասին» օրենք	11
3.	Աշխատանքային օրենսգիրք	3(1)(3) 114(4)(4) 180(3)
4.	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենք	4
5.	«Գնումների մասին» օրենք	3(2)(1)
6.	«Գրադարանների և գրադարանային գործի մասին» օրենք	18(1)
7.	«Գովազդի մասին» օրենք	8(b)
8.	Դատական օրենսգիրք	10(2) 141(2)
9.	«Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության մասին» օրենք	9(1)
10.	«Երեխայի իրավունքների մասին» օրենք	4
11.	Ընտանեկան օրենսգիրք	1(5)
12.	Ընտրական օրենսգիրք	3(3)
13.	«Կրթության մասին» օրենք	6(1)
14.	«Քաղաքական կուսակցությունների մասին» օրենք	4(2)
15.	«Համայնքային ծառայության մասին» օրենք	11
16.	«Հասարակական կազմակերպությունների մասին» օրենք	4(1)(2)
17.	«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենք	22(1)(2)
18.	«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենք	2(3)
19.	«Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության մասին» օրենք	14(6)
20.	«Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» օրենք	9
21.	«Ոստիկանության մասին» օրենք	5

22.	«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենք	11(1)
23.	«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենք	7
24.	«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենք	4(1)(7)
25.	Վարչական իրավախախտումների օրենսգիրք	248
26	«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենք	3 (1)(9)
27	«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենք	7(2)(a)
28.	«Փաստաբանության մասին» օրենք	29(3)
29.	«Քաղաքացիության մասին» օրենք	3(2)
30.	Քրեական օրենսգիրք	6
31.	Քրեակատարողական օրենսգիրք	8
32.	«Քրեակատարողական ծառայության մասին» օրենք	14(1)
33.	Քրեական դատավարության օրենսգիրք	8(2)
34.	«Օտարերկրացիների մասին» օրենք	22(1) 32

Հավելված 3. Հաշվառման և հետախուզական քարտերը

Հաշվառման քարտ

Ձև 1

Ազգանունը _____
Անունը _____
Հայրանունը _____
Ծնվել է «___»_____թ.
Ծննդավայրը _____
_____
_____
Հասցեն _____
_____
Աշխատանքի վայրը _____
(պաշտոնը, մասնագիտությունը)
_____
Քաղաքացիությունը _____

Կալանավորվել է «___» _____թ.

Հանցագործության բնույթը _____
_____
Քրեական օրենսգրքի հոդվածը _____
_____
Քարտը կազմվել է _____
(մարմնի անվանումը)
_____
«___» _____թ.
_____
(Քարտը կազմող ծառայողի ազգանունը)

_____
(ում կողմից է կալանավորվել, առանց
_____
կրճատումների)
_____
_____

Գործ NN

Քննչ._____
Արխ._____

մատնադրոշմային _____
բանաձև

Աջ ձեռքի ցուցամատի
մատնադրոշմ

(Չափսը 95 x 140)

Քարտի հակառակ կողմը

Ում կողմից է դատապարտվել _____
_____
Երբ «__» _____թ. _____
(քրեական օրենսգիրք, հոդված)
_____
Ժամկետը _____
(նշել լրիվությամբ՝ հիմնական և լրացուցիչ պատիժները)
_____
Դատավճիռն օրինական ուժի մեջ է մտել «__» _____թ. _____

Դատավճռի փոփոխությունները և դատապարտյալի տեղաշարժի վերաբերյալ նշումներ
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Ձև 2

Հետախուզական քարտ

Ազգանունը _____ անունը _____

Հայրանունը _____ ____ _____թ.

Ծննդավայրը _____

Հասցեն _____

Սեռը _____Ազգությունը _____ Անձնագիրը _____

Փախուստի մեջ է (կորել է) ____ _____ թ.

Հետախուզման պատճառը _____

Հանցագործության տեսակը, քր. օր.-ի հոդ. _____

Խափանման միջոցը _____

Քրեական գործ N _____ Հետախուզական գործ N _____

Հետախուզական գործը կազմվել է « » թ.

(Չափսը 95 x 140)

Քարտի հակառակ կողմը

Լրացվում է ապրուստի միջոցներ վճարելուց խուսափողների վերաբերյալ

_____ դատարանի
(մարզ, քաղաք, գյուղ)
200__ թ. _____ N _____ կատարողական թերթիկով
(ամիսը) (ամսաթիվը)

_____պարտավոր է վճարել ապրուստի միջոց (հայցով փոխհատուցել

վնասը) ի օգուտ

հայցվորի _____
(անուն, ազգանուն, հայրանուն, իրավաբանական անձը)

_____
(անվանումը)

Հասցեն _____

_____

Քարտը լրացրեց _____
(պաշտոն, կոչում, ազգանուն)

_____ Ուստ. բաժնի պետ _____
(կոչում, ազգանուն, ստորագրություն)

____ _____ 200 թ.

Ձև 3

ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՐՏ

Օտարերկրյա պետություններում ՀՀ քաղաքացուն քրեական
պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ

Ազգանունը _____ անունը _____

Հայրանունը _____ ծնված՝ _____ _____19 ___ թ.

_____
(պետություն, մարզ, քաղաք, գյուղ)

Հասցեն _____

Ենթարկվել է քր. պատասխանատվության ____ _____200 թ.

Հանցագործության բնույթը _____

Քր. օր.-ի հոդվածը _____ խափանման միջոցը _____

_____պետության անվանումը _____

Քարտը լրացրեց _____ _____ _____200 թ.
(ԻԿ ծառայողի ազգանունը)

Ինչ փաստաթղթի հիման վրա է լրացվել _____

(Չափսը 95 x 140)

Հավելված 4. Առկա վիճակագրությունը

	Ստուգման բանաձև 1+3=7+8+10, 7=4+5+6, 14=12+13, 17=15+16	ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներ	Հաշվետու ժամանակահատվածի սկզբում նախորդ հաշվետու ժամանակահատվածից փոխանցված գործերի ընդհանուր թիվը	Հաշվետու ժամանակահատվածում ստացված գործերի ընդհանուր թիվը	Հաշվետու ժամանակահատվածում ավարտված գործերի ընդհանուր թիվը					Բողոքարկված դատական ակտերի թիվը՝ ըստ տեսակների			Բեկանված դատական ակտերի թիվը՝ ըստ տեսակների		
					Քննվել է ըստ էության և դատավճիռ կայացվել	Որոշում է կայացվել քրեական գործի մասին	Որոշում է կայացվել անմեղսունակների նկատմամբ	Ընդամենը ավարտվել են գործեր		Այդ թվում՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը	Այդ թվում՝ միջանկյալ դատական ակտերը	Ընդամենը	Այդ թվում՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը	Այդ թվում՝ միջանկյալ դատական ակտերը	Ընդամենը
			1	3	4	5	6	7	10	12	13	14	15	16	17
1.	Ընդամենը կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունները		310	188	116	54	17	187	308	35	17	51	4	0	4
1.1	Սպանությունը	104													
1.2	Հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարված սպանությունը	105													
1.3	Մոր կողմից նորածին երեխայի սպանությունը	106													
1.4	Հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմամբ սպանությունը	107													
1.5	Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ սպանությունը	108													
1.6	Անզգուշությամբ մահ պատճառելը	109													
1.7	Ինքնասպանության հասցնելը	110													
1.8	Ինքնասպանության հակելը	111													
1.9	Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը	112													
1.10	Դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը	113													
1.11	Հոգեկան խիստ հուզմունքի վիճակում առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելը	114													
1.12	Հանցանք կատարած անձին բռնելու համար	115													

	անհրաժեշտ միջոցների սահմանզանցմամբ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելը														
1.13	Առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելը անհրաժեշտ պաշտպանության սահմանանազանցմամբ	116													
1.14	Դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը	117													
1.15	Ծեծը	118													
1.16	Ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը	119													
1.17	Անզգուշությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը	120													
1.18	Անզգուշությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը	121													
1.19	Ապօրինի աբորտ կատարելը	122													
1.20	Մարդու իմունային անբավարարության վիրուսի հարուցիչով վարակելը	123													
1.21	Վեներական հիվանդությամբ կամ այլ սեռավարակներով վարակելը	124													
1.22	Փոխպատվաստման վիրահատություն կատարելու կանոնները խախտելը	125													
1.24	Անձին առանց իր հանձնարարության բժշկական կամ գիտական փորձերի ենթարկելը	127													
1.25	Վտանգի մեջ թողնելը	128													
1.26	Հիվանդին օգնություն ցույց չտալը	129													
1.27	Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը	130													
1.28	**Այլ հանցագործություններ**														
2	**Ընդամենը անձի ազատության, պատվի և արժանապատվության դեմ ուղղված հանցագործությունները**														
2.1	Մարդուն առևանգելը	131													
2.2	Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը	132													
2.2.	Երեխայի կամ հոգեկան	132.													

2	խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգը կամ շահագործումը	2													
2.2.3	Շահագործման վիճակում գտնվող անձի ծառայությունից օգտվելը	132.3													
2.3	Ազատությունից ապօրինի զրկելը	133													
2.4	Հոգեբուժական հիվանդանոցում ապօրինի տեղավորելը կամ պահելը	134													
2.7	Սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը	137													
2.8	Այլ հանցագործություններ														
3	**Ընդամենը սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունները**														
3.1	Բռնաբարությունը	138													
3.2	Սեքսուալ բնույթի բռնի գործողությունները	139													
3.3	Սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը	140													
3.4	Սեռական հարաբերությունը տասնվեց տարին չլրացած անձի հետ կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ	141													
3.5	Անառակաբարո գործողությունները	142													
3.6	Այլ հանցագործություններ														